



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

281(02)

pu-35

3469

280

822-100

1884

3401

2

2010

10024

281021  
35  
պ.

Վաճառվում է Հայոց Ներսիսեան Գրքանոցում:

280  
822-100  
Հ Ա Յ Ո Ց  
341

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐԿ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՍՈՒՐԲ



1005  
20084

Ղ. Ե. ԽԱՐԱԶԵԱՆՑ



ՏՓԻՍ

ՏՊԱՐԱՆ Լ. Գ. ԿՐԱՄԱՐԵՆԿՈՑ

1884

11132

Дозволено Цензурою 20 Декабря 1883 года

Типогр. Л. Г. Крамаренко. Пом. на Мух. ул. въ д. Демурова.



«Չէ՛ք ինչ ահաւոր, որ սէր Հօր է, և ո՛չ  
այն ինչ՝ որ ցաւեցաւսնէ, որ փառսն  
Քրիստոսի է»:

(Յովհաննէս Զ. Կաթողիկոս.)



Հոգին վարժեցրէք Նորա պաշտպանութեան համար, նա սիրուն է, քանի որ դուք արթուն էք, նա կենդանի է, քանի որ ձեր մէջ ուսման և գիտութեան տենչանաց կայծը մարած չէ, ձեր տգիտութիւնը միայն կարող է նորան տգեղացնել և ձեր ծուլութիւնը մահացնել:

Անմեղ երկսեռ մանկտիք, թոյլ տուէք ձեր թոթովախօս շրթունքներին, որ բղխեն մաղթանքներ իբրև մաքուր և պարզ աղբիւր Ներսիսեան Գարանոցի Հիմնադրի Հոգւոյ փրկութեան և յաւիտենականութեան համար, որ յայսկոյս Կովկասեան Հայ սերունդի մէջ անմահացրուց մեր եկեղեցին:

Երանի նոցա, որոնք մարդոց սրտի և Հոգւոյ մէջ են հիմնում սիրոյ և զգուանաց արժանի արձաններ:

Ղ. Ե. Խ.

Այս պատմութիւնը աւանդելիս Ներսիսեան Գարանոցի Գ. Գ. դասատանց աշակերտներին ձեռնարկ եմ ունեցել Մելքիսեդէկ Մուրադեան Արք եպիսկոպոսի Եկեղեցական պատմութեան գիրքը, որից եւ օգուտ եմ քաղել այս դասագիրքը կազմելիս մատչելի առնելու մեր երկսեռ մանուկներին թէ լիզուի եւ թէ գնի կողմից:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ:

34-302

ԳԼ. Ա.

ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿ.

Քրիստոսի ծննդից քիչ առաջ Տիգրան երկրորդի Արտաւազդ որդւոյն վերջին տարիներին կամ Արշամայ թագաւորութեան սկզբից՝ Հայոց Արքունիքը Միջագետք փոխադրուեցաւ, իսկ Աբգարու թագաւորութեան սկզբներն Եդեսեան դարձաւ Հայոց Մայրաքաղաք, այդ ժամանակ Հայերը գլխաւորապէս դէպի հարաւ սկսան դիմել, ազգի նշանաւոր նախարարներն ևս իւրեանց բնակութիւնը Եդեսեայ փոխադրեցին, այս պատճառաւ բոլոր յարաբերութիւններն Ազգի հարաւի հետ էին, վասնորոյ և Քրիստոսի խաչուելուց առաջ Աբգարու թագաւորութեան վերջին տարիներն սկսվում է Քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ տարածուելը Հայոց մէջ Եդեսեայ Մայրաքաղաքումը նոյն իսկ Հայոց Արքունիքում:

ՀԱՅՈՑ ԱՐԻՈՒՆԵԱՅ ԳՐԻՍՏՈՆԵՍԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԸ.

Միջագետքը Հրէաստանի սահմանին մօտ լինելով, Հայոց յարաբերութիւններն ևս դէպի հարաւ ուղղուած լինելով, չէր կարող անտարբեր զտնուել Հրէաստանի մէջ կատարուած անցքերին:

Քրիստոսի սքանչելագործութեանց համբաւը հասան Աբգարին իւր զեսպանների և Անանի սուրհանդակի ձեռօք: Աբգարը հիւանդութեամբ երկար ժամանակը ամենալուրջ և ամենայն բժիշկներից յոյսը կտրած էր, Յիսուսի առանց դեղի օգնութեան բժշկութեանց լուրը լսելով, իսկոյն հաւատաց ՚ի նա և ասաց իւր շուրջը եղողներին, որ այդ միայն Աստուծոյ գործն է. վասնորոյ և մեծամեծ բնծաներով ուղարկեց Անանին պատգամաւորութեամբ առ Յիսուս, և առանձին նամակաւ հրաւիրեց իւր Եզեսեայ քաղաքը, յայտնելով որ Հրէայքը նորա հետ թշնամի լինելով ապահով չէր Երուսաղէմում:

Յիսուսը հարկաւ չէր կարող ընդունել Աբգարի հրաւերը, ուստի խոստացաւ ուղարկել նորան իւր Համբարձումից յետոյ մէկ աշակերտ, որ նորան բժշկէր և քարոզէր Քրիստոնէական ճշմարիտ լոյսը:

Պատմութիւններն և ճառքնոցները լիշուում են, որ այս զեսպանութեան ժամանակ թագաւորի նկարիչը շանք էր անուծ փրկչի կենդանագիրը նկարելու, բայց իզուր ելնելով նորա աշխատութիւնը ինքը Յիսուսը առաւ մաքուր կտաւ և իւր երեսի վերայ դնելով՝ դրոշմեց իւր Աստուածային պատկերը, որ կոչուեցաւ դաստառակ, որ և գրուեցաւ քաղաքի զբանը իբրև պաշտպան Եզեսիայի:

ԱՌՍՔԵՍԼԻՔ ՀԱՅՍՍՏԱՆԻ ԹՄԻԷՈՍ և ԲԱՐՔՈՒՂԻՄԷՈՍ.

Քրիստոսի համբարձումից յետոյ Առաքեալները Հայաստան ուղարկեցին Թադէոս Առաքեալին, որ եկաւ և Եզեսիոյ մէջ սկսաւ իւր քարոզութիւնները և սքանչելիքը: Աբգարը նորա սքանչելեաց համբաւը լսելով՝ կանչեց Արքունիք, և երբ ներս մտաւ Առաքեալը, թագաւորը երկրպագութիւն տուաւ. Թադէոս Առաքեալը արգելեց նորան երկրպագութիւն տալը և բժշկեց նորան բազմամեայ հիւանդութիւնից:

Սոյն ժամանակ Թադէոսի ձեռօք շատ բժշկութիւններ եղան թէ պաշտի և թէ քաղաքի մէջ, որով և Քրիստոնէական եկեղեցին ստացաւ շատ հաւատացեալներ, որոնք թագաւորից սկսած ամենքն ևս մկրտելով յանուն ամենասուրբ Երրորդութեան կազմեցին հայոց մէջ առաջին եկեղեցի Քրիստոսի:

Այնուհետև թագաւորի հրամանաւ վախուեցան Մեհեաններ և կռատուները, և կուռքերը կործանուեցան, և ամեն տեղ հաստատուեցաւ Քրիստոնէական ճշմարիտ հաւատը: Այսպէս ամենայն իրաւամբ միայն Հայկականը եղաւ առաջին Քրիստոնէական եկեղեցի հեթանոսութեան մէջ, ինչպէս և վկայում է Ք. դարու եկեղեցական պատմաբան Եւսեբիոսը, Խորենացին և ուրիշները:

Աբգար թագաւորը նամակներ գրեց շատ զբացի թագաւորներին հրաւիրելով ՚ի Քրիստոնէութիւն, բայց դեռ պատասխան չը ստացած մեռաւ իւր սկսած առաքելագործութիւնը չկարողանալով յառաջ տանել:

Բարդուղիմէոս Առաքեալը արևելեան կողմերը քարոզելուց յետոյ՝ եկաւ Գողթն գաւառը և սկսաւ այնտեղ քա-

րողութիւններ անել, ուր հիմնեց Հոգևոց Վանքը. իւր աշակերտներէից մէկին Եպիսկոպոս ձեռնադրելով և Տեսուչ թողնելով այնտեղ:

ԳԼ. Գ.

ՀԱԼԱԾԱՆՔ ԵԿԵՂԵՅԻՈՅ.

Աբգարին յաջորդեց իւր Անանէ որդին, որոյ առաջին գործն եղաւ հալածել նորահաստատ եկեղեցին Քրիստոսի, Թադէոս Առաքելը որ հաւանութեամբ Աբգար թագաւորի և ժողովրդոց՝ թագաւորի խորարար Ադգէին Եպիսկոպոսէր ձեռնադրել, իսկ ինքը արևմտեան հիւսիսային Հայաստանի կողմերը գնալով քարոզում էր Քրիստոնէութիւնը: Այս Ադգէ Եպիսկոպոսից Անանէն պահանջեց որ իւր համար մի խոյր շինէ, բայց նա հրաժարուեց թագ հիւսել Քրիստոսին չ'երկրպագող գլխի համար, ուստի և նահատակուեցաւ. բայց երկար չ'քաշեց, որ Անանէն առաւ իւր պատուհասը որ մնալով իւր պալատի սեան տակը մեռաւ:

Սանատրուկը Աբգարու քեռորդին թագ կապեց, պաշարեց Եդեսիայ քաղաքը և առաւ խոստանալով քրիստոնէութեան ազատութիւն տալ, բայց երբ քաղաք մտաւ՝ նահատակեց քրիստոնէաներին, և Հայաստանի ամեն կողմը հալածանք բարձրացրեց, մինչև անգամ իւր քրոջ Ոգոհայն և Բարդուղիմէոս Առաքելին ևս նահատակել տուաւ Արտազու մէջ—վերջինին մորթեցերծ առնել տալով, Թադէոս Առաքելին ևս իւր Սանդուխտ դստեր հետ միասին Շաւարշանում նահատակեց. սակայն առաքելական յաջորդներն միշտ գործում էին և հաւատացեալներին քաջալերում: Թադէոս առեքելոյ ձեռնադրուած Եպիսկոպոսներն և գլխաւոր

ԳԼ. Ե.

ՆՍՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ՈՍԿԵԱՆՅ և ՍՈՒՔԻԱՍԵԱՆՅ.

Երուանդ երկրորդը շատ նահատակութիւններ արաւ թէ Շաւարշանում և թէ բոլոր Հայաստանի մէջ մանաւանդ հալածանքը սաստկացրեց Քրիստոնէից դէմ Բաբայ քաղաքը շինելիս, սակայն Աւետարանի ճշմարիտ մշակները առաւել եռանդեամբ սկսեցին գործել:

Ոսկեանք մկրտուեցան Թադէոս Առաքելոյ ձեռամբ Կապադովկիայից վերադառնալիս Հայաստան, որ Սանատրուկի հալածանացը վերջ տան, որոնք և մկրտուելու պատճառաւ գլխատուեցան: Ոսկեանքը Սաթինկայ թագաւորութեան ժամանակը թողեցին իւրեանց մենարանը և սկսեցին քարոզութիւն: Սոցա աշակերտեցան Արքունիքից Ալանաց 18 կրտրիճներ, որոնք մկրտուելով՝ իւրեանց գլխաւորի անուամբ կոչուեցան Սոսիստան:

Թագուհին Սաթինիկ բարկացաւ Ոսկեանց վերայ և 107 թուին իւր որդւոյ ձեռամբ նահատակել տուաւ: Իսկ Սուքիսեանցը Ալանաց թագաւորի դեսպանը երկար ժամանակ ջանաց նոցա համոզելու, որ թողնեն քրիստոնէութիւնը և առաջուայ պէս գնան Ալանաց թագաւորին ծառայելու, բայց որովհետև նոքա չ'ընդունեցին այսպիսի առաջարկութիւնը, ուստի 132 թուին ամենքը գլխատուեցան: Այսպէս հալածանք և քրիստոնէից նահատակութիւնը Հայաստանի մէջ Սանատրուկից սկսած մինչի Տրդատայ օրերը տևեցին, որ նոյնպէս սուրբ Գրիգորին խոր վիրապը ձգելուց յետոյ եր-

կու հալածանաց հրովարտակ հանեց քրիստոնէից գէմ: Վերջապէս Քրիստոնէական ճշմարիտ հաւատը սուրբ Քրիզոստոմի քարոզութեանց ժամանակը բոլորովին արմատ ունեցաւ հայաստանում, որովհետեւ արդէն Ս. զգր զգուած լինելով այս և այն անդգայ առարկաներին երկրպագելուց, և Քրիստոնէից սէրն ու միութիւնը, սուրբ անմեղ և համբերատար կեանքը տեսնելով, պարզաստուել էր ազատ և անվախ կերպիւ գրկելու Ս. Եւտարանական լոյսը, որ իբրև արեգական ճառագայթ Հայաստանի ամեն կողմը տարածուեցաւ Չորրորդ դարու սկզբին:

Ս. Եւտարանական լոյսը, որ իբրև արեգական ճառագայթ Հայաստանի ամեն կողմը տարածուեցաւ Չորրորդ դարու սկզբին:

**ՍՍՀԱՄԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ ԼԱՅՍԱՍԿԱՆԵՍՅՅԱԿԻՐԱՅԻՆ ԱՌԱՔԵՆԱԿԱՆ ԵՎԵՂԵՅԻՆ:**

Քրիստոնէական եկեղեցւոյն ուն սահմանեց Քրիստոսի մկրտութեան խորհուրդը, ուստի ինչպէս Առաքեալները Քրիստոսի պատուէրի համաձայն Հրէաստանում և ամեն տեղ մկրտում էին հաւատացեալներին ջրով, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ անելով, նոյն սահմանը և Հայոց եկեղեցին ընկալաւ Քաղէոս և Բարդուղիմէոս առաքեալներէից:

Սուրբելոց ժամանակ, որ դեռ նոր էր հրատարակուած քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը մկրտութեան ժամանակ Հոգին Սուրբ զգայապէս իջնում էր մկրտելոց վերայ, բայց երբ որ նորա ճշմարտութիւնը ամենին հաւատալի եղաւ, Հոգւոյն Սրբոյ իջումն աներևոյթապէս սկսաւ ներգործել մկրտելոց, տալով նոցա սրտի փոփոխութիւն և ներքին Հոգւոյ Սրբութիւն: Ուստի և առաքելոց յաջորդ-

ները առաքելական սովորութեան համաձայն իւրով օծումն սահմանեցին իբրև անջնջելի կնիք Հոգւոյն Սրբոյ, կնքելով մկրտելոց ճակատը և ուրիշ զգայարանքներ: Սյս սահմանը ունի և Հայաստանեայց եկեղեցին:

2. Հայաստանեայց եկեղեցին սահմանած է նաև մկրտելոց համար մի կնքահայր, որոյ գէրկը դնելով մկրտեալը անմիջապէս աւազանէն վեր առնելով, կը ճանաչի նրան երաշխաւոր մկրտածի հաւատոյն:

Սյս սահմանադրութեան բուն նպատակն է, որ կնքահայրը ինչպէս երաշխաւոր եղաւ առաջի Աստուծոյ մըկրտութեան հաւատոյ մասին, նոյնպէս և հոգւոր պարտաւորութիւն ունի, երբ երեխայն զարգանայ ուսուցանել նրան քրիստոնէական հաւատքը, եթէ նորա իսկական ծնողքը վախճանած լինին:

3. Հայաստանեայց եկեղեցին սահմանած է, որ մի տեղ հաւաքուած աղօթեն հաւատացեալները, և սուրբ պատարագի խորհուրդը, որ Քրիստոս Տէրն մեր սահմանեց իւր սիրոյ չարչարանաց և մահուան յիշատակի համար գոհութեամբ և սրտի մաքրութեամբ կատարեն:

Սյս սրբազան խորհուրդին հաղորդում է միմիայն արժանաւորին, իսկ անարժանին ենթարկում է ապաշխարութեան:

4. Հայաստանեայց եկեղեցին սահմանած է Աստուածային օրինօք միակնութիւնը. խորշելով իսպառ քաղմակնութիւնից և օրինաբար է սրբաբործել այն քահանայական օրհնութեամբ, ընդ նմին և արգելք դրած է մերձաւոր ազգականաց խնամութիւնը:

5. Հայաստանեայց եկեղեցին օրինադրած է պատարագով և փառաբանական հանդիստւոր երգերով իբրև սուրբ և նահատակ Քրիստոսի թաղել այն ննջեցեալները, որ զրդմամբ և խոստովանութեամբ սրբուելով մեղքից կը հագորդին Քրիստոսի մարմնոյ և արեանը, և կատարեալ հաւատք

ունենալով դէպ ՚ի Քրիստոս, յուսով և սիրով կը մեռանին. իսկ անգեղջ և անհազորդ մեռնողներին զրկում է այս օրինադրած կարգից:

6. Հայաստանեայց եկեղեցին սահմանած է մեռելոց տարեկան լիշատակը օրհուրթեամբ կատարել, նոցանից վայելած երախտիքը և բարիքը լիշելու և աղօթիւք փոխարինելու նպատակաւ:

7. Հայաստանեայց եկեղեցին սահմանած է, որ եկեղեցւոյ սրբազնագործ պաշտօնէից ձեռօք հաւատացելոց տուները օրհնուին, ՚ի նշանակ այն Աստուածային օրհնութեան, որ առատապէս կը հեղու Աստուած նոցա վերայ, որոնք Տիրոջ սրատուէրին համաձայն պտղաբեր են լինում եկեղեցւոյ, աղքատաց, որբոց և այլեաց:

8. Հայաստանեայց եկեղեցին իւր հոգևոր հովիւները ինքն է ընտրում, նոյն ձևով, ինչպէս որ առաքելները հաւատացելոց բազմութեան ձեռօք ընտրեցին Յուդայի տեղ Մատաթիային, ու եօթը սարկաւազներին, և շատ երէցներին:

Այս սահմանը առաքելական լինելով ՚ի գործ դրին և մեր առաքելները, Թադէոս և Բարդուղիմէոս Հայաստանում. ինչպէս Եդեսիայում Թազաւորների և նախարարների հաւանութեամբ եպիսկոպոս կարգեց Ադդէին. Կապադովկիայում Թէոփիլոսին, Շաւարշում Ջաքարիային և այլն, որոց շարունակութիւնը մինչև ցարդ տևում է, և նոյն օրինակով հովուաց ընտրութիւնը ՚ի գործ է դրւում:

ԳԼ. Է.

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՍԻՈՐԻՉ

252-256

Մինչև այս երեք դարուս շրջանը Քրիստոնէական հաւատոյ տարածման վերաբերութեամբ պէտք է իմանանք, որ Առաքելական ուղղութիւնն ունէր. Հայաստանի ամեն կողմերը դեռ Առաքելք և ապա նոցա աշակերտներն էին քարոզում, որոնք մեծ հալածանք և նահատակութիւններ կրեցին, բայց երրորդ դարու վերջերը ամեն տեղ քրիստոնէայքը բազմացան, և դարձեալ առաջին քրիստոնէութեան յաղթանակը Հայաստանում կանգնեցաւ:

Խոսքով մեծի մահից յետոյ, երբ Անակ Պահլունուոյ ընտանիքը կոտորուեց, միայն մի մանուկ իւր ստնտու Սոփիայի ձեռօք ապրեցաւ Կեսարիայ տարուելով: Այնտեղ նրստում էին Թադէոս Առաքելոյ յաջորդները, ուր և Քրիստոնէութիւնը ազատ կերպիւ պաշտվում էր առաջին դարից սկսած: Սոփիայ ստնտուն քրիստոնէայ լինելով՝ նորան մըկրտեց անուանելով Գրիգոր:

Նա չափահաս դառնալով 18 ամեայ հասակում ամուսնանում է մի բարեպաշտ քրիստոնէայ Մարիամ աղջկայ հետ, որից ունեցաւ երկու որդի—Արթանէս և Արիստակէս: Գրգորը Դայեակի պատմութիւնից իմանալով իւր հօր Անակայ չարագործութիւնը, որ հասցրեց հայաստանին՝ բնաւին չէր հանգստանում և միշտ մտածում էր հայրենի պարտքը հատուցանելու հայաստանի որդւոց հոգևոր օգնութիւն ընծայելով այս պատճառաւ սիրով և համաձայնութեամբ բաժանուելով իւր ամուսնուց միտքը դրաւ, գնալ Հռովմ Տրդատայ մօտ Փառայելու, իսկ նորա ամուսինը Արիստակէսին հետը առնելով մտաւ վանքը:

Գրիգորը իմանալով, որ Արտաւազդ Մանգակունւոյ ձեռամբ Սասանեան Արտաշէր Պարսից Թագաւորի սրից աղատելով Տրդատին և տանելով Հռովմ Լիկիանոս դքսին է յանձնել զինուորական արհեստի մէջ վարժեցնելու, զնաց Միջագետք նորան ծառայելու մտօք, որ և սիրով ընդունեց նորան առանց իմանալու նորա ով լինելը։ Իսկ երբ Տրդատը Գոթաց Թագաւորին յաղթելու համար ստացաւ Թագաւորական թագ Հռովմայեցւոց Թագաւորից՝ և վերադարձաւ Հայաստան 286 թուին Հռովմայեցւոց զօրքերով՝ նորա հետն էր և Գրիգորը, ուր կամենալով Տրդատ նորան իբրև հաւատարիմ ծառայի վարձատրել հրամայեց, որ Երզնկայի մէջ Անահտայ՝ Հայաստանի պաշտպան դիցուհւոյն ծաղկէ պսակ նուիրել, սակայն Գրիգորը յանձն չառաւ յայտնելով իւր Քրիստոնէութիւնը։

Տրդատը բարկանալով՝ մատնեց նրան չարաչար տանջանաց, սակայն նա մնաց անդդուելի։ Եւ երբ Տաճատ նախարարից հասկացաւ, որ նա Անակայ իւր հօր Խոսրովի սպանողի որդին է, հրամայեց Արտաշատու մահապարտների գուբը ձգել, ուր և մնաց 15 տարի։

ԳԼ Ը.

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՀՈՒՓՄԻՄԵԱՆՅ Ե ԳԱՅԻԱՆԵԱՆՅ

ԿՈՒՍԱՆԱՅ 301 ԹՈՒԻՒՆ:

Սուրբ Գրիգորի վերապի մէջ եղած վերջին տարին Հռովմից Գիովղէտիանոս Կայսեր հալածանքից փախչելով Գալիանէի և Հռիփսիմէի առաջնորդութեամբ կուսանաց գունդը գալիս են Հայաստան և բնակվում են Արքայանիստ Վաղարշապատ քաղաքի մէկ հնձանումը։

Հռովմայ կայսերից Տրդատը սոցա մասին տեղեկութիւն ստանալով, որոնել է տալի Հռիփսիմէին և գտնելով, զարդարուած բերում են Տրդատայ մօտ, որին կամենում էր առնել կնուլթեան, բայց նա յանձն չ'առնելով իւր կուսական մաքրութիւնը արատաւորել. և առաւել ևս նոյն դիտաւորութեան վրայ հաստատուելով Թագաւորական պալատից փախչում է, որին հասնելով գահիճները մի բլրի վերայ անողորմ կերպիւ ՅՅ ընկերուհեաց հետ միասին նահատակում են։

Թագաւորը հասկանալով Հռիփսիմէի նահատակութիւնը շատ է նեղանում, և իմանալով, որ մեծ արգելքը Գալիանէն է եղած. ուստի հրամայում է կտրել նորա լեզուն և այնպէս իւր երեք ընկերուհեաց հետ նահատակել, որոց թիւը եղաւ ՅԴ. իսկ մնացեալները ցրուեցան զանազան երկիրներ։

Տրդատի տխրութիւնը, որ Հռիփսիմէի մահուան վերայ ունեցաւ, չէր փարատուում, որոյ մասին միշտ մտատանջ լինելով, երբ որ վեց օրից լետոյ գնում է որսի իւր իշխանների հետ խելագարվում է ճանապարհին։

Այս միջոցին նորա քույրը Խոսրովագուլտը 5 անգամ տեսիլք է տեսնում, և հրաման է ստանում Արտաշատաւ խոր վերապի մէջ ընկած Գրիգորը հանեն, որ միայն կարող է Թագաւորին և նորա իշխաններին բժշկել։ Այս տեսիլքը որքան որ անհաւատալի է թւում շատերին, բայց վերջապէս Օտայ իշխանը գնում է և սուրբ Գրիգորին կենդանի գտնելով՝ շատ զարմանում է, որին հանելով վիրապից լողացնում է և մաքուր հանդերձ հագցնելով՝ տանում է Վաղարշապատ։ Թագաւորը և ուրիշ շատ հիւանդներ գալիս են և ընկնում են սուրբ Գրիգորի ոտքը, որոց համար ծունկի գալով սուրբ Գրիգորը, աղօթում է և նոքա զգաստանում են, որոց և յայտնում է, որ ինքն էլ իրանց պէս մարդ լինելով, չէ հարկաւոր իրեն երկրպագութիւն սալ,

այլ միայն ճշմարիտ Աստուծոյն, որ երկինք ու երկիրն է ստեղծել և նրան ճանաչեն Փրկիչ, որովհետև նա է միայն փրկութիւն տուողը:

Սուրբ Գրիգորը ժողովել է տալիս սուրբ կուսանաց նշխարները և իւրեանց հանդերձների մէջ ամփոփելով, ապա հնձանի մէջ նստում է 66 օր և քարոզում է նոցա, Հօր Աստուծոյ և նորա արարչագործութեան մասին, Որդւոյն Աստուծոյ և նորա մարդեղութեան մասին, Հոգւոյն սրբոյ շնորհաց և քրիստոնէական եկեղեցւոյ մասին, և ապա շինել է տալիս երեք վկայարաններ—Հռոփսիմէի, Գայիանէի և Հնձանի մէջ նահատակուած կուսանաց համար և այնտեղ հանգստացնում է սրբոց նշխարները: Այս վկայարանաց շինութեան մէջ Տրդատ ինքը գործակից է լինում երեք մեծ քարեր՝ բերելով Մասիս սարէն, որը իբրև յաղթանակ կուսանաց կանգնացնում է նոցա գերեզմանների վերայ, պատմութիւն ասում է որ նոցա գերեզման փորողը ինքը թագաւորն էր. և հողը դուրս թափողը՝ թագուհին Աշխէն և Խոսրովագուխտը: Սրբոց կուսանաց մարմինները այսպէս ամփոփելից լետոյ. սուրբ Գրիգորը տեսիք է տեսնում, որ Աստուած որդին Յիսուս ահեղ տեսլեամբ ոսկէ ուռն ձեռքին իջնում է Վաղարշապատ քաղաքի մէջ մօտ արքունի պալատին, բաղխելով երկիրը թնդիւն է հանում, ուր և լուսաձև յօրինամամբ ցոյց է տալի քրիստոնէայ հայաստանի մայր եկեղեցւոյ տեղը, ուր առաւօտեան պատմելով հաւատացեալ արքային խաչ է կանգնեցնում այն տեղը սուրբ Գրիգորը և որմով պատել է տալիս: Որ ապա կառուցանել է տալիս մի հրաշակերտ տաճար նոյն տեղում, և անուանում է Էջմիածին, որ է այժմեան մայր Աթոռն Հայաստանեայց:

Այնուհետև Տրդատը ամեն տեղ կործանում է բազիններ իւրեանց կռքերովը և հրաւիրում է ՚ի քրիստոնէութիւն ժողովելով շատ դրամներ մեհեաներից, որից մի

մասը աղքատաց բաժանելով, իսկ միւսով բացեց դպրոցներ քրմաց որդիքը քրիստոնէական կրօնքի մէջ կրթելու համար:

ԳԼ Թ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ Դ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՅ և ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ.

Սրբոյն Գրիգորի քարոզութեամբ Հայաստանումը Գրիստոնէութիւնը տարածելուց լետոյ Տրդատ թագաւորի մօտ ժողովում են նախարարներ, իշխաններ և հաւատացեալների բազմութիւնը և համակամ խորհրդով ընտրում են բոլոր Հայոց աշխարհի Հայրապետ սուրբ Գրիգորին: Նա թէ և դժուարանում էր այդ ծանր պաշտօնը յանձն առնելու, բայց ընդունելով երկնային հրամանը հրեշտակի ձեռքով յանձն է առնում, ուստի և Տրդատ թագաւորը շատ իշխաններով և զօրաց բազմութեամբ և թագաւորական հրովարտակաւ ուղարկում է սուրբ Գրիգորին փոքր Հայաստանի Գամրաց Կեսարեա քաղաքը, Ղևոնդիոս պատրիարքի մօտ որ էր Թադէոս Առաքելոյ ձեռնադրուած Թէոփիլոս աշակերտի յաջորդներէն որպէս զի ձեռնադրէ սուրբ Գրիգորին Հայրապետ Հայոց բոլոր աշխարհի 302 թուին:

Գրիգոր Լուսաւորիչը Կեսարիայից գնում է Սեբաստիայ իւրեան համար իմաստուն գործակիցներ վերցնելու, և ապա դառնում է Տարօն իւր հետ ունենալով Ղևոնդիոս պատրիարքէն ընդունած սուրբ Յովհաննէս Կարապետի և Աթանազիոս Եպիսկոպոսի նշխարները:

Այստեղ Արձան և Դեմետրէ քրապետները մեծ աղմուկ են բարձրացնում նորընտիր Հայրապետի դէմ և երկու անգամ արիւնահեղ պատերազմ տալուց լետոյ, հեթանոսու-

Թիւնը յաղթուում է, ապա Անահիտայ տեղ, Աշտիշատի մէջ շինվում է եկեղեցի, ուր և ամփոփվում է Կեսարիայից բերած սրբոց նշխարները: Այնտեղ մկրտվում են Հայրապետի ուղի- կից իշխաններն ու զօրքերը 100 հազարի չափ թուով:

Այնտեղի հաւատացեալների վերայ առաջնորդ է կար- գում Ձենոբ Եպիսկոպոսին, ու Անտոն և Կրօնիդէս կրօնա- ւորներին, իսկ ինքը դառնում է Արարատեան աշխարհ:

Տրդատը լուր առնելով Հայրապետի վերադարձի մա- սին, գնում է ընդ առաջ Արքայական գերդաստունով և զօ- րաց մեծ բազմութեամբ սպասում է Բագրևանդ Գաւառի Բագուան քաղաքումը:

Տրդատը մեծ պատուով ընդունում է սուրբ Գրիգորին, երբ հասնում է նոյն քաղաքը, մի ամսուայ չափ քարոզում է նորադարձ հաւատացեալներին, և մկրտում է թագաւո- րին, Աշխէն Տիկնոջը և Խոսրովադիտին և բոլոր բազմու- թիւն մինչի 4,000,000 հոգի և մատուցանելով սուրբ Պա- տարագի խորհուրդը հաղորդում է ամենին:

Այստեղից մեծ պատուով սուրբ Հայրապետին բերում են Վաղարշապատ քաղաքը, ուր շինում է Էջմիածնայ սուրբ տաճարը, և ապա սկսում է Տրդատայ հետ միասին շրջել ամենայն կողմերը Հայաստանի քարոզել ու մկրտել:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Քրիստոնէական հաւատոյ հաստատութեան համար բաց է անում դպրոցներ, թէ թա- գաւորաց համար և թէ հասարակ դասակարգի և մանա- ւանդ քրմաց որդւոց համար, Յոյն և Ասորի գրքերով ծա- ւալելով ուսումն քրիստոնէական կրօնի:

Սոցանից սուրբ Գրիգորը ունեցաւ երևելի Եպիսկոպոս- ներ թուով մինչի 400, շատ քահանայք և սարկաւագներ, որոց և նշանակեց զանազան կողմերի վերայ հոգևոր Տե- սուչներ:

Եւ երբ սուրբ Գրիգորը ամեն տեղ կարգի դրաւ և ա- մեն տեղ նշանակեց արթուն հովիւներ, այնուհետև ինքը

առանձնացաւ Գարանաղեաց Սեպուհ լեառը ճգնելու, որտե- ղից երբեմնապէս գալիս էր միայն այցելութիւն անելու իւր հօտին:

ԳԼ. Ժ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՆԻԿԻՈՅ ԺՈՂՈՎ. ՄԱՀ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՏՐԳԱՏԱՅ:

Տրդատ թագաւորը կամենում էր, որ սուրբ Գրիգորի մենաւորութեան ժամանակը իւր ժողովուրդը հոգևոր պի- տույքների վերաբերութեամբ կարօտ չը մնայ, և մանաւանդ նորա լիշատակը առաւել յաւերժացնելու Կեսարիայից իւր նախարարների ձեռքով բերել տուաւ նորա երկու որդւոցը Վրթանէսին և Արիստակէսին. որոց հաւատացեալները ա- ռաջարկում են սուրբ Գրիգորին և նա Արիստակէսին Եպիս- կոպոս ձեռնադրելով՝ կարգում է իւր տեղապահ:

Այս ժամանակին էր, որ Մեծն Կոստանդիանոսը ընդունեց Քրիստոնէութիւնը, և այսպիսի համբաւի մասին Հայաստա- նեայց եկեղեցին ուրախ էր և միխթարվում էր, որ Քրիս- տոնէութիւնը և այլ տէրութեանց մէջ արմատ ձգելով՝ հե- թանոսութեան խաւարը անդառնալի փախչում է, բայց քանի որ Հայաստանեայց եկեղեցին Քրիստոսի անպատմելի մարդասիրութեան վերայ զմայլնով շխորը արմատացնում է նորա ճշմարիտ հաւատը իւր զաւակաց մէջ, սակայն Հռով- մումը ընդհակառակն Քրիստոսի Աստուածութեան դէմ ա- ղանդաւորներ են յառաջ գալի, որոյ պատճառաւ և ՅՁԾ թուին Նիկիոյ քաղաքումը տիեզերական ժողովք է կազմ- վում 318 հայրապետներից, ուր ներկայ է լինում և սուրբ Արիստակէսը:

Այստեղ Բիւթանացոց Նիկիա—քաղաքումը հերքեցին Արիստի չար աղանդը Բրիստոսի Աստուածութեան գէմ և խմբազրուեցաւ Հասարակ հանգանակը և սահմանուեցաւ մի քանի կանոններ, որը բերաւ Հայաստան սուրբ Արիստակէսը և ներկայացնելով սուրբ Գրիգորին—նա յայտնեց պարզ և համառօտ Դաւանանքը Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ, այս խօսքերով. «Իսկ թէ փաստարկեցուց, որ յաստի քան զյաւիտեանս. երջրապատեալով սրբոյ երրորդութեան և թոյ Աստուածութեան Հօր, և Որդոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և մշտ և յաւիտեանս յաւիտեանց առէն»:

Սուրբ Գրիգորը մենաւորութեան մէջն է մեռնում, նորան հովիւները գտնելով թաղում են, և մի քանի ժամանակից յետոյ Դաւանիկ ճգնաւորին յայտնվում է, որ բերում են Թորդան և այնտեղից Վաղարշապատ:

332 թուականին սուրբ Արիստակէս Հայրապետ դառնալով իւր հօր պէս սկսում է եկեղեցին բարեկարգել, նա խբատում է իշխաններին, որ լինեն բարեպաշտ և ճշմարիտ, յանդիմանում է նոցա վատ արարքները, որև չորորդ Հայոց վերակացու Արքեղայոս իշխանը չը տանելով՝ Սպանում է սրով (1) Ծոփաց գաւառումը և ինքը փախչում է Կիլիկիացոց ճաւրոս լեռները, իսկ նորա մարմինը եկեղեցաց գաւառը բերելով թաղում են թիւն աւանում:

339 թուականին յաջորգում է նորա մեծ եղբայր սուրբ Վրթանէսը. նա Երուսաղէմայ Մակարիոս Պատրիարքից կանոնական թղթեր բերել տալով և Հայոց եկեղեցւոյ սգւոյն յարմարացնելով՝ ուղարկում է բոլոր եպիսկոպոսներին, որ ըստ այնմ հոգ տանեն իւրեանց յանձնած հօտին:

(1) Հայոց աշխարհի հեւսիսային կողմն, ուր է բարձր Հայք, այս սեղ է Ծոփաց գաւառը, և Տեգրիս գետի վերայ Անգղ գեղաքաղաքը, այժմ Տիարբեքեր:

Սուրբ Վրթանէսի Կաթողիկոսութեան առաջին տարին Աղուանք դիմում են Տրդատին և իւրեանց երկրի համար կաթողիկոս են խնդրում, ուստի և սուրբ Վրթանէսը իւր երէց որդին մանուկ հասակի մէջ սուրբ Գրիգորիսին Արքեպիսկոպոս ձեռնադրելով՝ ուղարկում է (1) Աղուանք, որից և սկսվում է Աղուանից և Վրաց աշխարհների Կաթողիկոսութիւնը, որովհետև Վրացիք Նունէ սուրբ կուսի քարոզութեամբ (որ Հռիփսիմեանց խմբիցն փախչելով՝ հասել էր Մցիխթա Մայրաքաղաքը) ընդունել էր Միհրան իշխանի հետ մէկ տեղ բոլոր ժողովուրդը Բրիստոնէութիւն, և սուրբ Գրիգորի ուղարկած հովիւների ձեռքով Մկրտութեան սուրբ խորհուրդը:

Սուրբ Գրիգորիսը կշտամբելով Աղուանից իշխանները, որոնք չը կարողանալով տանել նորա յանդիմանութիւններ, կապում են ձիու ագիից և Վասնեան դաշտումը նահատակում են, որոյ մարմինը նորա սարկաւազները տանելով Սիւնեաց գաւառը՝ թաղում են Ամարաս աւանումը 342 թուին:

Սուրբ Վրթանէսը մեծ տառապանքներ է կրում, մանաւանդ Տրդատայ մահից յետոյ, որովհետև Պարսիկները հարստահարութիւններն են սկսում, որից Ազգը ազատելու համար Կոստանդ Կայսեր թուղթ է գրում և օգնութիւն ստանում, և ապա ինքը անձամբ գնում է Կայսեր ներկայանում և Տիրանին թագաւորացնում է: Վերջը երանելի Հայրապետը չը տանելով իւր Որդւոյ նահատակութեան կսկիծը՝ մեռնում է, որին յաջորգում է իւր փոքր որդի Յունիկը 355 թուին:

Ուրացոյ Յուլիանոսը ուղարկում է Տիրանին իւր պատկերը հրամայելով, որ Ծոփաց աշխարհի Արքունական եկեղեցւումը դնէ սրբոց պատկերները իւր ժողովուրդին:

(1) Կասպից ծովի Կովկասեան լեռներին յարկաւ գտնուող Աղուանի մէջ տեղը, այժմեան Բաղուանի գիւղը:



կը յափշտակելով ձեռքիցը ոտնակոխ է անում, ասելով որ սա դիւակահան պատկեր է և արժանի չէ եկեղեցումը պահելու:

Տիրանի հրամանով երանելի հայրապետը նահատակվում է, յայսպիսի անգթութեան համար ծերունի եպիսկոպոս Գանիէլ Ասորին, որ սուրբ Գրիգորից քահանայ էր ձեռնադրուած՝ յանդիմանում է Տիրանին, որոյ համար և նորան խեղդամահ է առնել տալիս: Բայց և այնպէս թագաւորն ևս չէ մնում անպատիժ, նա կանչվում է Պարսից դուռը և Հռովմայեցւոց հետ մտերմութիւն ունենալու պատճառաւ՝ հանվում է նորա աչքերը և բանտարկվում (1) Կուաշ աւանում 364 թուին:

Յուսիկի տեղ նախարարաց հաւանութեամբ ընտրվում է Փառներսէհը, որ չորս տարի Կաթողիկոսութիւն անելով վախճանվում է և (2) Տարոնոյ մէջն է թաղվում:

ԳԼ. ԺԱ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԵԾՆ ՆԵՐՍԻՍԻ.

(368 թուին:)

Փառներսէհի մահից յետոյ նախարարները ժողովրդեան բազմութեամբ ժողովում են Հայոց Արշակ Բ. թագաւորի մօտ և Կաթողիկոս են ընտրում մեծն Ներսէսին, որ Յուսիկի թուռն էր:

Սա զարգացած էր Կեսարիայում և զինուորական կարգի մէջ մտնելով Հայոց Արքունիքումն էր ծառայում որպէս զինակիր և սենեկապետ թագաւորի: Թէպէտ մեծն Ներսէս



աշխատում էր հեռանալ Հայրապետական վսեմ պաշտօնից, բայց ժողովի միաձայն աղաղակը պարտաւորացնում էր լսելու, և թագաւորի հրովարտակաւ և նախարարների և շատ զօրաց ուղեկցութեամբ գնում է Կեսարիայ և ձեռնադրվում է Հայրապետ բոլոր Հայոց:

Մեծն Ներսէսը դառնալով Տարօն ժողովք է գումարում Աշտիշատում Եպիսկոպոսներից և բազմաթիւ աշխարհականներից, թէ եկեղեցական բարեկարգութեանց և թէ ժողովրդականաց վարուց և բարուց վերաբերութեամբ: Այնուհետև շինում է աղքատանոցներ և հիւանդանոցներ ամենայն դաւառներում և ինքը անձամբ խնամք է տանում նոցա համար առանձին հասոյթներ յատկացնելով և այլ և այլ կարևոր պիտոյքներ հիւանդների և աղքատների պատուարութեանց համար և նոցա վերայ վերակացու է կարգում իւր խոգ սարկաւազին:

Մեծն Ներսէսը գիւղերի մէջ շինում է վանքեր կամ իջևաններ օտարականաց, ճանապարհորդների և այլ հիւրերի համար որպէս պատսպարան, և շատ որբոց, ծերոց և կարօտելոց համար որպէս պաշտպանութեան տեղեր: Նոյնպէս շինում է զանազան տեղերում ուսումնարաններ Յոյն և Ասորի դպրութեանց մէջ վարժեցնելու Հայ մանուկներին, որոց վերայ տեսուչ է նշանակում Շաշիտայ, Եպիփան, Եփրեմ և Գինգ:

Մեծն Ներսէսը սահմանում է կանոններ Հայ ժողովրդից և մանաւանդ ագահ նախարարների միջից հեթանոսական սովորութիւնները վերջացնելու, մանաւանդ մերձաւոր ազգականների հետ խնամութիւնը:

Մեծն Ներսէսին սեղանակեց են լինում ոչ միայն նախարարներ և կուսակալներ, այլ և աղքատներ, օտարականներ և շատ տեսակ հիւանդութիւն ունեցող անձինք, որոց վերքերը շատ անգամ ինքն էր լուանում և դեղ դնում, և շատ անգամ մխիթարվում էին աղքատները՝ տեսնելով իւ-

(1) Այժմ Կօշ Արագածի հարաւային ստորոտում:

(2) Մշու դաշտը:

բեանց Հայրապետին իւրեանց անշուք խրճիթներում գիշերներ անցնելիս: Ահա, այսպէս մեծն Ներսէսը Հայր էր Հայրենեաց մէջ և օտարների առաջ պաշտպան Հայրենեաց:

Երբ իմանում է, որ Վաղենտինոս կայսրը բարկացած մեր Արշակ թագաւորի վերայ՝ մեծ զօրքով ուղարկում է Թէոդոսին Հայաստանը աւերելու, իսկոյն Արշակայ աղաչանաց թղթով Մեծն Ներսէսը գնում է զօրավարի առաջ նորա զայրոյթը գիշուցանելով՝ ճանապարհորդութիւն է անում դէպի Բիւզանդիոն և Վաղենտինոս Կայսերը ներկայանալով՝ ազատում է բոլոր Հայ պատանդներին ինչպէս և Գնելին, Արշակայ եղբօր որդուն, և Կայսերական տոհմից Ոլիմպիադայ կոյս աղջիկը Արշակ թագաւորին կին է բերում Հայաստան դառնալիս:

Մեծն Ներսէսը տեսնելով՝ որ Շապուհը Պարսկաստանից, Վաղէսը Յունաստանից, Արշակայ և նախարարների միջին պատերազմը և խռովութիւնքը՝ Հայաստանին մեծ և անկանգնելի կորուստ են սպառնում. Խաղ սարկաւազին

(1) Բագրևանդայ և Արշարունեաց (2) եպիսկոպոս ձեռնադրելով՝ գնում է Բիւզանդիոն օգնութիւն խնդրելու Կայսերից, բայց Վաղէսը ընդ հակառակն նորան մի անմարդաբնակ կղզի է աքսորում, ուր խոտաբուստ կեանք է անցուցանում:

Վաղէսի մահից յետոյ Ներսէսը աքսորանքից յետ է կանչվում Մեծն Թէոդոսի հրամանաւ և 381 թուին ներկայ է լինում Կոստանդնուպոլսոյ Տիեզերական ժողովքին, ուր 150 Հայրապետք էին ժողոված և ապա յետ է դառնում Հայաստան:

(1) Այժմ Ալաշկերտ, ուր է և նպատ սարը բազա նշանակում է Աստուած, հին Հայոց բառ է, իսկ Բագրևանդ—Աստուածների տեղ:

(2) Երասխեան ձորն է Ախուրեան գետի մօտ, որ Արշապի կամսարականը անուանեց Արշարունիք:

Հայոց աշխարհը մեծ կոտորածի մէջ է տեսնում Շապուհի անգլթուլթեամբ և մի քանի նախարարների փառասիրութեամբ:

Մանաւանդ ուրացեալ Մեհրուժան Արծրունույ անգլթուլթիւնը, որ արգելում է ամենայն տեղ սուրբ գրքի ընթերցանութիւնը, և ինչ տեղ նա պարսից զօրքով առնում է, բնտերի պատերից նախարարների կանայք և որդիքը անարգապէս կախում է և մնացեալ նախարարները փոխանակ իւրեանց թագաւորի հետ միանալու այսպիսի անգլթուլթեանց տուաջն առնելու, նոյն իսկ անգլթուլթ Շապուհի ձեռքն են մատնում իւրեանց թագաւորին, որ խուժաստանի Անուշ բերդումն է վերջը անձնասպան է լինում:

Այս ամենը դարձեալ Մեծն Ներսէսին չը վհատեցրուց՝ նա վերստին գնաց Բիւզանդիոն, Մեծ Թէոդոսի ձեռքով Արշակայ որդի Պապին Հայոց վերայ թագաւորացրեց, և ապա Տերենտինոս զօրավարի հետ մի քանի լեգէոններով մըրսնում է Հայաստան:

Շապուհի դէմ պատերազմն են տալիս. ինքը Պապայ հետ միասին բարձրանում է Նպատ սարը և աղօթում է առ Աստուած, այն ժամանակ Պարսիկները յալթվում են— Սմբատ ասպետը Մեհրուժանին կալանաւորելով՝ եռացեալ շամփրով է հատուցանում իւր չարեաց փոխարէնը, այսպէսով փոքր ինչ Հայոց աշխարհը վայելում է հանգստութիւն:

Բայց որովհետև Պապը նախարարների հետ սիրով չէր վարվում, այս պատճառաւ Մեծն Ներսէսը նորան նախատում էր և այս կշտամբանքը թագաւորը չը տանելով՝ Հայրապետին գաղտնի կերպիւ թիւնաւորում է, որին թաղում են թիլն աւանում:

384 թուին ընտրվում է Շահակ Մանազկերտացին, որ ձեռնադրվում է Հայաստանում, որովհետև Մեծն Ներսէսը

ժողովքով էր կարգադրել, Շահակին յաջորդում է Զաւէն և Զաւէնին Ասպուրակէսը:

Որովհետև Պապ թագաւորը չը կամեցաւ հպատակել Մեծն Թէոդոսին, այս պատճառաւ Տերենտիանոսը մեծ զօրքով եկաւ և նորան յաղթելով տարաւ Կոստանդնուպօլիս, ուր և գլխատուեցաւ:

Այնուհետև Հայոց աշխարհը բաժանուեցաւ Յունաց և Պարսից մէջ և թագաւորում էին Պապայ երկու որդիքը— Արշակը և Վաղարշակը, մէկը Յունական և միւսը պարսկական բաժնում:

ԳԼ. ԺԲ.

ՍՈՒՐԲ ՍԱՀՍԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ.

Սուրբ Սահակը մեծն Ներսիսի որդին էր, որ վարժուած էր Բիւզանդիոնում Հելլենական դպրութեամբ, իսկ Մեսրոպն էր Մեծն Ներսիսի աշակերտ և հայրապետանոցում զրազրի պաշտօն էր վարում: Մեծն Ներսիսի մահից յետոյ Արշակ Գ. թագաւորի ժամանակ արքունեաց մէջ ատենադպիր էր և զինակիր թագաւորի. Մեսրոպը Տարօնոյ Հացեկաց գիւղիցն էր մի հասարակ բարեսլաշտ Վարդան անունով մարդոյ որդին, Մեսրոպը զիտէր քաջ Յունաց և Պարսից լեզուներ:

Խոսրով Գը Ասպուրակէսի մահից յետոյ ազգի հաւանութեամբ ընտրում է Կաթողիկոս սուրբ Սահակին 390 թուին: Մի քանի քսու նախարարները ամբաստանում են Պարսից Շապուհ թագաւորին, որ Սահակին Խոսրովը ինքնագլուխ առանց Պարսից դրան իմաց տալու Կաթողիկոս է ընտրել: Շապուհը կանչում է Տիգրան Խոսրով թագաւորին և նորընտիր Հայրապետին: Բայց Խոսրովը յոյս դնելով Յու-

նաց և իւր անհաշտ նախարարների վերայ արհամարանօք է պատասխանում. Շապուհը զայրանալով իւր Արտաշիր որդուն մեծ զօրքով ուղարկում է Հայաստան: Խոսրովը շուարվում է և ակամայ մատնվում է Արտաշրի ձեռքը. նոյնպէս սուրբ Սահակին զրկում է Կաթողիկոսական պատուից, և Խոսրովի տեղ 401 թուին թագաւորացնելով նսրա եղբօր խոհեմ Վռամշապուհին դառնում է Տիգրան, Խոսրովի հետ գերի առնելով Գաղաւոն Կամսարականին Անյուշ բերդումը բանտարկում է նոցա:

Շապուհը մեռնում է և նորան յաջորդում է նորա Արտաշիր որդին, որոյ ձեռօք կրկին սուրբ Սահակը Կաթողիկոսական պաշտօնի է բարձրանում, որ և գնալով Արտաշրի մօտ Ամատունեաց և Կամսարականաց նախարարութեանց պատիւը վերականգնում է, և իւր Սահականոյշ զստեր ամուսին Համագասպ Մամիկոնեանին նախարարութեան Ծրորք աստիճանի բարձրացնելով Արտաշրի հաշտարական պայմաններով դառնում է Հայաստան:

ԳԼ. ԺԳ.

ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ.

Ուսումնասէր Վռամշապուհ Հայոց թագաւորը խոհեմ կերպիւ վարվելով երկու դրացի թագաւորութեանց հետ Հայոց Ազգը բոլորովին անմահ վիճակի մէջ դրաւ իւր հետ ունենալով աջակից արթուն հովիւներ սուրբ Սահակին և Մեսրոպին:

Սուրբ Մեսրոպը 7 տարի Արքունեաց մէջ ծառայելուց յետոյ կրօնաւորի կարգ առնելով՝ անց է կենում Գողթան և Սիւնեաց գաւառները Աստուածային ուսման մէջ կրթելու այն տեղի վայրենի և անկիրթ ժողովուրդը և միանգամայն կուսակաշտական սովորութիւնից հեռացնելու:

Սուրբ Մեսրոպը շատ է վշտանում, երբ տեսնում է որ սուրբ գիրքը մեր եկեղեցեաց մէջ Յոյն և Ասորի գրերով են կարգացվում, որ ժողովրդեան համար շատ ծանր և դժուար հասկանելի էր լինում, իսկոյն ծագում է մտքումը թէ Հայոց ազգի յառաջադիմութեան և անմահութեան համար անպատճառ հարկաւոր է հետամուտ լինել Հայ գրերի գիւտին:

Այս ազնիւ մտքով դառնում է սուրբ Սահակայ մօտ, որոյ մէջ նոյն իղձը տեսնելով՝ խնդրում է Հայրապետին ժողով առնելու, որ այս գործը ՚ի կատար հանուի: Ժողովին ներկայ էր և Վռամշապուհ թագաւորը, որ արգէն պարզ տեսնում էր Հայոց անկանգնելի կործանումը և իւր խոհեմութեամբ աշխատում էր արթուն հովուապետի հետ միասին եկեղեցիից օտար գրերը հալածելու և Հայկականը մտցնելու:

Սուրբ Մեսրոպի առաջ բաց էր ասպարէզը, երբ թագաւորն ու Կաթողիկոսը ձեռք ձեռքի տուած Հայոց գրերի մասին հետամուտ էին, որովհետև ժողովքի մէջ թագաւորը պարզ բացատրեց, որ ինքը Հաբէլ անուանով մէկ քահանայից լսած է, որ Դանիէլ Ասորի եպիսկոպոսի մօտ կան Հայերէն նշանագրեր: Ժողովի խնդրանք թագաւորը Վահրիճ անուանով մէկ իշխան Հաբէլ քահանայի հետ ուղարկում է Միջագետք Դանիէլ եպիսկոպոսի մօտ:

Նոքա գնալով և սովորելով հնչիւնները 22 նշանագրերի դառնում են Հայաստան, այս գրերը հին Բաբելական և Փիւնիկական նշանագրերից էին առնուած, այնուհետև թագաւորը և սուրբ Հայրերը ստանալով այս գրերը, իսկոյն բանում են դպրոցներ, երկու տարի աշխատում են, բայց անօգուտ է լինում. որովհետև Հայոց հնչմունքներին չէին յարմարուած և մանաւանդ սակաւ էին տառերը:

Ժողովը վճռում է, որ ինքը սուրբ Մեսրոպը գնաց Դանիէլ Ասորի եպիսկոպոսի մօտ, որ և առանց յետաձգելոյ

իւր հետ առնելով մտավարժ աշակերտներ՝ գնում է Միջագետք, բայց ոչ մի զանազանութիւն չէ տեսնում իւրեան աւանդած նշանագրերի մէջ:

Սաստիկ տրտմութեամբ կամենում է վերադառնալ, ուստի իւր հետ ունեցած աշակերտները երկու կարգ է բաժանում, որ մէկ կարգը ուսանի Յունաց Գպրութիւն և միւսը Ասորոց, իսկ ինքը ուղեկից ունելով միայն աւագ աշակերտներին, Յովսէփ Պաղնացուն և Յովհան եկեղեցացուն վերադառնում է, սակայն յետոյ Սուրբ Մեսրոպը իմանալով, որ Եդեսիայում կարող է իրեն օգնել տառերի գիւտի մասին Պղատոս հանձարեղ մի մարդ, ուստի ուրախութեամբ գնաց Եդեսիա: Պղատոսը սուրբ Մեսրոպայ հետ երկար խորհրդակցելուց յետոյ՝ յայտնեց, որ իւր կարողութիւնից բարձր է հայկական հնչումով գրեր հնարելը, և առաջարկում է իւր ուսուցիչ Եպիփանոսին դիմելու:

Սուրբ Մեսրոպը գնում է Փիւնիկեստան, բայց տարաբախտաբար Եպիփանոսը մեռած է լինում, և ապա գնում է այնտեղից Սամոսացոց քաղաքը Եպիփանոսի աշակերտ Հուրփանոսի մօտ, բայց դարձեալ մնում է անյուս:

Սուրբ Մեսրոպը մարդկային օգնութիւնից անյոյս մնալով՝ Աստուծոյն է դիմում, որ և տեսիլքումը իւր առաջին մի քար է տեսնում, որոյ վերայ մի աներևոյթ ձեռք գանազան տառեր է գրում, որոյ ձևերը Մեսրոպը իւր սրտի մէջ պատկերացնելով՝ արձանագրում է և ապա յայտնում է Ռուփանոսին, որ վայելուչ ձևեր տայ, ահա, այսպէս երևան են գալի Հայկական գրերը:

Սուրբ Մեսրոպը այս նոր գրերով մեծ եռանդեամբ և յաջողութեամբ թարգմանում է Աստուածաշնչից Առակաց գիրքը, և այս յաջողութեան վերայ ուրախանալով դառնում է Հայաստան:

Վ. ռամշապուհի թագաւորը և սուրբ Սահակը ուրախութեամբ գնում են ընդ առաջ (1) Ռահ գետի ափանց մօտ ողջունելով՝ տօնում են Հայոց նորագիւտ տաւերի Գարազլուխը:

Այնուհետև Վ. ռամշապուհի հրամանաւ բացվում են ամեն տեղ ուսումնարաններ: Իսկ Սուրբ Մեսրոպը անցնում է Մարաստան, Գողթան և Սիւնեաց գաւառները, ուր բանում է դպրոցներ և Անանիայ եպիսկոպոսի տեսչութեանը յանձնելով՝ գնում է Վրաստան, որոց նոյնպէս շնորհում է նշանագրեր: Նոյնպէս սուրբ Մեսրոպը օգնում է և Աղուանից և նոցա համար ևս նշանագրեր է հնարում, և ապա պարապում է Աստուածաշունչ գրոց թարգմանութեամբ:

ԳԼ. ԺԳ.

ՄՐԱՀ ՎՌԱՍՄԵՍՊՈՒՀԻ և ՀԱԼԱԾԱՆՔ ՎՌԱՍ Ե. Ի.

Վ. ռամշապուհը մեռնում է 421 թուին, Խոսրովը ազատվում է կապանքներից և կրկին թագաւորում է, բայց մէկ տարիից յետոյ մեռնում է: Յազկերտ Ա-ը ուղարկում է Հայոց վերայ թագաւոր իւր Շապուհ որդուն, և ևս լսելով իւր հօր մահը գնում է Պարսկաստան. ուր և սպանվում է և իւր հօր տեղը նստում է Վ. ռամ Ե-ը, որ նոր ջօրք է ուղարկում Հայաստանը աւերելու, այս ժամանակ սուրբ Սահակը անցնում է Յունաց բաժին և սկսում է դպրոցներ բանալ, սակայն Յունաց վերակացուները մեծ արգելք են գնում: Սուրբ Սահակը Մեսրոպին և իւր թոռն Վարդան Մամիկոնեանին ուղարկում է բիւզանդիոն Թէո-

(1) Այժմ Ղարսա-չայ:

տոս կայսեր մօտ տալով թղթեր Ատտիկոս Պատրիարքի և Անատոլիոս զօրավարի վերայ:

Սուրբ Մեսրոպը իւր հետ է վերցնում իւր աշակերտներին, որոնցից մէկ մասը թողնում է Մելիտինէում Ասորերէն սովորելու և միւս մասով գնում է Բիւզանդիոն: Ներկայանում է Կայսեր և միւսներին, որոնցից մեծ ընդունելութիւն է գտնում և իւր քաջ ատենաբանութեան և հմտութեանց մասին, որք ափշում են և անուանում են նրան Գերզգօն վարդապետ, ևս Վարդանին մեծ պատուին է հասուցանում և ապա սուրբ Մեսրոպի խնդիրը ընդունելով՝ մեծ պատուով վերադառնում է Յունաց բաժինը Բիւզանդիոնում թողնելով աշակերտների միւս մասը Յունարէն սովորելու:

Սուրբ Մեսրոպը այնուհետև անարգել Յունաց բաժնի Հայոց համար բանում է դպրոցներ, սուրբ Սահակը անցնում է Պարսից մասը, և Վ. ռամին մօտ ուղարկում է Սմբատին և Վարդան Մամիկոնեանին, Վ. ռամը մեծ պատուով ընդունեց նոցա առաջարկութիւնը և Վ. ռամշապուհի 18 ամեայ Արտաշէս որդուն թագաւորացնում է 426 թուականին:

Այնուհետև սուրբ Սահակն ու Մեսրոպ սկսում են պարապել սուրբ գրքի թարգմանութեամբ, Յովսէփ Պաղնացուն և Եզնիկ Կողբացուն Եղեսեայ են ուղարկում, որ Ասորերէն Հարց գրուածքները Հայերէն դարձնեն, բայց նոքա գնում են Բիւզանդիոն ուսումնասիրելու, ուր յառաջուց ուղևորուած էին Յովհան և Արձան և ուր փոքր ժամանակից յետոյ ուղարկուեցան Ղևոնդ և Կորիւն աշակերտները, որոնք միանալով մեծ եռանդեամբ առնում են ուսումն, և ապա մի ընտիր Աստուածաշնչի Յունական օրինակ առնելով իրանց հետ գալիս են Հայաստան:

Սուրբ Սահակը ու Մեսրոպը Եզնիկի հետ միասին թարգմանած Աստուածաշունչ գիրքը նորից են սկսում թարգմանել, որ ոչ մի թերութիւն չը լինի: Եւ ապա խոր-

Հուրդ են անում և ուղարկում են աշակերտներ այն ժամանակուայ հռչակաւոր քաղաքներ—Աթէնք, Ատտիկէ և Աղէքսանդրիա:

ԳԼ. ԺԵ.

ԲՈՂՈՔ ՆԱԽԱՐԱՐԱՅ ԹԱԿԱՒՈՐ ԱՐՏԱՇԷՍԻ և ԿԱԹՈՂԻ-ԿՈՍԻ ՎԵՐԱՅ. ՄԱՀ ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՊԱՅ:

Արտաշէս մանուկ թագաւորի զեխ կեանքը նախարարներին զայրացրեց և սկսան բողոքել Տիգրան Վաւմին, սուրբ Սահակը իզուր աշխատեց միջամուխ լինելու, որ հաշտեցնէ թագաւորին նախարարների հետ: Որովհետև նոցա մէջ ծնուեցաւ մի կարծիք, որ իբր թէ Հայրապետը կամենում է առ ժամանակ իւրեանց հանգարտեցնել և ապա թագաւորի ձեռօք երբ ամեն բանը կը խաղաղանայ վրէժ առնել տայ, ուստի իւրեանց հետ վերցնելով Արծկէացի Սուրմակ քահանային զնում են Տիգրան: Վաւմը կանչում է Արտաշէսին և Հայոց թագաւորութիւնը փոխում է Պարսից Մարգպանութեան, նոյնպէս սուրբ Սահակայ տեղն Սուրմակն է Կաթողիկոսանում: Սա վարում էր շատ անպիտան և անկարգ կեանք, որից զգուշելով Կաթողիկոսացրին նորապէս անարժաններին՝ Բրքիշոյին և Շմուկէլին: Ժողովուրդը նոր հասկացաւ իւր սխալանքը ոմանք կրկին պահանջեցին սուրբ Սահակին և ոմանք մի այլ ոք:

Պարսից թագաւորը նշանակում է սուրբ Սահակին միայն կրօնական գործերի վերայ, իսկ Շմուկէլին կարգում է օգնական Մարգպանաց հարկեր ժողովելիս:

Սուրբ Սահակը զնում է Տիգրան և քաջ ատենաբանութեամբ պահանջում է Արշակունեաց գահը և Մարգպանաց ջնջումն, թագաւորը հիանալով նորա ատենաբանու-

թեան վերայ հրամայում է շատ ոսկի տալ նորան, բայց Հայրապետը չէ ընդունում և ապա դառնալով Հայաստան իւր ժողովուրդը նեղացած լինելով Շմուկէլի մոլի գործքերից, ինդրում են նորան իւրեանց կրկին ընդհանուր Կաթողիկոս, բայց նա յանձն չէ առնում և քիչ ժամանակից յետոյ մեռնում է և թաղում են Տարօնոյ Աշտիշատ աւանում:

Նորա տեղ ընտրվում է սուրբ Մեսրոպը, որ վեց ամսից յետոյ մեռնում է, և Վահան Ամատունին թաղում է իւր (1) Օշական գիւղը:

Եօթը տարիից յետոյ վերադառնում են իւրեանց ուղարկած աշակերտները և իւրեանց վարդապետներին գրտնում են մեռած, բայց չեն վհատում, այլ նոցա թերի թողած թարգմանութիւնները լրացնում են՝ թողնելով միանգամայն թարգմանիչ անունը սուրբ Սահակայ և Մեսրոպայ վերայ:

ԳԼ. ԺԶ.

150

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԻՃԱԿԸ.

Արշակունեաց թագաւորութիւնը բաժանուելով Պարսկական և Յունական մասերի՝ Հայաստանի քաղաքական ուժը տկարացաւ, և սակաւ ժամանակից յետոյ՝ վերացաւ թագաւորական գահը և իշխանական անունը:

Հայոց աշխարհի այսպիսի թշուառութեան պատճառը ոչ թէ ներքին երկպառակութիւններն էին, այլ Պարսից և

(1) Էջմիածնից դէպի հելսիս 2 ժամու ճանապարհ Քասաղ գետի վերայ.

Յուշնաց մէջ եղած պատերազմները, որոց միտքն էր մեր անտէր երկիրը յափշտակել միմեանցից, որին տէր դարձաւ նոցանից զօրեղը:

Այս ժամանակները և Յուշաստանը տկարացած էր ուժից բարբարոս ազգերի յարձակմունքով, որին և Յագիերտ Բ-ը. լաւ առիթ գտնելով գնաց մեծ զօրքով, որի առաջ Յուշաստանը խոնարուեցաւ և կատարեց բոլոր նորա ցանկութիւնը և մեծ ընծաներով հաշտեցնելով իւր հետ վերադարձրեց Տիգրօն:

ԳԼ. ԺԵ.

ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՐՄԻՅ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹԻՒՆԸ ԲԱՌԵԱԼՈՒ ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ:

Պարսիկները Յոյներին յաղթելու պարծանքով լցուած դառնում են Արևմուտքից Արևելք Քրիստոնէութիւնը ոչընչացնելու նպատակաւ Հայոց, վրաց և Աղուանից աշխարհներին:

Մոգերը և Միհրներսէհ հազարապետը համոզում են թագաւորին, որ Պարսկական տէրութեան բոլոր քրիստոնէայ հպատակ ազգերը մանաւանդ Հայերին մոգութեան դարձնեն, որ լաւ սիրով կապուին Արեաց աշխարհի հետ, որոց անպատճառ կը հետևին միևս դրացի վրաց և Աղուանից ազգերը:

Այս նպատակին համամիտ եղաւ Վասակ Սիւնին, որոյ ուրացութեան պատճառը եղաւ նորա Վարազվաղան փեսան, որ հալածական լինելով Վասակից իւր կնոջ հետ անհաշտ վարվելու համար ապաւինեց Միհրներսէի օգնութեանը՝ ուրանալով Քրիստոնէական սուրբ կրօնը, որով կարողանայ Վասակին հանել տալ մարդպանութիւնից և ինքը նշա-

նակուի: Այս բանը հասկանալով Վասակը սրտանց ուրացաւ Քրիստոնէութիւնը ոչ միայն մարդպանութեան մէջ հաստատ մնալու, այլ և մտադիր եղաւ Հայրենիքի մատնութեամբ ձեռք բերել և Հայոց թագաւորութիւնը:

ԳԼ. ԺԸ.

ՊԱՐՄԻՅ ՊԱՏԵՐԱԶՄ ՀՈՆԱՅ ՀԵՏ Ե ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ:

Պարսից Յագիերտ Բ. թագաւորը Միհրներսէհ հազարապետի և մոգերի խորհրդով Քուշանաց դէմ յայտնեց պատերազմ և որպէս զի Քրիստոնէից ուժը տկարացնէ՝ իւրեանց այլ ու ձիով զօրք է պահանջում, և հրաւիրում է հրովարտակով նախարարներին, որ (1) Ապար աշխարհը հաւաքուին: Եօթը տարի շարունակ պատերազմելուց յետոյ յաղթեց Քուշանաց, և այնուհետև մոգերը և Միհրներսէհ Յագիերտին ասում են, թէ Աստուածները, որ քեզ այսպիսի յաղթութիւն տուին, քեզանից փոխարէնը պահանջում են, որ բոլոր քրիստոնէայ ազգերը Պարսից դէնի դարձնես:

Թագաւորը այսպիսի առիթ էր որոնում, և ապա սկսան տանջել բանակի մէջ եղող քրիստոնէաներին, որ ուրանան Քրիստոնէութիւնը, իսկ ոմանց մեծամեծ պատիւներ էր խոստանում, և շատերին ևս դժնդակ ձմերոցներ ուղարկելով՝ հալում էր ու մաշում. չը նայելով, որ մինչի (2) Քուշանաց

(1) Պարսից սահմանադուլս, ուր է Սագաստան և Նիշապուրհ:

(2) Արևեալեան Հոնաց ասում էին Հեփթաղ կամ աւելի պատուաւոր կոչում տալու նպատակաւ Քուշանք, իսկ Արևմտեան կողմ եղողներին, որոնք սև էին, ասում էին Հոն: Այժմ Հոնաց մնացորդները Հոնգարացիք կամ Մաճառներն են, որոնք քաղաքակիրթ մարդիկ են, իսկ վայրենիքը—Վարմուկներն են և Ֆինական ազգեր:

դէմ յաղթութիւն առնելը, ազատ էին Քրիստոնէայքը նոյն իսկ բանակումը և Պարսկաստանումը: Ատովմ Գնունին և Մանածիհը Ռշտունին սկսան իւրեանց գնդով փախչել Հայաստան, որոց հասնելով Պարսիկները բոլորին նահատակում են, որոց մեր եկեղեցին տօնում է Ատովմեանց զօրավարաց անունով:

ԴԼ. ԺԹ.

ԳԵՆՇԱՊՈՒՀԻ ՀԱՐՍՏԱՀԱՐԻՉ ԳՈՐԾՔԵՐԸ:

Յազկերտը կամենալով զբաւել և բոլոր Հայոց աշխարհը սկսաւ խաբէբայութեան ևս ձեռնամուխ լինել: Նա ուղարկում է իւր Գենշապուհս պաշտօնատարին Հայաստան, որպէս թէ թագաւորից ողջոյն տալու, և Հայոց աշխարհից ամեն տեսակ ծառայութիւնքը թեթեւացնելու, բայց նա երբ մտնում է Հայաստան, սկսում է ամեն թեսակ անգթութիւններ գործել:

Եկեղեցին իւր եկեղեցականներով. Մենաստաններ իւր միայնակեացներով հարկի տակն է դնում, երկրի հարկերը ծանրացնում է, մինչև անգամ լեառների, բլուրների և աւերակների վերայ նշանակելով հարկեր: Նախարարների մէջ խռովութիւն է սերմանում և Վահան Ամատունուն հազարապետութիւնից ձգելով, նորա տեղ Պարսից Մշկան անունով իշխան զբաւ, գատաւորութեան համար եպիսկոպոսաց փոխանակ մոգեր նշանակեց:

Այսպիսի տմարդի հնարքներով քանդեց Հայոց միութիւնը, հալածական եղան շատ վանականներ, ցրուեցան թէ քաղաքացիք և թէ գիւղացիք, որոց տիրեց մեծ աղքատութիւն, որովք և շատերը թուլացան իւրեանց հաւատոյ մէջ, ահա, Միհրնէրսէհ հազարապետը Հայոց այս նեղ

վիճակը տեսնելով՝ ուղարկեց Հայոց, Վրաց և Աղուանից աշխարհները հրովարդակ, որով բարձրացնում էր իւրեանց երկու աստուածների (Որմզդի և Արհմնի) մեծութիւնը և քրիստոնէական կրօնը համարում էր ստութիւն. և որով հրամայում էր արեգական տալ երկրպագութիւն շուտով և ընդունել Պարսից դէնը, և կամ բառ առ բառ պատասխանել, և կամ գալ Պարսից դուռը դէմ առ դէմ խօսելու թագաւորի Ատենումը:

Այս հրովարտակը բոլոր Քրիստոնէից ուշադրութիւնը զբաւեց, Յովսէփ կաթողիկոսը Հայոց թագաւորանիստ (1) Արտաշատ քաղաքումը ժողովք արեց եպիսկոպոսներ, շատ նախարարներ, իշխաններ և մեծ բազմութիւն մարդկանց հրաւիրելով, ամենքը միաբերան ուխտեցին, որ մինչի մահը հաստատ մնան Քրիստոնէութեան մէջ և ապա պատասխանեցին բառ առ բառ, որով ապացուցեցին իւրեանց Քրիստոնէական կրօնի ճշմարտութիւնը և վսեմութիւնը, իսկ նոցա աստուածների ստութիւնը, աւելացնելով թէ մեր այս սուրբ կրօնից աշխարհային ոչ մի նեղութիւն և տանջանք չեն կարող մեզ հեռացնել, ահա, մեր համառօտ պատասխանը, ուր որ լինենք սորանից աւելի մենք չունինք ոչ մի բան աւելորդ ասելու:

(1) Որտեղ խառնվում են Երասխ և Մեծամօր գետերը, այնտեղ է Արտաշատ քաղաքի տեղը, խոր վերապի մօտ:

Մ-3/4 3/4 3/4 1/3 3/4

ԳԼ. Ի.

ՊԱՐՍԻՅ ԹԱԳԱՒՈՐԻ ԶԱՅՐՈՅԹԸ ՀԱՅՈՑ ՊԱՏԱՍԻԱՆԻ

ՎԵՐԱՅ:

Պարսից Յագկերտ Բ-ը, սաստիկ զայրանալով Հայոց Համարձակ գրած պատասխանի վերայ, բոլոր Հայոց, Վրաց և Աղուանից նախարարները հրաւիրեց Տիզբոն:

Այս երեք ազգի ներկայացուցիչները պատգամաւորութեամբ ուխտ դրին, սր Հաստատ մնան Քրիստոնէութեան մէջ և ապա Յովսէփ Կաթողիկոսը խրախուսելով և օրհնելով նոցա ճանապարհ ձգեց:

Նախարարները Հասնելով Պարսկաստան՝ դուռը այլ ևս չը ցոյց տուաւ այն ընդունելութիւնը, որպիսին յառաջ էր ցոյց տուել: Իզուր էր լիջել նախարարների Շապուհ Բ-ի և նորա յաջորդների տուած ազատութիւնները, իզուր լիջեցին իւրեանց նախնեաց քաջութիւնները յօգուտ Պարսկաստանի: Թագաւորի կատաղութիւնը սաստիկ էր, նա ամեն բանը արհամարում էր, նա միայն պահանջում էր երկրպագանել Արեգական և զոհ մատուցանել կրակին, ապա թէ ոչ, անթիւ զօրք կուղարկէ Հայաստան, նոցա կանայք և որդիքը իւրեանց հետ Խուժաստան աքսորելու, և նոցա բոլոր երկիրը մոխիր դարձնելու:

Նախարարները թագաւորից ժամանակ խնդրեցին մտածելու, և եկան այն եզրակացութեանը, որ առ երեսու ուրանան Քրիստոնէութիւնը, որպէս զի այսու ազատուելով՝ իւրեանց Հայրենեաց տէր և պաշտպան կարողանան հանդիսանալ ապագայ վտանգին, և ապա յայտնեցին թագաւորին իւրեանց հնազանդութիւնը:

Թագաւորի ուրախութիւնը անպատմելի էր, երբ նա տեսաւ նախարարներին Արեգակին երկրպագանելիս, մոզե-

րին մեծածեծ ընծաների արժանացրեց, կրակին առատ զօհեր բերեց:

Եւ ապա, Վրաց Վազգէն և Աղուանից Վաչէ թագաւորները, Վասակայ երկու որդիքը. Բաբիկ և Սմիրնբերտէհ պատանդ առնելով՝ արձակեց նախարարներին 700 մոզերի ու շատ զօրքի հետ միասին, որ Հայոց աշխարհումը մոզութեան ուսումն և օրէնք տարածեն:

ԳԼ. ԻԱ.

ՄՈԳԱՒՈՒՄԲ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՏՆԵԼԸ Ե ՄՈԳՊԵՏԻ ՇՈՒՍՐՈՒՄԸ:

Բանակի մէջ եղած ուխտապահ երէցները նախարարների ուրացութեան վերայ դառնացած, իսկոյն Հայոց աշխարհը պատգամաւորներ ուղարկեցին անախորժ լուրը հասուցանելով եպիսկոպոսներին, որոնք և իսկոյն Յովսէփ Կաթողիկոսի հրամանով սփռուեցան ամեն կողմերը և ուխտ դրեցին, որ ուրացեալների դէմ ոչինչ զիջողութիւն չանեն, և չը խնայեն նոյն իսկ իւրեանց մերձաւորներին, այսպէս Հայաստանի հարազատ զաւակները միանալով՝ արք և կանայք սուր առան ձեռները, որ պաշտպանեն իւրեանց սուրբ եկեղեցին:

Եւ ահա, լուր հասաւ, որ նախարարները մոզերի հետ միասին և Պարսից զօրաց բազմութեամբ մտան Հայաստանի (1) Շաղկոտն գաւառի Անգղ գիւղաքաղաքը, ուր 25 օր հանգստանալուց լետոյ, Մոզպետը այլ մոզերի հետ մտաւ կիւրակի օրը եկեղեցին, որ արգելէ նոցա սուրբ պաշտօնը, սուրբ Աւսնդ երէց միւս քահանայից հետ սուրբ պատա-

(1) Աւաշկերտին սահմանակից է, ուր է Բայազիդ քաղաքը:

րագի խորհուրդ էր մատուցանում, Մոզպետի անկարգութիւնից զայրանալով՝ հոգի տուաւ ժողովրդին և հասկացրեց, որ արդէն ժամանակ է պաշտպանելու իւրեանց եկեղեցւոյ սրբութիւնը, ուստի բրածեծ անելով գլխապատառ քշեց այն տեղից:

Մոզպետը զայրացաւ Հայոց հաստատամտութեան վերայ և ասաց Վասակին և այլ նախարարներին «Թող ես գրեմ մեծ թագաւորին և յայտնեմ, որ Հայոց մէջ անկարելի է մոգական օրէնք մտցնելը, այն մարդիկը որ ոչ մի բանից չեն վախենում, որ մահը առաւել լաւ են համարում քան թէ կեանքը, նոցա մէջ անկարելի է մոգութիւն տարածելը, եթէ նոյն ինքն Աստուածները մեզ օգնութիւն գային: Եւ դու Վասակ, իմանալով Հայոց այսպիսի հաստատամտութիւնը թնչու չը յայտնեցիր ինքդ մեծ թագաւորին, ուրեմն ես կը գրեմ, որ այսպիսի հրամանը յետ վերցնի»: Բայց Վասակը որ ՚ի սրտէ ուրացել էր Քրիստոնէական սուրբ կրօնը. համոզում էր մոզպետին, որ փոքր ինչ համբերէ, ինքը կարող է ամեն բանը գլուխ հանել:

Նա սկսաւ այնուհետև փառասէրներին պարգևներով շլացնել, որ բերել էր իւր հետ թագաւորից, խեղճ գիւղացիներին սարսափեցնել իշխանական ուժով, կեր ու խումբ սիրող նախարարներին խնձուխներով զբաղեցնելով, յաջողեցաւ նորան մի քանի նախարարաց տներումը մոգերին տեղաւորել, Ատրուշաններ բանալ և կրակին զոհ ասնել տալ, և նոյն իսկ Արծրունեաց տանից մոգեր նշանակելով:

Վարդան Մամիկոնեանը Վասակայ այս անգթութիւնները չը կարողանալով տանել, առաւ իւր ընտանիքը և հեռացաւ Յունաց բաժինը: Վասակը այս իմանալով պատգամաւորներ ուղարկեց և (1) Բասենոյ նահանգից յետ կան-

(1) Արարատեան աշխարհի արևմտեան զաւառներեցն է, որ

չեց: Վարդանի մօտ Շահապիվան զօրանիստ քաղաքումը ժողովեցան շատ նախարարներ, ուր եկան և շատ եպիսկոպոսներ՝ ասելով—եթէ Վասակը լիրաւի ձեր խորհրդով է այսպէս անգթութիւններ գործում, առաւել բարուք է մեզ համար, որ նախ մեր պարանոցը հատանէք այս տեղ և ապա ձեռնամուխ լինէք մեր եկեղեցուն, իսկ եթէ հաստատ էք մեր ուխտի մէջ, ուրեմն իսկոյն պէտք է վրէժ առնել Վասակից: Վարդանը և այլ նախարարները հաւատացրին, որ սուրբ ռեստից անբաժան են և Յունիս ամսու մէջ կը սկսուի պատերազմ ուրացեալները մոգերի հետ միասին հալածելու: Այս մտադրութեանը հաւանութիւն չը տուաւ Ջաղանդան անունով մէկը, որ Վասակայ համամիտներիցն էր, ուստի և իսկոյն քարկոծուեցաւ, որով մեծ ահ ու սարսափ տիրեց ուրացեալների վերայ:

Եւ ապա բարձրացնելով խաչի դրոշակը յարձակուեցան Վասակայ վերայ, որին յաղթեցին և ձեռքերը կապած բերին եպիսկոպոսաց առաջ, որոց խնդրելով ներողութիւն, և երզուելով սուրբ Աւետարանի վերայ արձակուեցաւ կապանքից:

Հայերը այնուհետև քանդեցին ամեն տեղ Ատրուշաններ, շիջուցին կրակը, բարձրացրին ամենայն տեղ սուրբ խաչը, և բոլոր Պարսից դրաւած տեղերը յետ խլեցին և շատ Պարսից մոգեր ջարդեցին, և շատերին ևս բանտարկեցին. այսպէս մոգերը Հայոց քաջութիւնից սարսափած իւրեանցհարստութիւնը թողնելով հազիւ հազ կարողացան փախչելով ազատուիլ:

Երասխ գետի սկզբներումն է, Ալաշկերտից մի ուրիշ ճանապարհով կարնոյ սարերի մօտով կարողանում էին մտնել Բասենոյ նահանգը:

ԳԼ. ԻԲ.

ՍԵՒՈՒԻՏ ԶՕՐԱՎԱՐԻ ԱՂՈՒԱՆԻՅ ԱՇԽԱՐՀ ՄՏՆԵԼԸ,  
ՎԱՐԴԱՆ ՔԱԶ ՍՊԱՐԱՊԵՏԸ ՀԱՅՈՅ ԳՈՒՆԳԸ Զ-քի է  
ԲԱՅԱՆՈՒՄ. ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ 430 ԹՈՒՒՆ:

Հայերը իւրեանց յաղթութեան վերայ ուրախանալով,  
յանկարծ Աղուանից աշխարհից գալիս են եպիսկոպոսս և  
հազարապետը և գուժ են բերում, որ Սեբուխտ գորովարը  
Հոնաց աշխարհից Պարսից զօրքով և երեք հարիւր մոգե-  
րով մտել է Աղուանք, աւերում է երկիրը և բռնի կեբպիւ  
դարձնում է շատերին մոգութեան օրէնքին, փակում է ե-  
կեղեցիքը և Ատրուշաններ է բացանում:

Հայերը քաջալերեցին եպիսկոպոսին և հազարապետին,  
որ փոքր ինչ աւերանաց առաջն առնեն, մինչի իւրեանց  
օգնութիւն հասնելը: Իսկ իւրեանք Յովսէփ կաթողիկոսի  
թղթով Ատոմ Գնունին և Վարդանայ եղբօր Հմայակին ու-  
ղարկեցին Թէոդոս Յունաց կայսեր մօտ, որին յայտնելով  
իւրեանց գործած քաջութիւնը, խնդրում էին օգնութիւն:  
Մինչ դեռ Թէոդոսը պատրաստվում էր օգնելու Հայերին,  
մահը յանկարծ վրա է հասնում, և թագաւորում է Մար-  
կիանոսը, որը ոչ միայն չօգնեց Հայերին, այլ ՚ի վնաս  
Հայաստանի պարսից հետ դաշն կապեց Անատոլ Անտիոքայ  
պարապետի խորհրդով, Հայերը այս տգեղութիւնից չը  
յուսահատուեցան, այլ իւրեանց գունդը երեքի բաժանեցին  
Ա-նը յանձնուեցաւ Ներշապուհ Ռմբոսեան Արծրունուն և  
ուղարկուեցաւ (1) Հեր ու Զարեանդ, 2-գունդը յանձնուե-

(1) Այս երկուսը առանձին առանձին գաւառներն են, կից  
միմեանցից—Հեր-Խոյի շրջակայքն է, Զարեանդ այժմեան Զա-  
րաւայ Ակչա (Տղմուտ) գետի սկզբներում, Վասպուրականի հա-  
րաւային կողմը:

ցաւ քաջ Վարդան Սպարապետին և գնաց Սեբուխտի դէմ.  
Իսկ Յ-դը յանձնուեցաւ Վասակին, որ մնաց Հայոց աշխար-  
հումը հսկելու երկրի անդորրութեան վերայ:

Վասակը անցկացաւ Սիւնեաց աշխարհը և հասկացրեց  
Սեբուխտին Վարդանայ զօրաց թիւը և Հայաստանի վիճա-  
կը. Սեբուխտը սիրտ առնելով այս լուրից անցաւ Վուր գե-  
տը և Ուտեացուց Խաղաղ քաղաքի հանդէպ պտտերազմե-  
ցաւ Վարդանայ հետ, որից յաղթուելով զօրաց մեծ մասը  
խեղատուեցան Լոփնաս գետումը և միւս մասը ցիրուցան  
եղան, իսկ Հայերը մտան Աղուանից աշխարհը և Պարսից  
զբաւած ամրոցները յետ առան, ատրուշանները քանդեցին  
և մոգերը կոտորեցին: Աղուանից իշխանները և շատ բազ-  
մութիւն, որոնք Պարսից երկիւղից ապաւինել էին և ամ-  
րացել լեռանց և անտառների մէջ, բոլորն ևս եկան և միա-  
ցան Հայերի հետ և յարձակուեցան Պարսից շորայ պահա-  
կին վերայ, որ Յաղկերտն էր շինել, և յանձնեցին այն Վա-  
հանին, որ Աղուանից թագաւորի ազգիցն էր:

Վարդանը այս յաղթութեանց ժամանակը գուժ առաւ,  
որ Վասակը Քրիստոնէութեան ուխտից յետ կենալով, գիւ-  
ղերը և բերդերը կործանում է, նախարարաց կանայքն ու  
որդիքը բանտարկում է, կողոպտում է եկեղեցիները և քա-  
հանայից կապում է: Այս նեղութեանը Ռմբոսեան Արծրու-  
նին հեռու լինելով չը կարողացաւ օգնութիւն հասնելու,  
իսկ Վարդան քաջ սպարապետը առնելով իւր զօրքը շոք-  
պով հասաւ Հայոց աշխարհը, Վասակը վախենալով Վարդա-  
նայ քաջութիւնից թողեց զբերիները և աւարը և Արա-  
րատեան գաւառից փախաւ Սիւնեաց աշխարհ, իսկ Վար-  
դանը բոլոր թագաւորանիստ սէրքը և ամրոցները առաւ  
և խաղաղութիւն ձգեց:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԳԱՆԱՆՑ Լ ՍԻՍԱԿԵԱՆՑ.

Ամբողջ ձմեռը Հայաստանը բաժանուած էր երկու մասն, Արարատեան կողմը ունէր Վարդանը, իսկ Սիւնեաց աշխարհը Վասակը, երկու կողմից Տիգրոն պատգամաւորներ ուղարկեցին:

Վասակը մի սեպուհ իշխան և Վարդանը կալանաւորութիւնից ազատելով մի Պարսիկ իշխան ուղարկում է Պարսկաստան, որ յայտնէ մեծ թագաւորին, որ իզուր է պատճառ լինում աշխարհի աւերանաց, և լսում Վասակի ստուգութեանը, որովհետև Հայերը բնաւին նորա հետ միացած չեն:

Թագաւորը Վարդանանց պատգամաւորի խօսքերը լսելով քիչ մեղմացաւ, և թողութեան հրովարտակ հանեց, չարչարանաց մատնուած քրիստոնէայքը ազատեց, և բանտարկուած նախարարները փրկելով բանտից՝ ռոճիկ կարգեց, քահանայից հրամայեց, որ ազատ կերպիւ իւրեանց պաշտօնը կատարեն, բայց այս բոլորը Հայերին անդորրացնելու համար էր, որովհետև շուտով իւր մտադրութիւնը փոխեց, Միհրնբրէի հրամանատարութեամբ Հայաստան մեծ զօրք ուղարկեց, որը յանձնելով Սուշկան Նիւսալաւուրտին հրամայեց, որ Վասակայ խորհրդով ընթանայ:

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐԳԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ.

Զ. Երևանի 451 թ.:

Զատիկի տօնին Պարսից գունդը մտաւ Հեր և Զարեանդ, նախարարները այս իմանալով շուտով իւրեանց զօրքերով ժողովեցան Արտաշատ, որոց թիւը էր 66,000: Քաջ սպարապետ Վարդանը կարգի դրեց այս զօրաց թիւը լրացնելով իւրաքանչիւրի թերութիւնը և կատարելով զօրական հանդէսներ: Առանձար սեպուհին 300 մարդով ուղարկեցին Հայերը թշնամեաց բանակը դիտելու, որ և թշնամեաց վերջապահ թեւի վերայ յարձակուելով մեծ ջարդ տուեց, որ և ուրախութիւն պատճառեց Հայերին այս յաղթութիւնը:

Հայերը գնացին շուտով առաջ, որ թշնամիքը չը մըտնեն Հայաստանի մէջ և աւերեն երկիրը, բայց մինչև Հայոց առաջ գնալը, արդէն թշնամին 1) Արտագ գաւառի Աւարայր դաշտումը բանակ էր ձգել: Հայոց զօրքը բանակեցաւ նոցա հանդէպը, այս տեղ ներկայ էին սուրբ Յովսէփ Կաթողիկոսը և Աւոնդ երէցը և ուրիշ շատ եպիսկոպոսներ: Վասակը խորամանկութեամբ պատգամաւորներ էր ուղարկում Հայոց մօտ, որպէս թէ թագաւորը թողութիւն է հրատարակում, որով կամենում էր Հայերին հանդարտացնել և այսպիսով զրաւել բոլոր աշխարհը և աւերել, բայց Հայերը ստախօս ուրացողին առաջին անգամ չէին փորձել, որ դարձեալ խաբուէին նորանից, այլ ընդ հակառակն Քաջն Վարդանը խրախոյս էր տալիս, որ ներկայ պատերազմը եկեղեցւոյ փրկութեան համար է: Պատերազմի նախընթաց երեկոյին Աւոնդ երէցը Յովսէփ կաթողիկոսի և այլ եպիս-

1) Վասակուրականի գաւառներից մէկն է, հին Շաւարշանը:

կոպոսների թուլտուութեամբ ազգու ճառ խօսեց, և հաղորդութեան սուրբ խորհրդով հոգեպէս ոգևորելով՝ պատրաստեց ՚ի մահ Քրիստոսի և նրա սուրբ եկեղեցւոյ սիրոյ համար:

Ապա Քաջ Վարդանը զօրքը երէք գնդի բաժանեց և գնաց ընդ առաջ պատերազմելու այն Պարսից գնդի հետ, որին Մուշկան Նիւսալաւուրտ առատ պարգևներ էր խոստանում քաջութեամբ պատերազմողին և պատուհաս թագաւորից փախտականներին, և ինքը ամրանալով Մատենիկ գնդի մէջ՝ սկսուեցաւ պատերազմը:

Յաղթութիւնը Հայոց կողմն էր, Պարսիկները նկատելով վերջին ճիգը թաքելով շրջապատեցին Վարդանին, ուրացեալները անցան դէպի Պարսից ունայն պատիւը թողնելով իւրեանց սպարապետին իւր փոքրաթիւ նիզակակիցներով, որը մեծ քաջութիւն գործելուց յետոյ առաւ մարտիրոսութեան անմահ պատիւը:

Նահատակաց թիւը հասնում է 1036-ի որք կոչուեցան Վարդանանց զօրավարաց անուամբ, որոց մեր եկեղեցին իբրև իւր քաջ ախոյեաններին ամեն տարի բուն բարեկենդանի հինգ շաբթի օրը տօնում է: Իսկ Պարսից կողմից ընկան 3544 անձինք: Մարտակից Քաջն Վարդանայ էին—Խորէն, Արտակ, Տաճատ, Հմայեակ, Ներսէհ, Վահան, Արսէն և Գարեգին:

ՄՈՒՇԿԱՆ ՆԻՒՍԱԼԱՒՈՒՐՏԸ ԿԱԼԱՆԱՒՈՐՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ՂԵՒՈՆԻ ԵՐԵՅԻՆ.

Քաջն Վարդանայ նահատակութիւնից յետոյ Հայերը զանազան ամուր տեղերը ամրացան: Պարսից զօրավար Մուշկանը յուսահատուեցաւ և հասկացաւ, որ Հայերի մէջ մոգութեան օրէնք մտցնելու հնարք չը կայ, բայց ուրացեալ Վասակը Վարդանի մահից յետոյ բոլորովին աներկիւղ էր, ուստի և խորհուրդ տուաւ զօրավարին ազատութիւն հրատարակել Քրիստոնէութիւնը պաշտելու և ամրոցները գրաւել կամ խորամանկութեամբ և կամ պատերազմով:

Մուշկանը պաշարեց մի ամրոց, ուր պահուած էին սուրբ երէցները Հայոց մի գնդի հետ, և երգմամբ խոստացաւ թողնել տուանց վնասի, եթէ կամովին անձնատուր կը լինին: Բակ անուենով մէկը չը հաւատաց սուտ երգմանը և 700 մարդով հեռացաւ այն տեղից, իսկ մնացեալները անձնատուր եղան, որոնցից 213 հոգի նահատակեցին և սուրբ Յովսէփ և Ղևոնդ երէցին իւրեանց ընկերներով ծեծեցին և ապա կալանաւորեցին:

Մուշկան Նիւսալաւուրտը արձակեց մի քանի քահանայք. որ ազատ պաշտեն իւրեանց Քրիստոնէութիւնը, բայց Հայերը դարձեալ չը խաբուեցան և այս խորամանկութիւնից, նոքա ամրացան թէ աշխարհի մէջ եղած ամրոցներում, թէ 1) Տմորեաց անմատոյց սարերը, Արցախոյ թանձր անտառները, 2) Խաղտեաց և 3) Պարխարու լեռները: Պար-

1) Վասպուրականի Ռշտունեաց:

2) Լագերի երկերը:

3) Արզրումի հեւսիսային կողմը:

սիկները սկսան յարձակուիլ այս տեղերի վերայ, բայց մեծամեծ վնասների հանդիպեցան:

1) Կապուտ լեռան մէջ Հայերը ջարդեցին Պարսից մէկ գունդը և միայն Սըշէն երէցը կալանաւորուեցաւ, որ իջել էր Վասակի սիրտը մեղմայնելու: Տմորական ամրոցից յարձակուեցան Հայերը և Պարսից մի գունդ ջարդեցին 2) Տայոց ձորագաւառին մէջ, Հայերը ՚ի վրէժխնդրութիւն երկու այրած եկեղեցեաց յարձակում գործեցին, ուր նահատակուեցաւ Վարդանայ Հմայեակ եղբայրը՝ մեծ յաղթութիւն գործելով: Արցախոյ անտառների մէջ ապաւինած Հայերը Հոնաց հետ դաշն կապելով՝ յարձակուեցան Պարսից վերայ և մեծ կոտորած պատճառեցին, այսպէս Հայերը այս մանջ պատերազմների մէջ աւելի մեծամեծ վնաս տուեցին Պարսից զօրաց, որոնք վհատութեամբ փախչում էին և հեռանում:

ԳԼ. ԻԵ.

ՄԱՐԶՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՏՐՈՐՄԻԶԳԻ, ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՆԱԽԱՐԱՐԱՅ ԿԱՊԱԾ ՊԱՐՄԻՅ ԳՈՒՌՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ, ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՄԵԼԻՏԷ ՄԱՆԱԶԿԵՐՏԱՑԻՈՅ,

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՂԵՒՈՆԴԵԱՆՅ.

Մուշկան Նիւսալաւուրտը վհատելով մանր պատերազմներից պատճառած վնասներից, դադարեցրուց յարձակումները և թագաւորին հասկացրեց, որ իզուր է և անօգուտ այսքան կոտորածը, և թէ Հայոց զիմադարձութիւնը շատ մեծ է: Թագաւորը շատ տրամեցաւ և հրամայեց, որ Մուշ-

1) Արզրուսից հիւսիս-արևմուտք եղող գօտին:  
2) Հայոց աշխարհի արևմտեան սահմանագլուխ:

կան Նիւսալաւուրտը դուրս գալ Հայոց աշխարհից և գնայ Հոնաց վերայ, Վասակը դառնայ Պարսկաստան և մարզպանութիւնը տալով Ատրորմիզդին՝ հրամայեց, որ երկիրը նուաճէ սիրով և ոչ պատերազմաւ:

Ատրորմիզդը եկաւ Հայաստան և հրատարակեց Արքունի թողութիւն, կանչեց իւր մօտ Հայոց եպիսկոպոսները և երէցները ու կապած ուղարկեց Պարսկաստան, որովհետև թագաւորին էին բողոքել:

Վասակը շապով հասաւ դուռը, և սկսաւ իւրեան արդարացնել՝ բոլոր աւերանաց մեղը դնելով Վարդան սպարապետի վերայ, բայց թագաւորը դատը յետաձգեց մինչև կապեալների գնալը:

Իսկ Ատրորմիզդը միւս եպիսկոպոսներին և քահանայից թողեց, որ ազատ կերպիւ վարեն իւրեանց տեսչական պաշտօնը. այս իմանալով հեռացած նախարարները վերադարձան իւրեանց կալուածները:

Շուտով նախարարներն ևս կանչուեցան Պարսկաստան, դեռ նոքա սուրբ Յովսէփ Կաթողիկոսի կամեցողութեամբ ժողովեցան 1) Դուին և Մելիտէ Մանազկերտացին ընտրեցին կաթողիկոս և ապա ուղևորուեցան Պարսից դուռը 452 թուին:

Նախարարները Պարսկաստան հասնելով՝ մահապարտների բանտը դրուեցան, որտեղ էին և շատ նախարարագունները յառաջուց բանտարկուած և սուրբ երէցները:

Մի քանի օրից յետոյ սկսուեցաւ դատը, ուր Վասակը ամբաստանուեցաւ ոչ միայն Հայ նախարարներից և կապած քահանաներից, այլ և մոզերից և Նիւսալաւուրտից. որ և զրկուելով ամեն պարգևներից դրուեցաւ մահապարտների բանտը, ուր որդնալից մեռաւ անմխիթար. բայց և այնպէս

1) Այժմ Երևանայ նահանգում մի փոքր գեղ:

նախարարները և քահանայքը չազատուեցան և կրկին բանտը գրուեցան:

Յազկերտը գնաց Քուշանաց դէմ պատերազմ և քահանայքը Նիւշապուհի Դղեակը գնելով՝ յանձնեց Մոզպետին, որ կարողանայ մոզուլթեան օրէնքի դարձնել, բայց Մոզպետը երէցների սուրբ կեանքից համոզուած՝ ընդսենեց քրիստոնէական սուրբ կրօնը և մկրտուեցաւ:

Յազկերտը ուղարկեց Դենշապուհին Նիւշապուհ, որ կապեալներին մոզացնէ, և եթէ յանձն չառնեն ծածկաբար նահատակէ: Դենշապուհը իմանալով Մոզպետի մկրտուելը՝ ուղարկեց հեռաւոր երկիր և ձգել տուաւ մէկ խորը վհի մէջ, իսկ քահանայքը ապառաժներու վրայ քարշելով նահատակեց 454 թուին, որոնք Աւոնդի անուամբ կանչուեցան Անուրէնք, որոց եկեղեցին տօնում է միշտ բուն բարեկենդանի երեքշաբթի օրը:

ԳԼ. ԻԸ.

ԽՈՐԷՆ և ԱՔՐԱՀԱՄ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ,  
և ՆՈՑԱ ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ. ԳԱՐՁ  
ՆԱԽԱՐԱՐԱՅ.

Աւոնդեանց նահատակութիւնից յետոյ նոցա աշակերտներից երկուսը՝ Խորէն և Աքրահամ բանտիցը ազատուեցան և ականջները կտրելով աքսորուեցան Շահուղ գաւառը տրքուն: մշակութիւն անելու:

Խորէն և Աքրահամ Բաբելաստան հասնելով՝ ազատուեցան աքսորանքից և Ասորեստանի ու խուժաստանի մէջ մանգալով՝ այն տեղի Քրիստոնէաներից տուրք ժողովելով Նիւշապուհի բանտարկեալներին էին ուղարկում: Այսպիսի կեանքը Խորէնը չ'կարողանալով տանել մեռաւ՝ Խուժաստա-

նում, իսկ Աքրահամը երկու տարիից յետոյ նախարարների խնդրանք և Ասորեստանի Քրիստոնէաների երաշխաւորութեամբ Հայաստան դարձաւ Բզնունեաց գաւառի եպիսկոպոս կարգուելով:

Նախարարները և նախարարաց որդիքը երկար ժամանակ մնացին բանտումը, իսկ նոցա փափկասուն կանայքը՝ մոռանալով իւրեանց փառքն ու պատիւը իւրեանց քնքոյշ մատների անխոնջ աշխատասիրութեամբ ամեն ձեռք բերած դրամները իւրեանց սիրելիներին էին ուղարկում Պարսկաստան, այսպիսի իսկ ամուսնական սուրբ կասն ու սէրը կարողացաւ յաղթել Պարսկական անգլթութեանը:

Վերջապէս Աշուշայ բղեշխը ազատել տուեց Հմայեակի երեք որդիքը, Վահան, Վասակ և Արտաշէս, իսկ Հրեայ Շղոմշապուհ Պարսիկ իշխանը Յազկերտի սիրտը կակղացրեց և նախարարները ազատել տուաւ բանտից, և ռոճիկ նշանակել տուաւ և խոստումն առաւ Հայրենիքը դարձնելու: Բայց Յազկերտը մեռնելով նախարարաց դարձը յետաձգուեցաւ, որովհետեւ թագաւորի որդւսց մէջ խռովութիւն ընկաւ զահակալութեան մասին, վերջապէս Պերոզի թագաւորութեան ժամանակը նախարարները 12 տարիից յետոյ Հայաստան գալով՝ մեծ ուրախութիւն պատճառեցին ամենքին:

244

ԳԼ. ԻԹ.

ԳԻՒՏ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

465—487

Երբ նախարարները դարձան Հայաստան արդէն Մելիտէ Մանազկերտացի Կաթողիկոսը վախճանած էր և աթոռակալում էր Մովսէս Մանազկերտացին, որը նոյնպէս նախարարների դարձից մի տարիից լետոյ վախճանեցաւ և նորա տեղ ընտրուեցաւ Գիւտը:

Գիւտի Կաթողիկոսութեան ժամանակից մինչև Յովհան Մանգակունւոյ օրերը զրադաշտական օրէնքը մի օրինակ յուզում էր քրիստոնէական սուրբ կրօնը:

Նախարարների օգնութեամբ Գիւտ կաթողիկոսը շատերին մխիթարում էր և Քրիստոնէութեան մէջ ամրապնդում, իսկ շատերը ուրանալով Քրիստոնէութիւնը, մատնութիւններ են անում, այսպիսի խռովութեան ժամանակներին են առանձնանում Մովսէս Խորէնացին և սուրբ Եղիշէ վարդապետը, որոնք արտասուք թաքելով՝ զբոսում են իւրեանց երկասիրութիւնները:

Այս ժամանակամիջոցին Վրաց և Աղուանից աշխարհներումը նահատակութիւններ են լինում, Հայերը Գիւտ Կաթողիկոսի հետ միասին Յունաց Լևոն Կայսերից խնդրում են օգնութիւն, բայց չեն ստանում, այս պատճառաւ նախարարներից ոմանք գաղթում են Յունաց բաժին:

Գիւտ կաթողիկոսը յանդիմանում է ուրացեալներին, որոյ պատճառաւ Խոռ-խոռունի Մալխազը ամբաստանում է Պարսից դուռը, ուր կոչուելով Պերոզի հրամանաւ մատնվում է Ատեան: Գիւտը իւր քաջ ատենաբանութեամբ սարսափեցնում է ատենակալաց, վերջապէս նորան առաջարկում են կամ մողակրօնութիւն ընդունել և կամ հրաժարուել Կաթողիկոսութիւնից:

Գիւտը հրաժարվում է Կաթողիկոսութիւնից և այն տեղի Քրիստոնէաների համար ծածուկ եպիսկոպոսներ և քահանայք ձեռնադրելով՝ դառնում է Հայաստան: Գիւտի տեղ 475 թուին ընտրվում է Քրիստափոր Արծրունին, որոյ Կաթողիկոսութեան երկրորդ տարին վախճանելով՝ թաղվում է 1) Վանանդայ գաւառի Ոթմսու գիւղի մէջ:

ԳԼ. Լ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆ ՄԱՆԳԱՍԿՈՒՆԻՈՅ 480  
ԹՈՒՒՆ, ՎՍՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄԱՐԶՊԱՆ ՀԱՅՈՅ.

ԲԱՖԿԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ.

213

Հայաստանի վիճակը ինչպէս Պարսից, նոյնպէս և Յունաց բաժնում Զենոն Կայսերից շատ աղէտալի է լինում, այս ժամանակամիջոցին Մամիկոնեանց տանից կար Վահանը, որ մաննուելով Պարսից դուռը և ուրանալով քրիստոնէութիւնը դարձաւ Հայաստան իւր Վարդ եղբայրը պատանդ թողնելով: Վահանը միշտ աշխատում էր այս կեղտը իւրանից վերցնելու, և ահա, այս ժամանակն էր պատեհ միջոցը, որ Հայերը երկուստէք առանց օգնականի էին մնացած: Վահանը տեսնելով որ պարսիկները յաղթուել են Հոն-Հեփթաղիներից, Վախտանգն ևս սպանելով իւր ուրացեալ Վազգէն եղբօրը, թագաւորում է Վրաց վերայ և Պարսից դէմ ապստամբվում է:

Այս ժամանակ նոյնպէս Հայերը սկսում են դիմտղարձութիւն ցոյց տալ Պարսից մողակրօնութեան դէմ Վահա-

1) Կարսայ-չայի երկու կողմը Վանանդու լեռների արևելեան-հիւսիսային կողմն է հին Վանանդը, այժմ որ տեղ է կարսը—այս գաւառումն է Ոթմսու գիւղը, սրոյ տեղը անյայտ է:

նի առաջնորդութեամբ, որով և կարողացաւ նա իւրանից մաքրել ուրացութեան կեղտ անուըն միանալով ուխտապահ նախարարների հետ, որ և մեծ մխիթարանք պատճառեց Քրիստափորի յաջորդ Յովհան Մանգակունւոյն, որոյ կրթութեան յանձնուած էին նախարարազուն մանկունքը, մանաւանդ Մամիկոնեանց և Կամսարականացը:

Ա. Հայաստանից հալածուած են Ատրվշնասպ Պարսիկ մարզպանին և Վեհնամ հազարապետին իւրեանց բանակով, առնում են Մարզպանական Դուին քաղաքը, ուր Վահանին սպարապետ են նշանակում և Սահակ Բազրատունուն Մարզպան:

Բ. Կարձեալ պատերազմում են Երասխայ մօտ նոյն Ատրվշնասպի դէմ, որ Ատրպատականից մեծ զօրքերով էր եկած, այս պատերազմումը ներկայ էր և ծերունի կաթողիկոսը, Հայերը լաղթում են Պարսից և Ատրվշնասպին սպանում:

Գ. Հայերը յարձակվում են Պարսից վերայ, որ Հեր և Զարեանդ էին հասած, ծերունի կաթողիկոսը օրհնում է զօրաց և արձակում 1) Արտազ գաւառի Ներսեպատ գիւղը, ուր և ահա հալածական են առնում թշնամեաց բանակը: Այս յաղթութիւնը կրկնապատիկ ուրախութիւն է պատճառում Վտհանայ Վարդ եղբօր գալուստը, որ Ծաղկոտն գաւառի մէջ միանալով Հայերի հետ իւր ծառաներով պատերազմում էր:

Դ. Հայերը գնում են օգնելու Վրաց Վախթանկ թագաւորին Միհրան Պարսիկ զօրավարի դէմ. ուր նահատակվում են Սահակ Մարզպանը և Վահանայ Վասակ եղբայրը:

Ե. Հայերը պատերազմում են Զառմիհր հազարաւուխտ Պարսիկ զօրավարի հետ, մեծ հարուած են տալի Պարսիկ-

1) Վասպուրականի գաւառներից մէկը, որ առի է սուրբ Թադէոս Առաքեալի վանքը:

ներին, ծերունի Հայրապետը վիրաւորուելով՝ մնում է գիւկաց մէջ և ապա աղատվում: Հազարաւուխտը վիրաւորուելով սաստիկ կտորածից՝ հետամուտ է լինում կալանաւորելու Վահանին խախտեաց սահմաններումը, վերջապէս Շապուհին Մարզպան է նշանակում Հայաստանի վերայ և ինքը Պերոզի հրամանաւ յարձակվում է Վրաստանի վերայ:

Ե. Հայերը մեծ քաջութեամբ պատերազմում են Շապուհի դէմ, և մեծ ջարդ են տալիս Պարսից, և Շապուհը Պերոզի սպանութեան գոյժը առնելով՝ գնում է Պարսկաստան, իսկ Հայերը շնորհակալութեան աղօթքներ են մատուցանում Աստուծոյն Էջմիածնայ եկեղեցումը, որը և նորոգում են Վահանայ և Մանգակունւոյ խնամակալութեամբ:

Այս պատերազմներից յետոյ Պարսից վերայ թագաւորում է Վաղարշը, որ Հայաստանի վերայ Նեխորին ուղարկում է Մարզպան, Վահանը նորան Ազգի կողմից դաշինքներ է առաջարկում:

Ա. Քրիստոնէական օրէնքը աղատ թողնել, Հայերից ոչ մէկին չճարձնել ՚ի մոգութիւն և ուրացութեան համար պատիւ չը տալ, Հայաստանի մէջ չը շինել կրակատուններ:

Բ. Հտոյց ազնուականները ու ազատները թողնել ըստ հայրենի օրինակին և ազգուրացները յառաջ չը տանել:

Գ. Քսու մարդոց խօսքով ոչ մէկին չը դատել, այլ արքայական Ատենի մէջ ամենքի գործը մի առ մի տեսնել, քննել և ապա վճռել:

Վահանը այս առաջարկութիւնից յետոյ պատանդներ է առնում և այնպէս ներկայանում Նեխորին, որ մեծ պատուով ընդունվում է: Եւ ապա Վահանը գնում է Վաղարշի մօտ և իւր առաջարկութիւնները հաստատել է տալիս և Սպարապետ կարգուելով Հտոյց զօրաց վերայ՝ դառնում է Հայաստան, և սուրբ Էջմիածնայ եկեղեցումը մաղթանք է

լինում, սակաւ ժամանակից լետոյ Վահանը կարգվում է Մարզպան, և ապա ծերունի Հայրապետի հետ միասին շինում է շատ վանքեր և եկեղեցիներ:

Մանգակունին վեց ամեայ կաթողիկոսութիւնից լետոյ վախճանվում է, որին յաջորդում է նորա աշակերտ Բաբկէն Վտնանգայ գաւառի Ոթմսոյ գիւղից 487 թուին, իսկ նորա միւս աշակերտ Շուփ հաղիշէ Աղուանից կաթողիկոս է ընտրվում, որ Վաչէի որդի Վաչական Հայկազուն թագաւորը եկեղեցական նորոգութիւն է անում և դպրոցներ բացանում, սորա ժամանակ գտնվում է Աղուանից առաջին Գրիգորիս կաթողիկոսի նշխարքը, ինչպէս ասում է Ստեփաննոս Օրբելեանը:

ԳՎ. ԼԱ.

ԲԱԲԿԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺՈՂՈՎ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՔԱՂ-  
ԿԵԳՈՆԵԱՆ ԺՈՂՈՎԸ ՄԵՐԺԵԼՈՒ.

Քաղկեդոնական ժողովը 40 տարի (451—491 թուականը) Յունաց և Հռովմէական եկեղեցեաց մէջ շատ խռովութիւններ գործելուց՝ մեծամեծ թշուառութեանց պատճառ եղաւ, և ապա սկսաւ մտնել Հայաստան:

Հայոց եկեղեցին նոր վարդապետութեան կարօտ չէր, նա բաւական էր իւր Առաքելական կանոններով և երեք տիեզերական ժողովներով, ուստի Բաբկէն կաթողիկոսը էջմիածին ժողովք է անում, ուր հրաւիրուած էին բացի Հայ եպիսկոպոսներից՝ Վրաց և Աղուանից եպիսկոպոսներ. այս ժողովի մէջ կարգացուեցաւ Ձենոն կայսեր հրովարտակը, որով արգելում էր քաղկեդոնականութիւնը: Ժողովը նոյնպէս մերժեց այն և սահմանեց, որ բաւականանան Առաքելոց

քարոզածներով և երեք տիեզերական ժողովների որոշումներով:

Մեր աչալուրջ հայրապետները իմանալով, որ մեր եկեղեցույ տեսականութիւնը և կեանքը իւր ինքնուրոյն գոյութեան մէջն է՝ միշտ մերժել են քաղկեդոնականութիւնը: Բաբկէն 5 ամեայ կաթողիկոսութիւնից լետոյ՝ մեռաւ և նորա տեղ ընտրուեցաւ Սամուէլը Բզնունեաց գաւառի Արծկէոյ գիւղից 492 թուին:

Սամուէլի կաթողիկոսութեան ժամանակ Պարսից Կաւատ թագաւորը շատ զօրք և մոզեր է ուղարկում Հայաստան, որ ամենայն տեղ շինեն կրակատուներ և ժողովրդին սովորցնեն կրակապաշտութիւնը—բայց Վահան Մարզպանը ժողովելով ուխտապահ նախարարներ հայաժողով է մոզերին Հայոց աշխարհից և աւերում է կրակատուները:

Կաւատ այս իմանալով՝ պատրաստվում է մեծ զօրքով գնալ Հայաստան աւերելու, բայց նա մեռնում է իւր իշխանների ձեռքով:

Սամուէլը տասն ամեայ կաթողիկոսութիւնից լետոյ մեռնում է 501 թուին, և յաջորդում է Մուշէ Կոտէից գաւառից 502, Մուշէին յաջորդում է Սահակ Բ. Հարք գաւառից, սորա հայրապետութեան ժամանակ մեռնում է Վահանը 25 տարի Հայաստանը կառավարելուց լետոյ, և նորա փոխանակ Մարզպան է կարգվում նորա Վարդ եղբայրը, որ մէկ տարիից լետոյ զրկվում է:

ԳԼ. ԼԲ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆՔ ՍԱՀԱԿ Բ. ՅԻՕ ԹՈՒՐՆ ԳՐԻՍ.  
ՏԱՓՈՐ Բ. ՂԵՒՈՆԻ և ՆԵՐՍԷՍ Բ. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ 524.

25.

Սահակից լետոյ ընտրվում է Գրիստափոր Բ. և ապա Ղևոնդ, որոնք ոչինչ չունեն գործած, սրանց յաջորդում է Ներսէս Բ-ը որ Գունայ մէջ ժողովք է անում եկեղեցական ներքին բարեկարգութեանց համար, ուր դտնվում էին բազմաթիւ անուանի եպիսկոպոսներ: Այս ժողովքի մէջ վերստին քաղկեդոնականութիւնը մերժում են և ՅՕ-ից աւելի կանոններ են սահմանում, որ մեծ մասամբ առած էին սուրբ Սահակայ կանոններից, թէ ինչպէս պիտի վարուին հոգևորականաց դասը ժողովրդոց հետ:

Ներսէսը իննամեայ կաթողիկոսութիւնից լետոյ վախճանվում է և նորա տեղը ընտրվում է Յովհաննէս Բ-ը 533, Իբրեղենից գաւառից: Սորա ժամանակը Դենշապուհ. Մարգալանը Գունայ մէջ բաց է անում կրակատուններ և Հայերին ստիպում է ընդունելու իւրեանց դէնը: Յովհաննէսը այս միջոցին վախճանում է 17 տարի կաթողիկոսութիւն անելուց լետոյ: Սորա տեղ ընտրվում է Մովսէս Արագածոտն գաւառի Եղիվարդ գիւղից 551: Սա սկսում է Հայոց տամարը կարգի դնել Գունայ ժողով գումարելով հմուտ հոգևորականներից: Այս ժողովքումը Հայոց թուականն են սահմանում, որ սկսվում է փրկչական 551 թուին, որ միշտ պիտի յիշեալ թիւը հանենք փրկչականից և մնացորդը կը լինի Հայոց թիւ: Մովսէս Հայրապետը Խոսրով Պարսից թագաւորին աղաչանաց թուղթ է գրում, որ թող տրուի Գրիստոնէական կրօնը ազատ պաշտելու, ինչպէս և Վաղարշը շնորհել է այդ իրաւունքը: Խոսրովը կատարում է Հայրապետի խնդիրը և Դենշապուհ Մարգալանին լետ կանչելով առ ժամանակ խաղաղութիւն է տիրում Հայոց աշխարհին:

Սակաւ ժամանակից լետոյ Հայաստանը ողբալի վիճակի է հասնում: Յունաց և Պարսից մէջ մեծ պատերազմն է սկսվում և Հայաստանը միմեանց ձեռքից կամենում են յափշտակել: Վարդան Բ. Մամիկոնեանը մի քանի տեղ պատերազմներում Պարսից զօրքը շարդում է Խոսրովը բարկանալով գալիս է Հայաստան մեծ զօրքով և սպառնում է, որ կը գրաւէ և Յունաց բաժինը, և այսպէս մեծ կոտորած է անում Տարօն:

Շուտով Պարսից մէջ խռովութիւն է լինում, Հայոց իշխանները մեծ զօրքով դնում են Խոսրով Բ-ին, և կրկին թագաւորացնում են Պարսից վերայ, որով և Հայաստանը գտնում է փոքր ինչ խաղաղութիւն այս միջոցին Սմբատ Բագրատունեայ Մարպանութեամբ:

ԳԼ. ԼԳ.

ԿԻՒՐԻՈՆ ԶԱԽԱԽԵՑԻ. ԳԱՂԿԵԳՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ.

26.

Մովսէսի Հայրապետութեան ժամանակը Վրաց մէջ սկսվում է խռովութիւն կաթողիկոսի ընտրութեան մասին. ուստի Վրաց ազգը Հայոց Մովսէս Հայրապետին առաջարկում են, որ նա ում որ ընտրէ և ձեռնադրէ կաթողիկոս իւրեանց վերայ՝ առանց ընդգրկմանալոյ պիտի և ընդունեն: Մովսէս ընտրում է և ձեռնադրում Կիւրիոն անունով մէկը Վրաց ազգից, որ ջաւախացի էր 580 թուին և քաջ գիտէր Հայոց, Յունաց, Պարսից և Վրաց լեզուներ:

Կիւրիոնը Վրաստան հասնելով Յունաց կայսեր երկկրից՝ իւր ազգին Գաղկեդոնականութիւն է քարոզում: Կիւրիոնը ունէր Յուրտաւ քաղաքի վերայ ձեռնադրած մի եպիսկոպոս Մովսէս անունով, որ չը համակրելով Կիւրիոնի քա-

րողութեանը և նորա վարդապետած քաղքեղոնականութեանը գրով իմաց է տալիս Հայոց Վրթանէս վարդապետին, որ Մովսէս Եղիվարդացւոյ օգնական էր նորա կենդանութեան ժամանակը, և զկնի նորա մահուան նորա գործքերն էր կատարում իբրև տեղապահ:

Հայոց Ազգը Մովսէսից յետոյ ընտրում է կաթողիկոս Ռշտունեանց Աբրահամ եպիսկոպոսին 594, որոյ մօտ փախչելով Յուստաւայ Մովսէս եպիսկոպոսը Կիւրիոնի արարքներն է պատմում:

Աբրահամը Կիւրիոնին գրում է, որ Հայոց ու Վրաց դարաւոր սէրն ու միութիւնը չը քանդէ, և թողնէ քաղկեդոնականութիւնը, իւր նա փոխանակ Աբրահամին լսելու, անարգական պատասխաններ է գրում: Աբրահամը նորան և նորա հետևողներին մերժում է Հայաստանեայց եկեղեցւոյ հաղորդակցութիւնից ժողովով:

Կիւրիոնը բողոքում է Յունաց Մօրիկ կայսեր, սա Կոստանդնուպոլսոյ մէջ ժողովք է գումարում Յոյն և Հայ եպիսկոպոսներից, որոց մէջն էր Վրթանէս Աթոռակալը: Մի քանի եպիսկոպոսներ լկայսեր ահից ընդունեցին Քաղկեդոնականութիւնը և շատերն ևս ընդգիծանալով դարձան Հայաստան:

Մօրիկ Յունաց կայսրը բարկանալով այս բանի վերայ Յունաց բաժնի վերայ կարգեց կաթողիկոս Յովհաննէս անունով մէկը, որով մեծ խռովութիւններ պատճառեց Ազգի մէջ:

Այս միջոցին Յունաց և Պարսից մէջ շատ կոտորածներ են լինում, Պարսիկները Երուսաղէմը առնում են և խաչափայտը գերի տանում Պարսկաստան, Չաքարիա Պատրիարքը 30,000 մարդով նմանապէս գերվում, Տարօնը նոյնպէս տակն ու վրայ է լինում, նոցանից եօթը խոտաճարակները սպանվում են, որ Յունաստանից եկել էին Գլակայ վանքը և ճգնաւորական կեանք էին վարում:

Յունաց բաժնի Յովհաննէս Հայրապետը մեռնում է և տեղը ոչ ոք չէ յաջորդում, քիչ ժամանակից յետոյ մեռնում է և Աբրահամը, որ շատ սրտով կամենում էր Վրաց, Հայոց և Աղուանից դարաւոր սէրը նորոգել կրկին, բայց տարաբաղտաբար Վրացիքը չը կարողացան Աղուանից աշխարհից առնել մտերմութեան օրինակը:

ԳԼ. ԼԳ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՍՆՔ—ԿՈՄԻՏԱՍ. ՔՐԻՍՏԱՓՈՐ Գ. և ԵԶԲ.

Աբրահամի տեղ Ազգը ընտրում է Հայրապետ Գլակայ Վանքի առաջնորդ Կոմիտասին 616 թուին, որ սկսում է նորոգել Հռիփսիմեանց վկայարանը, ուր գտնելով նոցա նըշխտրքը կնքած սուրբ Գրիգոր Լուսաւորչի և սուրբ Սահակոյ Մատանիքով տապանի մէջ, ինքն ևս առանց բանալու կնքում է և երգում զեղեցիկ շարական Առջին: Կոմիտասը եկեղեցական զանազան բարեկարգութիւններ անելով 7 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ մեռնում է, և նորա տեղը ընտրվում է Քրիստափոր Գ-ը. որ 3 տարից յետոյ հրաժարուելով կրօնաւորական կեանք է վարում:

Քրիստափորին յաջորդում է 628 Եզր, որ կաթողիկոսարանի մէջն էր սնուած, և սուրբ Գրիգոր եկեղեցւոյ փակակալն էր:

Յունաց Հերակլ կայսր Պարսից Խոռեմ թագաւորի հետ հաշտուելուց յետոյ, և խաչափայտը ստանալով՝ գնում է Կարին և հրամայում է գաւառական ժողով գումարել Յունաց և Հայոց եպիսկոպոսներից առանց բոլոր Ազգի մասնակցութեան, ուր հրաւիրում է և Եզրին:

Սա թագաւորի սպառնալիքից վախենալով իշխանաց կամօք Մաթուսաղտոյ Վարդապետից Հայոց դաւանութեան

գիրք վեր առնելով՝ գնում է Կարին մի քանի եպիսկոպոսներով և վարդապետներով:

629 թուին ժողով է լինում, ուր կարգում են Հայոց և Յունաց Գաւանագիրք: Եզր մի քանի առաջարկութիւններ է անում, բայց Հերակլ կայսրը չէ ընդունում, և պարզապէս խոստանում է Եզրին պատիւ և պարգև: Եզրը զիջանում է և ընդունում Քաղկեդոնականութիւնը: Կայսր նորան պարգևում է Կողբ գիւղաքաղաքը: Եզրի թուլամտութիւնը և ագահութիւնը պատճառ եղաւ, որ Ազգչ նորան կաթողիկոսաց շարքից դուրս հանեց, և Ազգը մնալով իւր նախնի սովորութեանց և ծիսից մէջ հաստատ ցոյց տուաւ, որ մի կաթողիկոս անգամ չ'ունի իրաւունք ընդհանուրի կողմից որ և իցէ Ազգի հետ միութեան յօժարութիւն ցոյց տալու, որովհետև Հայոց եկեղեցին մի անձնաւորութեան մէջ չէ փակուած, այլ ընդհանուրի, և մեր հայրապետները ընդհանուրի աւանդապահներն են, և քանի հաստատ են իւրեանց կոչման մէջ՝ այնքան բարձր և սուրբ ընդհանուրի համար:

Եզր Գուին գալով ժողովք է անում իւր նոր ընդունած քաղկեդոնականութիւնը ժողովրդեան մէջ սերմանելու, բայց ժողովրդեան մէջ տարածայնութիւն է ծագում:

Սուրբ Գրիգոր եկեղեցւոյ փակակալ Յովհաննէս վարդապետը Եզրին յայտնապէս ընդդիմութիւն է ցոյց տալու:

Եզրը հրամայում է ծեծել նորան և աքսորել Մայր վանքը, բայց քիչ ժամանակից յետոյ այն տեղիցն ևս աքսորում է Աղուանք, և ՚ի նախատինս նորա վանքը կոչում է Մայրազամ իսկ վարդապետին Մայրագոմեցի:

Եզրը Գունայ մէջ է նեղում Հայերին, իսկ Յոյները Յունաց բաժնի մէջ, որոնք ստիպում են Հայերին բաժակի մէջ շուր խառնելու, ծննդեան և մկրտութեան նախնական կարգը փոխելու, սուրբ Աստուածը առանց խաչեցարի երգելու, ստիպմունքը Յունաց կողմիցն այն աստիճան է լի-

նում, որ Քաղկեդոնականութիւն ընդունողները՝ կրկին մերժում են և իւրեանց եկեղեցւոյ գիրկը ընկնում:

Գլ. 16.

640—1080 ընդմիջում.

ԱՐՇԱՒԱՆԻ ԱՐԱՐԱՒԱՅ. ՆԵՐՍԵՍ ԵՒՆՈՂ.

Եզր Կաթողիկոսի շնորհիւ Հայաստանի ժողովուրդը մեծ խռովութեան մէջն էր Քաղկեդոնականութեան պատճառաւ, որից Արաբացիք օգուտ քաղելով արշաւում են Տարօն, և բազմաթիւ Հայեր են կոտորում, այս աղէտալի դրութեանը Վահան կամսարականն է հայրական պարտք կատարում, որ անօրինաց կարողացաւ դիմադրութիւն ցոյց տալ: Տարօնից գնում են Գուին և գրաւում են կաթողիկոսարանը և 12,000 հազար մարդ սպանում են և 35,000 տանում են գերի Արաբիա:

Այս ժամանակ Եզրը վախճանած էր և նորա տեղ ընտրվում է Ներսէս եպիսկոպոսը Թէոգորոս Ռշտունւոյ և նախարարների խնդրանք 640: Ներսէս Հայրապետը անկեւոյց դիակները, որ դեռ մնացած էին անթաղ՝ ողբով սկսում է բողոքել, և ապա աւերուած տաճարներն է նորոգում Վաղարշապատ և Արտաշատ քաղաքներումը, որոց համար ասուեցաւ Եփնոզ:

645 թուին Ներսէսը Գունայ մէջ ժողովք է գումարում, ուր ներկայ են լինում 70 եպիսկոպոսներ և շատ եկեղեցականներ և իշխաններ:

Ժողովը մերժում է Քաղկեդոնականութիւնը և խմբազրվում է եկեղեցական պարտուց համար կանոններ, այս միջոցումը շարականաց ընտրութիւն է լինում ճոն Բարսեւեանօք:

28

ԱՐՇԱՒԱՆՔ ՀԱԳԱՐԱՅԻՈՑ. ՅՈՒՆԱՅ ԿՈՍՏԱՆԳԻՆ

ԿԱՅՍՐ ՇԱՏ ԶՈՐԲՈՎ Դ ՀԱՅԱՍՏԱՆ.

Ներսէսը այն ինչ սկսել էր ներքին բարեկարգութիւնով զբաղել, սփոփել իւր տխուր ժողովուրդը և ամրապնդել նորան իւրեանց եկեղեցական ծիսից և արարողութեանց մէջ, և ահա, Հագարացիք կրկին մեծ բազմութեամբ յարձակվում են Հայաստանի վերայ: Հայերը խոստանում են հպատակել՝ եթէ միայն իրանց ազատ կ'իթողնեն իւրեանց սուրբ կրօնը պաշտելու. Հագարացիք Հայոց այս խնդրանաց զիջանելով՝ վերադառնում են:

Այս համբաւը իմանալով Յունաց կայսրը բազմաթիւ զօրքով գալիս է Հայաստան ջնջելու բոլոր Ազգը: Հայերը կոտորածից ազատուելու նպատակաւ խոստանում են մտերմութիւն, բայց Կոստանդինը Հայոց նեղ վիճակից շահուել ուզելով՝ իրան հետ բերած քահանայից հրամայում է պատարագել և Ներսէս Երնողին ստիպում է Յունաց ծիսով հաղորդել: Հայրապետը ակամայ հնազանդվում է, բայց եպիսկոպոսներից մէկը չէ հնազանդվում, ասելով, որ կաթողիկոսն ևս ակամայ է հաւանութիւն ցոյց տուել, որովհետև Քաղկեդոնականութիւնը նա ինքը ժողովով մերժել է:

Ամիրապետը իմանալով Հայոց մտերմութեան համբաւը Յունաց հետ 1775 պատանդներին կոտորել է տալիս: Կոստանդին Կայսր իւր Գրիստոնէական պարտականութիւնը չը հանաչելով՝ Հագարացիներից աւելի է նեղացնում Հայերին, որոնք իրան խոստացել էին մտերիմ կերպիւ ծառայելու: Նա Հայաստանում թողնում է շատ զօրք, որ Հայերին Յունաց ծեսերին վարժեցնեն: Հայերը մեծ զգուանքով էին այլում Յոյն վերահայրեններին, որոնք և Կայսրը բողոքեցին Կայսրը սպառնալից հրովարտակ է գրում Հայրապետին

և նախարարներին, որոց պատճառաւ ժողովք է լինում կրկին, ուր միաբան գրում են կայսեր, որ սչ մի վարդապետութիւն չեն կամենում սովորել և հաւատալ, բացի Թագէոս և Բարդուղիմէոս, սուրբ Գրիգոր Լուսաւորչի և թարգմանչաց շնորհած հաւատոյ ուսմունքը, և խնդրում են Կայսեր, որ ազատ թողնէ Հայ ժողովուրդը իւր դաւանութեան մէջ, ինչպէս Պարսից Կաւատ և Խոսրով թագաւորները ազատ են թողել:

Յունաց վերակացունները այսպիսի աղաչանաց թղթից յետոյ առաւել նեղացնում են Հայերին:

Ներսէսը հրաժարվում է Հայրապետութիւնից թողնելով իւր տեղը Յովհաննէս Մանազկերտացին, որ Մանազկերտ ժողով գումարելով՝ պատուիրում է Հայոց անփոփոխ պահպանել իւրեանց սովորութիւնները:

ՎԱՐԱԳՅ ՍՈՒՐԲ ԽԱԶՐ, ՄԱՀ ՆԵՐՍԻՍԻ, ԱՆԱՍՏԱՍ ԱՐԿՈՒՌԵՑԻ Ե ԻՍՐԱՅԷԼ ՎԱՆԱՆԳԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆՔ.

Վեց ամեայ հրաժարումից յետոյ Ներսէսը կրկին դառնում է և իւր Հայրապետութիւնն է շարունակում: Թողիկ ճգնաւորը Վարագայ լերան վերայ լուսեղէն նմանութեամբ տեսնելով սուրբ Խաչը, որ Հռիփսիմեանք էին ծածկել հալածանաց ժամանակը, այս պատճառաւ Ներսէս Հայրապետը սահմանեց աս Վարագայ սուրբ Խաչի:

Ներսէսը 661 թուին վախճանվում է, յաջորդելով նորան Անաստաս Արկուռի գիւղից, սա շինում է հիւրանոցներ և մենաստաններ և Հայոց, Տոմարը յանձնում է Անանիա Երրակացւոյն կատարելագործելու, բայց գեռ չը վերջացած

գործը մեռնում է, որին յաջորդում է Իսրայել Վանանդե-  
ցին, որ միայն 10 տարի վարեց իւր իշխանութիւնը 667:

ԳԼ. ԼԸ.

ՍԱՀԱԿ Գ. ԶՈՐԱՓՈՐԵՅԻ Լ ԳԵՐՈՒԹԻՒՆ Դ ԴՍՄԱՍԿՈՍ

677 Ընդհանրապէս:

Իսրայելից յետոյ կաթողիկոսանում է Սահակ Գ. Զորա-  
փորեցին, որոյ ժամանակ Հայաստանը Յունաց Յուս-  
տիանոս Բ. կայսրը ուղարկում է մեծ զօրք, որոնք աւե-  
րում են 25 գաւառներ և 8,000 տուն գերի են առնում  
և օտարների վերայ վաճառում: Այս ժամանակ Հագարա-  
ցոց Մոհամադին Հայերը հպատակութիւն են ցոյց տալիս,  
որ ազատ մնան նորա մեծամեծ հարուածներից:

Հայոց այս հպատակութիւնը գայրացնելով Յուստիանո-  
սին՝ բազմաթիւ զօրքով Հայաստան է գալիս և Սահակ կա-  
թողիկոսին հինգ եպիսկոպոսներով կալանաւորում է, և ա-  
պա արձակում և խստիւ հրամաններ տալով՝ վերցնում է  
պատանդներ և գնում Պոլիս: Արաբիայի ամիրապետը՝ իմա-  
նալով, որ Հայերը նորից հպատակել են Յունաց՝ ուղարկում է  
Հայաստան Աբդլլա զօրավարին, որ շատերին գերում է և  
Սահակ կաթողիկոսին ևս շղթայակապ առնելով՝ Դամասկոս  
է ուղարկում:

ԳԼ. ԼԹ.

ՄԱՀ ՍԱՀԱԿԱՅ, ՄՈՀՄԱԿ ՈԳԲԱՅ, ԿԱՇՄ ՈՍՏԻԿԱՆ.

29

Աբդլլայից յետոյ ամիրապետը ուղարկում է Հայաստան  
Ոգբային, որ խապաւ ջնջէ Հայոց ազգը: Սահակ կաթողիկո-  
սը Դամասկոսի մէջ կալանաւորուած լինելով՝ և այս գոյժը  
իմանալով՝ գնում է Մոհամադին տեսութիւն, բայց ճանա-  
պարհին ծանր հիւանդանալով՝ մեռնում է: Հիւանդութեան  
ժամանակ Հայրապետը Մոհամադի վերայ աղաչանաց թուղթ  
է գրում, և խնդրում է, որ իւր ձեռքը գնեն այն թուղ-  
թը Մոհամադ Ոգբայի գալու ժամանակը:

Մոհամադը կաթողիկոսի մահը լսելով՝ գալիս է տեսու-  
թիւն և ողջունելուց յետոյ՝ թուղթը առնում է ձեռքից և  
Ամիրապետի հրամանը Հայոց ազգը ջնջելու մասին թուղ-  
նում է անկատար: Սահակին եղիա Արճիշեցին է յաջոր-  
դում 704 թուին: Սորա ժամանակ Կաշմ ոստիկանը նախա-  
րարներին խորամանկութեամբ ժողովում է նախիջևանի ե-  
կեղեցին, որպէս զի խաղաղութեան դաշն կապէ, բայց յե-  
տոյ եկեղեցին հրդեհելով այրում է բոլորին:

Կաշմը այս տեղից գնում է Դուին և շատ աւերներ և  
նահատակութիւններ պատճառելուց յետոյ շատերին ևս գե-  
րի առնելով՝ յետ է գնում:

Այնուհետև Հագարացիք Օմարի ամիրապետութեան  
ժամանակը բոլորովին տիրում են Հայաստանին և ոստիկան-  
ներն են կառավարում:

Բոլոր գերիները և պատանդները գառնում են Արա-  
բիայից Հայաստան, որոց հետն էր Վահան Գողթնացին,  
Գողթան գաւառի Խոսրովի որդին, որին տաճկացրել էին  
աղայութեան հասակում, բայց նա կռիւն իւր քրիստոնէու-  
թիւն է պաշտում, որոյ պատճառաւ կանչվում է Ամիրա-  
պետից և Ռուծափ քաղաքումը գլխատվում է:

30. ՅՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԵՐ, ՎԼԻԹ ՈՍՏԻԿԱՆ, ԴԱԻԻԹ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ 718 ԹՈՒԻՆ.

Երբ Յովհան իմաստասէրը Եղիա կաթողիկոսին 718 թուին յաջորդում է, նորա առաջին գործն է լինում զանազան աղանդներ, որոնք Քաղկեդոնականաց շնորհիւ մտել էին՝ հեռացնէ, որ արտաքին հալածանքից առաւել վնասակար էին: Ուստի իւր հայրապետութեան երկրորդ տարին ժողով է գումարում Գուլին, ուր եկեղեցւոյ վիճակի վերայ խօսելով քաջ ատենաբանութեամբ առաջարկում է 32 կանոններ, և մերժում է Քաղկեդոնիկութիւնը, որ Յունաց բաժնի Հայերի մէջ՝ տեղ տեղ արդէն մուտն էր գործել:

Վրիթ ոստիկանը Յովհաննէս իմաստասէրին շատ էր յարգում, որ և գնալով Ամիրապետի մօտ՝ սկսում է ջատագովել, որին և Ամիրապետը ցանկանալով տեսնել՝ կանչում է իւր մօտ: Եւ մօտիկ ծանօթանալով նորա բնաւորութեան և կեանքի հետ մեծ պարզեւներով արձակուելուց յետոյ՝ խոստանում է Հայաստանը անդորր վիճակի մէջ պահպանել:

Յովհաննէս իմաստասէրը 11 տարի Հայրապետութիւն անելուց յետոյ՝ վախճանում է 729 թնւականին: Սորան յաջորդում է Իաւիթ Ա. Կոտեից գաւառի Արամոնս գիւղից, որ Մոհմադ ոստիկանից նեղ վիճակի մէջ ընկնելով՝ առանձնանում է իւր գիւղը և շինում է հօյակապ եկեղեցի և քիչ ժամանակից յետոյ կրկին վերադառնում է Գուլին և 12 տարի կաթողիկոսական պաշտօն վարելուց յետոյ մեռնում է:

31. ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒՆՔ ՏՐԳԱՏ Ա. ՎԱՆԱՆԳԵՅԻ, ՏՐԳԱՏ Բ. ԴԱՍՆԱԻՈՐԵՅԻ, ՍԻՕՆ Լ ԵՍՍՅԻ 741 ԹՈՒԻՆ.

Իաւթին յաջորդում է Տրգատ Ա. Վանանդ գաւառի Ոթմսոյ գիւղից սորա կաթողիկոսութեան ժամանակ Հագարացիք շատ են նեղացնում Հայերին: Վերցնում են եկեղեցեաց խաչերը, հրամայում են կնքել գանձատուները և սուրբ սպասները վաճառել, ուսումն սուրբ գրոց խափանել, և ՚ի նշան ստրկութեան իւրաքանչիւր անձը կախում է պարանոցից կապարեայ կնիքը:

Այսպիսի անգթութիւնները լինում են Աբգղազիցի և Եգիտի ոստիկանութեան ժամանակը, որ և հայրապետը նախարարաց հետ միասին բողոքում են Ամիրապետին, բայց օգնութիւն չեն ստանում, որպիսի Հայոց նեղ վիճակը պատճառ է լինում Հայրապետի մահուանը:

Տրգատ Ա. Վանանդեցւոյն յաջորդում է Տրգատ Բ. գասնաւորեցի, սրոյ գործերը կառավարում է Սիօն Եպիսկոպոսը, որ գտնվում էր կաթողիկոսարանումը, որ շատ հմուտ և առաքինի անձն էր, որ և զկնի մահուան Տրգատայ Բ-ի 767 թուին կաթողիկոս է ընտրվում և ձեռնադրվում ՚ի Գուլին:

Սիօն Հայրապետը Աղուանից Պարտաւ քաղաքում ժողովք է գումարում, ուր ներկայ էին շատ անուանի եպիսկոպոսներ և նախարարներ, և 24 կանոններն են գրում, և նոյնպէս որոշում են սուրբ գրոց ընթերցանելի գրքեր.

Հագարացիք կրկին նեղացնում են Հայերին, նոքա կոտորում են 700 հոգի և 1200 գերի են տանում, որպիսի աղէտալի վիճակը Հայաստանի չը կարողանալով տանել Սիօնը վախճանում է, որին յաջորդում է Եսային Նիգ գաւառի Եղիպատրուշ գիւղից 772 թուին:

Եսայուն իւր մայրն մանուկ հասակին սնուցանում էր Իունայ կաթողիկոսարանի դրանը բացօթեայ՝ տառապանաց վարժեցնելով մանուկ հասակից, որ և յիրաւի շատ տանջանքներ կրեց: Սորա Հայրապետութեան ժամանակը Հարոն Ամիրայետի հրամանաւ՝ Եղիտ ոստիկանը հաւատը ուրանալու համար սաստիկ տանջանքներ է տալիս Արծրունեաց իշխաններին— Համազասպին, Սահակին և Մեհրուժանին, որոնցից Մեհրուժանն է տկարանում իւր հաւատոյ մէջ, իսկ երկու առաջինները գլխատվում են: Նոյնպէս Բագուան գիւղումը մորթում են քառասունից՝ աւելի քահանաներ և կրօնաւորներ: Այսպիսի անգթութեանց վերաբերութեամբ նախարարները Հայրապետի հետ բողոքում են Ամիրայետին, բայց ոչինչով չեն օգտվում:

Հայրապետը չը կարողանալով այլ ևս տանել մեծամեծ տառապանքներ մեռնում է: Հագարացի իշխանը իսկոյն եկեղեցական ստացուածքն ու սպասներն ենթարկում է քրննութեան: Կանչում է եկեղեցականներին և սաստում է, որ բան չը ծածկեն:

Բոլոր ոսկեղէն և արծաթեղէն անօթները թանկագին զգեստները և թագաւորաց հանդերձները, որոնք գանձարանի մէջն էին պահուած բոլորը յափշտակում է Հագարացի իշխանը, իսկ մնացեալ աննշան իրերը՝ ի պահեստի է դնում:

†

ԳԼ ԽԲ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆՔ—ՍՏԵՓԱՆՆՈՍ Ա. ՅՈՎԱԲ ԿԱՄ ՅՈՒԲ. ՍՈՂՈՄՈՆ ԳԱՌՆԵՑԻ, ԳԷՈՐԳ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ, ՅՈՎՍԷՓ Գ.

32 788 թուին՝ Եսային յաջորդում են Ստեփաննոս Ա. Իունեցի, Յովաբ կամ Յոր, Սողոմոն Գառնեցի ծերութեան հասակի մէջ, որ միայն ցանկանում էր նկարուել կաթողիկոսաց կարգում, Գէորգ Աշտարակեցին կամ Օշկան գիւղից, և ապա Յովէֆ Գ. Արագածոտն գաւառից:

Սորա Հայրապետութեան ժամանակը Խուզիմայ ոստիկանը աշխատում է յափշտակել եկեղեցական կալուածներ, բայց կաթողիկոսը սաստիկ ընդդիմանում է: Ոստիկանը գին է առաջարկում, բայց Հայրապետը ասում է, որ իրաւունք չը կայ ծախելու մանաւանդ, որ մեծ մասը ժողովուրդն է կտակել մշտական պահպանութեան համար:

Ոստիկանը վիրաւորուելով՝ իւր ծառաններից մէկին սպանել է տալիս և մեղքը Իունեցւոց վերայ դնելով՝ կաթողիկոսն ու շատ մարդիկ կապանքների մատնելով բանտն է դնում, և ի գին արեան կալուածներն է պահանջում, բայց Հայրապետը դարձեալ չէ համոզվում տալու, վերջապէս Ոստիկանը վախենալով, որ Ամիրայետին առաջը չ'ամբաստանուի՝ արձակում է բանտից Հայրապետին և ժողովրդոց՝ բռնի կերպիւ յափշտակելով Արտաշատ ականը: Վերջը Հագարայետին սաստիկ վիրաւորելու նպատակաւ սպանել է տալիս նորա եղբօրը և ծովը ձգել տալի, որոյ համար վշտաւարով Յովսէփ կաթողիկոսը հիւանդանում է և 11 տարի Հայրապետութիւն անելուց յետոյ մեռնում է:

†

III 7. 4/5 1/2

ԳԼ. ԽԳ.

ԴԱԻԻԹ Բ, ԿԱԿԱՂԵՅԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ Ե. ՈՎԱՅԵՅԻ Լ  
ԲՈՒԽԱՅ ՈՍՏԻԿԱՆ.

ՏՕԵ թուին Յովսէփին յաջորդում է Դաւիթ Բ. Կակա-  
ղեցին, որը 27 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ վախճա-  
նում է և նորան յաջորդում է Յովհաննէս Ե. Ովայեցի Կո-  
տայից զաւառից Բագարատ Բագրատունւոյ վերակացութեան  
ժամանակը: Որին մի քանի չարամիտ մարդիկ զրպատում  
են Բագարատի առաջ, որոց և հաւատ է ընծայում. ուստի  
և Հայրապետը ինքնին հրաժարվում է աթոռից, բայց երբ  
զրպարտողաց մեղադրանքները քննութիւնից սուտ են գուրս  
գալիս՝ Ազգը կրկին հրաւիրում է իւր աթոռը:

Սորա Հայրապետութեան ժամանակը Ամիրապետը ու-  
ղարկում է Հայաստան Բուխայ բռնաւորին մեծ զօրքով, որ  
Հայ իշխանները կալանաւորէ և իրեն ուղարկէ, քաջ երի-  
տասարդները դարձնէ մահմեդականութեան, իսկ միւսները  
սրամահ առնէ:

Տ50 թուականին Բուխայ բռնաւորը մտնում է Հայաս-  
տանի Սասունի և Տարօնի գաւառները աւերելու, ուրիշ  
նախարարականց հետ ուղարկում է Ամիրապետին Բագրատի  
Աշոտ և Դաւիթ որդիքը ու զերգասառնը. Արծրունեաց  
Աշոտ իշխանի կին ու որդիքը, իսկ Վասպուրական Նահան-  
գին, ինչպէս և Տարօնոյ՝ մեծ տառապանքներ է հասուցա-  
նում և շատերին ստիպում յուրացութիւն: Սոյն վիճակի  
ենթարկվում են Արարատեան աշխարհը, Ուտի, Աղուանք  
և Դուլինը: Բուխայ արիւնարբու բռնաւորը մեծամեծ ան-  
գթութիւններ անելուց յետոյ՝ շատ մարդիկ կալանաւորուած  
ուղարկում է Ամիրապետին, որտեղ շատերը մարտիրոսանում  
են, հաւատը չ'ուրանալու համար, որոնցից երևելի են Ստե-  
փաննոս Կոն և Սմբատ, որ երկար ժամանակ բանտի մէջ

մնալով՝ վախճանվում է, որ և կոչուեցաւ Խոստովանող,  
որոյ Աշոտ որդուց սկսվում է սակաւ ժամանակից յետոյ  
Բագրատունեաց թագաւորութիւնը:

Յովհաննէս կաթողիկոսը Բուխայի անգթութեանց պատ-  
ճառաւ թողել էր իւր աթոռանիստ Դուլինը և գաւառների  
մէջն էր շրջում ժողովրդոց մխիթարելու, որ և իւր սոյն  
օրինակ ճանապարհորդութեանց ժամանակ ակարանալով Գե-  
ղարքունւոյ Մաքինոցաց մենաստանումը 22 ամեայ կաթո-  
ղիկոսութիւնից յետոյ՝ մեռնում է:

ԳԼ. ԽԳ.

ԴԱՐՁ ԳԵՐԵԱԼ ՆԱԽԱՐԱՐԱՅ.—ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

ՉԱՔԱՐԻԱՅԻ 855 ԹՈՒԻՆ,

Չաքարիայի կաթողիկոսութեան եօթներորդ տարին  
(862) գերուած նախարարները վերագառնում են Հայաս-  
տան և Սմբատ Խոստովանողի որդու Աշոտի իշխանաց իշ-  
խան կարգուած ժամանակը: Հայերը սկսում են իւրեանց  
կրօնը ազատօրէն պաշտել: Բայց այս միջոցին Կ. Պօլսոյ  
Յունաց Փոռ պատրիարքը սկսում է նեղել այն Հայերին,  
որոնք գտանվում էին Յունական բաժնի մէջ, սորա համար  
Չաքարիայ կաթողիկոսը թուղթ է գրում Փոռին ասելով,  
թէ Հայերը հետևում են միայն երեք նախկին տիեզերական  
ժողովին և սուրբ Իրիգոր Լուսաւորչին: Այս բանի վերայ  
Փոռը երկու պատասխանական թուղթ է գրում, մէկը Աշոտ  
իշխանին, իսկ միւսը Չաքարիայ կաթողիկոսին, որով գո-  
վում է Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելական աւանդա-  
պահութիւնը և յորդորում է նոցա, որ Հայերը միանան  
Յունաց հետ: Այս թղթի պատճառաւ Չաքարիայ կաթողի-  
կոսը Երրակաւանի մէջ ժողով է գումարում (862), որտեղ

և ներկայ է լինում Ասորի նանա սարկաւարքը, որ իւր ժամանակակից հմուտ մարդկերանցից մէկն էր համարվում: Այս ժողովը մի տեսակ ստիպողական պատկեր է ներկայացնում Յունաց կողմից, որովհետև Փոսի թղթեր բերող Նիկիոյ Վահան Յոյն եպիսկոպոսը ժողովի մէջ երկար առենաբանութիւն է անում Քրիստոսի մարդեղութեան խորհրդոյ վերայ և կանոններ է առաջարկում Հայոց: Ժողովի վերջը Վահան եպիսկոպոսը կարծելով թէ Հայերը արդէն միաբանել են Յունաց հետ՝ վերադառնում է Կ. Պօլիս:

Բայց այս ժողովի լուրը մեծ խռովութեան պատճառ է տալիս Հայոց: Տայոց Սահակ եպիսկոպոսը Աշոտ իշխանի կողմից Փոսին թուղթ է գրում, նույնպէս և Զաքարիայ կաթողիկոսը Վահան եպիսկոպոսին ծննդեան տօնի կատարման ժամանակի համար: Զաքարիան իւր 21 ամեայ կաթողիկոսութեան ժամանակ աշխատում է Հայոց Ազգը անգործութեան մէջ պահել, բայց փոքր ժամանակից լետոյ վախճանում է:

ԳԼ. ԽԵ.

ԳԵՈՐԳ ԳԱՌՆԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԱՓՇԻՆ ՈՍՏԻԿԱՆ.

Զաքարիային յաջորդում է Գեորգ Գառնեցին 876 թուին. սորա կաթողիկոսութեան ժամանակ Աշոտին թագաւոր են օծում Անի քաղաքի մէջ 885 թ, Գեորգի ձեռամբ: Այս թագաւորութիւնը հազիւ տևում է 200 տարի:

Այս ժամանակները Սմբատ Ա. թագաւորի, Աբաս սպարապետի (որ կամենում էր թագաւորական իշխանութիւնը յափշտակել) և կուսակցութեան բաժանուած նախարարների մէջ սաստիկ դժգոհութիւն է ծագում և Գեորգ կաթողիկոսը իբրև հաշտարար մէջ է մտնում: Բայց Աբաս սպարա-

պետը Հայրապետի դէմ սուտ զրպատութիւններ անելով՝ մատնում է նորան. և եպիսկոպոսներին զոգրելով՝ կաթողիկոսութիւնը Նղիվարդեցի Մաշտոց վարդապետին է խոստանում, եթէ իրեն համակից կը լինի, բայց վարդապետից յանդիմանական պատասխաններ ստանալով՝ հաշտվում է Գեորգի հետ: Գեորգ կաթողիկոսը աշխատում է Սմբատ թագաւորի և Ատրպատականի Ափշին Ոստիկանի մէջ եղած խռովութիւնը ջնջել, բայց Ոստիկանը շղթայակապ երկու ամիս տառապանքի մէջն է ձգում Հայրապետին, լետոյ ոստիկանը կամենում է Հայրապետին շղթայակապ Ատրպատական ուղարկել, բայց հայ-նախարարները և իշխանները ոսկի և արծաթ տալով ազատում են: Հայաստանի մէջ ներքին խռովութիւններ են ծագում և սորանից օգուտ քաղելով Ափշին ոստիկանը մի յարմար ժամանակին մտնում է Հայաստան և մի քանի գաւառներում ահագին կոտորածներ է անում, և Հայրապետը սրտի ցաւից Վասպուրական է առանձնանում և այնտեղ վախճանում (897) թուին իւր 21 ամեայ կաթողիկոսութիւնից լետոյ, նորան թաղում են Զորոյ Վանքի մէջ: Գեորգին յաջորդում է Մաշտոց Բ. փոքր ժամանակից լետոյ վախճանում է, և թաղում են Գառնի գիւղաքաղաքի մէջ:

ԳԼ. ԽԶ.

ՅՈՎՀԱՆՆԵՍ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ—ՅՈՒՍՈՒՓ ՈՍՏԻԿԱՆ.

Մաշտոցին յաջորդում է Յովհաննէս Զ. 897 թուին. Սա որպէս պատմաբան գրել է իւր ժամանակի բոլոր անցքերը և տառապանքները, որ կրել էր Հայաստանեայց եկեղեցին: Յովհաննէսը ներհակ էր քաղկեդոնութեան: Յովհաննէս իբրև հաշտարար աշխատում է բնաշինջ անել թա-

գաւորի, նախարարաց և ազգի մեջ եղած խռովութիւնները: Գնում է մեծամեծ ընծաներով Ատրպատկանի Յուսուփ ոստիկանի մօտ և խնդրում է նորան, որ խաղաղութեան դաշն հաստատի Սմբատ թագաւորի և նախարարաց հետ: Նորան Ոստիկանը նախ՝ սիրով է ընդունում և ապա կալանաւորում է և բանտարկում: Յուսուփը բազմաթիւ զօրքով Հայաստան է գալիս կաթողիկոսին էլ իւր հետ կալանաւորած բերում, յարձակվում է նախ Սիւնեաց աշխարհի վերայ, և Զատիկի տօնին բազմաթիւ կոտորած է անում 909 թուին: և ապա գնալով Գուին Երասխի ափերի մօտ բանակ է ձգում: Յուսուփը յարձակվում է Սմբատի վերայ և չը կարողանալով նորան բռնել՝ ամբողջ ամառը աւերում է Հայաստանը: Ոստիկանը կաթողիկոսից օսկի և արծաթ է խնդրում ազատելու համար և կաթողիկոսը արձակվելով ոստիկանից պահապանների հսկողութեամբ փող է ժողովում նորա համար:

Յաջող միջոց գտնելով կաթողիկոսը՝ փախչում է Աղուանից երկիրը Սահակ իշխանի և Ատրներսէհ թագաւորի մօտ և ապա այն տեղից գնում և բնակվում է Գուգարաց աշխարհում: Յուսուփը միանալով Վասպուրականի Գագիկ Արծրունի թագաւորի հետ՝ աշխատում է Սմբատին կալանաւորել կամ սպանել: Եւ իսկ այդ ժամանակ Հայաստանը անապահովութեան մէջն էր, եկեղեցիները կողոպտում են, եկեղեցականները և աշխարհականները զերվում են և այլ այդպիսի անգթութիւններ՝ շատ են պատահում:

Սմբատ թագաւորի Մուշեղ որդին և Սմբատի եղբոր որդին հաւատը չուրանալու համար թիւնաւորվում են: Սմբատը իւր զօրքով ապաւինում է Կապուտ անուանեա ամրոցը, և Յուսուփը պաշարելով ամրոցը քրիստոնէայ զօրքերն առաջ է մղում նետաձգութեան համար: Սմբատը տեսնելով, որ հայ զօրքերը իւրեան պատճառաւ զուր կոտորվում են, անձնատուր է լինում և խաղաղութեան դաշն

խնդրում: Բայց Յուսուփը շղթայակապ է անում Սմբատին՝ և տանջանքների է ենթարկում հաւատն ուրանալու համար: Երկար և անտանելի տանջանքներից լետոյ գլխատում է, իսկ մարմինը տանում է Գուին և խաչափայտի վերայ բեւեռում: Յուսուփը ապա Երնջակն է առնում և շատ կանանց կալանաւորելով Գուին է ուղարկում և բանտարկում, ուր նեղութիւնը չը տանելով մեռնում են: Սմբատայ որդի Աշոտին թագաւոր են կարգում Հայերը և դորա թագաւորութեան ժամանակ Յուսուփը Հայաստանի մէջ բազմաթիւ կոտորածներ է անում շարունակ եօթը տարի:

ԳԼ. ԽԷ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎՈՐ, ՆԸՍՐ ՈՍՏԻԿԱՆ և ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ 920 ԹՈՒԻՆ.

Յուսուփի, Պարսից, Յունաց և Կովկասեան զանազան ազգերից Հայերին հասցրած անգութ հարստահարութիւնից և աւերանաց պատճառաւ՝ սաստիկ սով է տարածվում Հայոց աշխարհում:

Այս աղէտալի և թշուառ վիճակի լուրը հասաւ ամենայն տեղ: Յունաց Նիկողայոս պատրիարքը Կոստանդին Կայսեր հրամանաւ ցաւակցութեան և մխիթարանաց թուղթ է գրում Հայոց Յովհաննէս կաթողիկոսին:

Հայրապետը ստանալով այսպիսի թուղթ՝ վրաստանից գնում է Տարօն, որ թշնամիներից պաշարուած տեսնելով՝ 920 թուին Յունաց Կայսեր թուղթ է գրում խնդրելով օգնութիւն:

Յունաց կայսրը փոխանակ օգնելու՝ թագաւորին և կաթողիկոսին իւր մօտ է հրաւիրում, ուր Հայրապետը չէ գնում, բայց Աշոտ թագաւորը գնալով՝ ընդունում է մեծ

պատիւ և թագ, իսկ Հայրապետը անցնում է Դերջան: Նա տեսնելով իւր հօտը ամէն տեղ դառն վիճակի մէջ և չը կարողանալով տանել՝ առանձնանում է:

Հայոց աշխարհը մի թագաւորի փոխանակ երեք թագաւոր է ունենում Աշոտ երկաթ Սմբատեան, որ Պօլսից գալով՝ Շիրակումն էր թագաւորում—Աշոտ Շապուհեան, որ Յուսուփից թագ ստանալով Դուին էր բռնակալութիւն գործում և Գագիկ Արծրունին, որ նստած էր Վասպուրական աշխարհում: Յովհաննէս կաթողիկոսը սկսում է միջամուխ լինել. որպէս զի կարողանայ այս բաժանուած ուժերը միաւորել և խաղաղութիւն ձգել, բայց չի յաջողում, և Նըսր Ոստիկանը այս իմանալով՝ հետամուտ է լինում նորան կալանաւորելու, բայց Հայրապետը Գեղարքունուոյ գաւառի Այրեվանքից փախչում է Աւանայ կղզին և զանազան ընծաներ է ուղարկում նորա զայրութիւնը զիջուցանելու, որից երգման թուղթ ստանալով՝ կամենում էր գնալ Դունայ կաթողիկոսարանը, բայց լսելով Այրեվանքի կողոպտուիլը և կրօնաւորների տանջանքով սպանուիլը, փախչում է Բիւրական: Նըսր Ոստիկանը զօրք է ուղարկում, որ կաթողիկոսին կալանաւորեն և իւր մօտ բերեն, այս իմանալով Հայրապետը՝ այն տեղիցն ևս փախչում է, իսկ Բիւրական ամրոցը թշնամիքը առնելով 200 հոգի սրով են սպանում և շատ գերիներ առնելով՝ գնում են:

Նըսր նմանապէս գրաւում է Դունայ կաթողիկոսարանը և ծառաների բնակարան է անում: Հայրապետը սիրտը կտորած անց է կենում Վասպուրականի Գագիկ թագաւորի մօտ, ուր աւարտելով իւր սլատմութիւնը 924 թուին վախճանում է 27 տարի կաթողիկոսութիւն անելով՝ ուր և թաղվում է:

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆՔ—ՍՏԵՓՍՆՆՈՍ Բ. ԹԷՌՊՈՐՈՍ Ա.  
ԵՂԻՇԷ ԿԱՄ ԵՂԻՍԷ Ա. ԱՆԱՆԻՍ ՄՈԿԱՅԻ, ԱԲԱՍ  
Լ ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ 925 ԹՈՒԻՆ.

Յովհաննէսին յաջորդում է Ստեփաննոս Բ-ը, որ Աղթամար է նստում 925 թուին, որովհետև գեռ Դուինը թշնամեաց ձեռքումն էր: Ստեփաննոսը մի տարիից յետոյ մեռնում է և նորան յաջորդում է Թէոդորոս Ա. որոյ կաթողիկոսութեան երկրորդ տարին թագաւորում է Աբասը իւր եղբօր տեղ, որ առնում է Դուին, միայն կաթողիկոսը մնում է Աղթամար:

Աբասի թագաւորութեան ժամանակը Հայոց աշխարհը փոքր ինչ խաղաղութիւն է գտնում, շատ հեռացած և փախած Հայերը՝ դառնում են իւրեանց տեղերը՝ նորոգում են շտտ աւերած վանքեր, որտեղ սկսում են ժողովել Հայ մանուկներ և ուսում տարածել, որոնցից շատերը զանազան գաւառների առաջնորդներ և հովիւներ դարձան: Թէոդորոս 935 թուին վախճանում է 10 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ, որոյ տեղ ընտրվում է նորա եղբայր Եղիշէ կամ Եղիսէ է Ա. որ եօթը տարի նստեց Հայրապետական աթոռի վերայ և վախճանում է 943 թուին:

Եղիշէին յաջորդում է Անանիա Մոկացին: Սորա ժամանակ Աբասը շինել է տալիս Կարսայ Կաթողիկէ եկեղեցին 5 տարուայ ընթացքում:

Ափխազաց Բեք թագաւորը գալիս է Հայաստան և նորակառուոյց եկեղեցին ՚ի նախատինս Հայոց՝ սպառնում է Վրաց ձեռով օրհնել տալ:

Աբասը Հայոց եպիսկոպոսներին հարցնում է՝ թէ օրհնութեան կանոններն ուստի են, երբ նա պատասխան է ստանում, թէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն և սուրբ Մես-

րոպի ձեռքով ճոխացրած՝ զայրանում է և գնալով Ափխազաց վերայ պատերազմ՝ Բեր թագաւորին կալանաւորած բերում է Կարս, և ասում է տես, որ միւս անգամ չը պիտի տեսնես այս եկեղեցին. և ապա աչքերը փորում է:

Աբասի թագաւորութեան ժամանակը Հայերը փոքր ինչ խաղաղութիւն վայելելով՝ Յունաց ատելութիւնը կրկին սկսվում է, նզովում են Հայերին, պախարակում են եկեղեցական խորհուրդները, մկրտածները նորից մկրտել և թէ քահանայք էին լինում իրանց յարողները՝ կրկին օժում էին:

Յունաց բաժնի Հայերը այս տեսակ անխիղճ Յունաց վարմունքից զզուելով՝ տեղափոխվում են Մեծ Հայոց Եփրակ և Վանանդ գաւառները, որոյ համար Յունաց ատելութիւնը դէպի Հայերը առաւել սաստկանում են: Աբասը այս վտանգաւոր ժամանակը մեռնում է: Նախարարները ժամանակ չը կորցնելով Անանիա կաթողիկոսի խորհրդով շուտով թագաւոր են օժում Աբասի որդուն Աշոտին 961 թուին Անի քաղաքում:

Աշոտը Հայրական խնամք է ցոյց տալիս ազգին, նա մխիթարում է նեղացածներին և կարօտեալներին: Նա իւր սեղանակից է անում զանազան տեսակ հիւանդներին և աղքատներին, որոց երբեմն ինքն էր սպասաւորում, նա իւր գանձարանի հարստութիւնը միայն կարօտեալների համար ունէր բաց, որոյ համար և կոչուեցաւ Աշոտ Կոչմած:

Աշոտի օրինակին հետեւում է Խոսրովանոյշ թագուհին, որ շինել տուաւ Սևորդեայ Հաղպատայ և Սանահնի հոյակապ վանքերը: Անանիան 22 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ մեռնում է, նստելով երբեմն Աղթամարայ, Վարազայ և Աննիի մէջ:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ Գ-ի, ԽԱԶԻԿ Ա. ՍԱՐԳԻՍ Ա. և ՊԵՏՐՈՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԱՅ 965 ԹՈՒԱԿԱՆԻՆ.

Անանիայի մահից յետոյ, ազգի հաւանութեամբ 965-ին կաթողիկոս ընտրուեցաւ Զուանշիր իշխանի որդին Վահան, որ Սիւնեայ Բաղայ գաւառիցն էր և եպիսկոպոս նոյն գաւառի: Վահանը կաթողիկոսանալով՝ իրեն համար կաթողիկոսարանը ընտրեց Արգինայ գիւղաքաղաքի մէջ, Անիին դեռ ևս պատրաստ չը լինելու համար: Վահան ականատես էր Յունաց և Հայոց կրօնական ատելութեանը, ուստի նեղուելով նրանցից, առաւել ևս հակամիտ լինելով դէպի նոցա կրօնը, առանց ազգի հաւանութեան կամենալով միաբանիլ և միացնել Հայոց ազգային եկեղեցին Յունաց եկեղեցոյ հետ, նոցա սուրբ պատկերները բերել տալով՝ գնում է Հայոց եկեղեցոյ մէջ իբրև նշան անխտրութեան: Մեծ խռովութիւն պատճառեց Վահանայ այդ արածը ազգին, ուստի փախաւ վասպուրականի Գագիկ Արծրունու որդւոյ Աբուսահլի մօտ: Ազգը դորա փոխանակ ընտրեց Ստեփաննոս Գ-ին: Վահանայ և Ստեփաննոսի մէջ գժտութիւններ ծագեցաւ. այս վերջինը ստիպուելով մի քանի վարդապետների հետ ուղևորում է Վասպուրական և ներկայանում Աբուսահլին: Ստեփաննոսը նախ յանդիմանում է Վահանին և ապա նորա պաշտպան Աբուսահլին: Սա չը տանելով այդ յանդիմանութիւնը աքտորում է նորան Աղթամարայ կղզին և այնտեղից Կոտորոց բերդը՝ ուր և վախճանվում է երկամեայ կաթողիկոսութիւնից յետոյ: Ստեփաննոսին յաջորդում է Խաչիկ Ա. Արշարունեայ եպիսկոպոսը 972-ին, Խաչիկ Ա. ևս նստում է Արգինայ գիւղաքաղաքի մէջ, ուր և շինում է եկեղեցի և շատ մատեաններ ժողովելով պատրաստում է հարուստ թանգարան: Զանազան տեղերում ցրուած

Հայերին հովուելու համար եպիսկոպոսներ է ձեռնադրում, ազգի անդամները այլոց հետ չը ձուլվելու համար, ինչպէս այդ շատ տեղ պատահել էր: Խաչիկի կաթողիկոսութեան ժամանակ Յոյները սկսում են նեղացնել Հայերին, հայ քահանաները Սեբաստիայի Յոյն Մետրապօլիտից չարաչար տանջանքներ ստանալուց յետոյ շղթայակապ ուղարկում են Պօլիս կայսեր մօտ, որոնց բանտարկում է և ազատվում է միայն նա, ով ընդունում է քաղկեդոնութիւնը:

Յոյները թղթեր են գրում Հայոց կաթողիկոսին, որոնց մէջ պախարակում են և շոշափում Հայոց եկեղեցին և միևնոյն ժամանակ արգելում են Յունական բաժնի մէջ եղած Հայերին եկեղեցի ժողովուրդ և ժամհարութիւնը: Խաչիկի հրամանաւ ժողովուրդով վարդապետները պատասխան գրեցին Յունաց գրած թղթերին, նոյնպէս առանձին պատասխանում է Թէոդորոս Միտրապօլիտին Սամուէլ Կամրջաձորեցին Խաչիկի հրամանաւ:

Խաչիկը ամենեւին չը յուսահատուելով Յունական ատելութիւնից, ներքին բարեկարգութեանց վերայ էլ խնամք տարաւ, շինել տուեց Անիի կաթողիկէ եկեղեցին Տրդատ ճարտարապետի ձեռամբ, որուն և կից հաստատեց և կաթողիկոսարանը: Սորա կաթողիկոսութեան ժամանակը շինում է շատ եկեղեցիներ նա և Գակիկ Ա. Աշոտ ողորմածի երէց որդին իւր կնոջ Կատրամիտէ Թագուհւոյ օգնականութեամբ: Խաչիկը 19 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ կնքեց իւր արդիւնաւոր կեանքը. և թաղուեցաւ Արգինայ հանգստարանի մէջ 990 թուին: Սորա մահից յետոյ Գագիկ Շահնշահ ժողով է կազմում Անիի մէջ և կաթողիկոս է ընտրվում Սարգիս Ա.

Սորա կաթողիկոսութեան ժամանակ Յոյնները շարունակում են իրանց կրօնական հալածանքները Հայոց դէմ:

Նոցա կրօնական աններողամտութիւնը մեր ազգի մէջ զանազան աղանդների ծագելու պատճառ դարձաւ: Այդ ա-

ղանդների գլխաւոր մտքերը յայտնողներից նշանաւոր եղան Թոնդրակեցիք կամ Թուլայլեցիք, որոնք այս անունը ստացել էին իրանց բնակութեան տեղերից: Այդ տեղերից Գրիգոր Մագիստրոսը կարողացաւ վերացնել այն աղանդը և աղանդաւորներից շատերին կրկին վերածել Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեանը:

Սարգիս առաջինը Չ՛մեայ կաթողիկոսութիւնից յետոյ վախճանում է. սա զեռ ևս իւր կենդանութեան ժամանակ, ծերութեան պատճառով 1019-ին ազգի հաւանութեամբ կաթողիկոս է ընտրում Պետրոս Գեաղարձին: Այս ժամանակները Վասպուրականի վերջին թագաւորն Սենեքերիմը Յունաց հետ դաշն կապելով՝ իւր երկիրը յանձնում է և փոխարէն Սեբաստեան ստանալով՝ գաղթում է այնտեղ, որին հետևում են Պետրոս կաթողիկոսն և շատ վարդապետներ, շինելով Ակն և Սրաբկեր քաղաքներ և մի եկեղեցի Վարագայ խաչի անուամբ, որովհետեւ իւր հետ այն ժամանակը ունէր Վարագայ սուրբ խաչի մասը: Սկիւթացւոց Տուղրիլ Բէզը արշաւում է Հայաստան, սորա դէմ պատերազմաւ դուրս է գալիս Գրիգոր Մագիստրոսի հայր Վասակ Պահլաւունին 5000 մարդով և յաղթում է: Բայց աղօթելու ժամանակը դարան մտած թշնամուց մի մեծ քարի հարուածով մեռնում է:

Պետրոսի կաթողիկոսութեան ժամանակուայ աղէտները ներքին խռովութիւնից և արտաքին թշնամիներից պատճառած Բագրատունեաց հարստութեանը անկումն էին գուշակում:

ԳԼ. Ծ.


ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐ և ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԳԱՐՁ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ.

Յուսաց Վասիլ կայսրը յաղթելով Վրաց Գիօրգի թագաւորին՝ արշաւում է Հայաստան: Յովհաննէս Հայոց թագաւորը վախենալով նորանից՝ խոստանում է իւր մահուանից յետոյ Անի քաղաքը նորան տալ, որոյ պատճառաւ և Պետրոս կաթողիկոսին ուղարկում է Կ. Պօլիս: Կայսեր խընդրանօք կաթողիկոսը ջրօրհնեաց տօնի հանդէսը Հայաստանի ծէսով կատարելու ժամանակը խաչակնքում է կենաց փայտով, և զետր իւր ընթացքից կանգ է առնում և վրան լոյս է փայլում՝ այդ պատճառաւ և կոչվեցաւ Պետրոս Գետաղարձ:

Պետրոսը Կ. Պօլսից գնում է Սեբաստիայ Սենեքերիմ թագաւորի մօտ և այնտեղից Անի, բայց իմանալով Սենեքերիմի հիւանդութիւնը կրկին գնում է Սեբաստիայ և Սենեքերիմը վախճանելով նորա մարմինը թաղում են Վասպուրականում նորա հրամանի համեմատ, որով և վերջանում է Վասպուրականի թագաւորութիւնը: Նոյնպէս Վարագայ սուրբ խաչի նշանը տեղափոխում են Վասպուրական: Երբ Պետրոսը վերադառնում է Անի, ազգի մէջ տրտունջ է ծագում նորա երկար բացակայութեան համար, ուստի Յովհաննէս թագաւորի հրամանաւ կալանաւորվում է Բջնայ բերդի մէջ և Պետրոսի փոխարէն ընտրվում է Սանահնայ վանքի առաջնորդ Իէոսկորոսը, որի համար ժողովուրդը սաստիկ խռովութիւն է յայտնում, այս առթիւ անի քաղաքում ժողով է կազմվում 1036-ին, որտեղ Իէոսկորոսը պաշտօնից ձգվում է և Պետրոսը կրկին հրաւիրվում իւր կաթողիկոսութիւնը շարունակելու:

Այս միջոցին Գուենայ Ապուսվար Ամիրան մեծ հալածանքներ է հանում Քրիստոնէից դէմ. Հայք խաչով ողէնքով պատերազմում են Ապուսվարի զօրաց դէմ և ցրում նորա բանակը: Այդ ժամանակները Յովհաննէս թագաւորը մեռնում է:

Յուսաց Միքայէլ կայսրը լսելով Յովհաննէսի մահը նորա խոստման համեմատ պահանջում է Անի քաղաքը: Հայք ընդդէմանում են Միքայէլ կայսեր պահանջմանը և այդ պատճառով Յոյները բանակ բանակի վրայ ուղարկում են Հայաստան և մեծ կոտորածներ են լինում: Կայսրը Վասիլ Յովհաննէս թագաւորի պայմանագիրը յանձնում է Կիրակոս հայ քահանային իւր մահից առաջ, որ իրենց թագաւորին դարձնէ, բայց շահասէր քահանան պահեց իւր մօտ և ապա Վասիլի յաջորդ Միքայէլի վերայ վաճառելով՝ ելաւ բոլոր Ազգի թշուառութեան և շատ արիւնհեղութեան պատճառ:

ԳԼ. ԾԱ. 

ԳԱԳԿԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ, ՎԵՍՍ ՍԱՐԳՍԻ ՆԵՆԳՈՒԹԻՒՆԸ, ԳԱԳԿԱՅ ՊԱՆԳՈՒՍՈՒԹԻՒՆ Դ ՊՈԼԻՍ.

1042 թ.ին:

Հայոց նախարարները Վահրամ սպարապետի խորհրդով և ազգի հաւանութեամբ, Պետրոս կաթողիկոսի ձեռքով Յովհաննէս թագաւորի Աշոտ եղբօր որդին Գագիկը թագաւոր են օժնում 1042-ին:

Յոյները Գագիկից պահանջում են Անին, բայց նա ընդդէմանում է, սրով և Յոյները նոր նոր նենգութիւններ են պատրաստում: Միխայէլ կայսեր յաջորդը Գագիկ Բ-ին Պօլիս է կանչում ու պահանջում է Անի քաղաքը իրեն յանձնելու, բայց նա չի գնում: Վեստ Սարգիսը, որ մի տիրա-

ներս մարդ էր՝ յորդորում է նախարարներին և կաթողիկոսին, որպէս զի համոզեն թագաւորին Պօլիս գնալու, կայսեր զայրութիւնը աւելի չը թշնամացնելու համար:

Նոքա յորդորում են Գազիկին ասելով՝ թէ իրենք նորա իրաւունքները կը պաշտպանեն: Գազիկը վստահանալով նոցա հաւատարմութեանը՝ գնում է Պօլիս, ուր առաջ մեծ պատուով է ընդունուիւմ կայսրից, իսկ յետոյ երբ Անի քաղաքի վրայ խօսք է բացվում, թագաւորը քաջութեամբ իւր իրաւունքը պաշտպանում է, և այդ պատճառաւ ուղարկուիւմ է մի մերձակայ կղզի ինչպէս մի կալանաւոր:

Երբ այս լուրը Հայաստան է հասնում, նախարարները ու կաթողիկոսը փոխանակ իրենց խոստումը պահելու՝ թուղթ են գրում կայսեր Անի քաղաքը իրեն յանձնելու, և Անիի 40 բանալիները Վեստ Սարգսի ձեռք ուղարկում են նորան: Մոնոմախոս կայսրը կանչում է Գազիկին իրեն մօտ և վիճաբանութեան ժամանակ բանալիները ցոյց է տալիս, որոց համար թագաւորը մնում է շուարած: Այդպէս Անի քաղաքը Յունաց ձեռքն է ընկնում և նորա փոխարէն տըրվում է Գազիկին Պիզու քաղաքը, որով և Բագրատունեաց ցեղից վերցնվում է թագաւորութիւնը, որ 160 տարի միայն տևեց:

Գազիկ Բ. թագաւորը 25 տարի պանդխտական կեանք է վարում և Հայրենեաց աղէտները օր աւուր շատանում են: Պարսից Տուղրիլի և Ալփասլանի կատաղի գունդերը և Յունաց զօրքերը Հայաստան տակն ու վրայ են անում և մի քանի նշանաւոր քաղաքներ ինչպէս Անի, Արծն, Մանազկերա, Պաղին և Տարօն: Մի քանի ժամանակից յետոյ վերջանում է և Կարուց թագաւորութիւնը, որովհետև Գազիկ Աքասեանը Յունաց երկիրն է քաշվում: Քանի որ կենդանի էր մեծ Վահրամ Պահլաւունին՝ Յոյները նորանից փոքր ինչ երկնչում էին, իսկ նորա մահից յետոյ, մինչև անգամ աշխատում էին և կաթողիկո-

սութիւնը վերջացնել թագաւորութեան հետ: Յոյն վերահացուի ստիպմամբ Պետրոս գետադարձը իւրև ապստամբեցուցիչ ժողովրդեան Յունաց դէմ, Անիից Արծն է տեղափոխվում, իւր քեռ որդի Խաչիկին իւր տեղապահ թողնելով Անիի մէջ և ապա Արծնից աքսորվում է Աշոտաուից բերդը, իսկ Խաչիկին Սև քար կոչուած բերդն են տանում: Խաչիկը ազատվում է, իսկ Պետրոսը կանչվում է Պօլիս, որոյ հետ գնում են 17 եպիսկոպոսունք: Երեք տարի Պօլիսի մէջ է մնում և նորա հետ Յոյները շատ քաղցր էին վարվում, որպէս զի չը գնայ Հայաստան, այդ պատճառաւ Հայաստանում մեծ երկսրառակութիւն է ծագում, որովհետև Անի քաղաքի մատնութեան պատճառը Պետրոսին էին համարում: Բայց Պետրոսը Սենեքերիմի որդւոց և Գազիկ թագաւորի երաշխաւորութեամբ Պօլիսից ազատվում է և դառնում Սեբաստիայ, որտեղ և 5 տարուց յետոյ վախճանվում է:

16  
ԳԼ. ԾԲ.

ԽԱՉԻԿ Բ. ՅՈՒՆԱՅ ՋԱՆԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾԵ-  
ԼՈՒ ԻՒՐԵԱՆՅ ԳԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ: ԽԱՉԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱԶԱՏՈՒԹԻՒՆ և ՆՈՐԱ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՌՆԱԼԸ: ՅՈՒ-  
ՆԱՅ ՋԱՆԲԸ ՎԵՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱԹՈՂԻ-  
ԿՈՍՈՒԹԻՒՆԸ:

ԳՐԻԳՈՐ Բ. ՎԿԱՅԱՍԷՐ 1058 ԹՈՒԻՆ:

Պետրոս գետադարձին յաջորդեց 1058 թուին. նորա տեղապահ Խաչիկը, որի կաթողիկոսութեան ժամանակ Յունաց Կոստանդին (Տուղիծ) կայսրը, սկսում է Հայոց չարաչար նեղել և կաթողիկոսական կալուածները յափշտակել: Կայսրը Խաչիկին կանչում է իւր մօտ Կ. Պօլիս և նորանից պահանջում է իւր նախկին կաթողիկոսներից մնա-

ցած գանձը, բայց երբ որ կայսրը չէ հասնում իւր նպատակին, պահանջում է կաթողիկոսից իւրաքանչիւր տարի հարկ, ապա թէ ո՛չ, ասում է նա չես ազատուի այլ ևս իմ ձեռքից: Բացի սորանից մինչև անգամ սպառնում է ևս, որ եթէ չի կատարի իւր պահանջմունքը, կ'ուղարկէ իւր իշխաններից երկուսին Հայաստան. մէկը իբրև կաթողիկոս, միւսը՝—կառավարիչ: Կաթողիկոսը ընդգրկմանում է, երբ նորանից հարկ է պահանջում ասելով որ այդ տեսակ պահանջը ոչ Պարսիկներիցն է եղած և ո՛չ Հազարացիներից, այս պատճառաւ Յ տարի կաթողիկոսը մնում է արգելուած Պօլսումը: Յոյները Հայոց նեղ դրութիւնից օգուտ քաղել ուզելով դրդում են կայսեր, որպէս զի ամեն միջոց գործ զնէ Հայոց դաւանափոխ անելու:

Կայսրը իւր նպատակին հասնելու համար դաւնափոխութիւնը սկսում է իշխաններից, ուստի Սենեքերիմ թագաւորի Ատովմ և Աբուսահլ որդւոց իւր մօտ է կանչում, որոնք իմանալով կայսեր դիտաւորութիւնը, վերցնում են իւրեանց հետ գիտնական կարծեցեալ Յակոբ Սանահնեցի վարդապետին: Կայսրը սիրով ընդունում է նոցա և ժողով է գումարում Յոյն վարդապետներից իւր ներկայութեամբ վիճաբանելու Յակոբի հետ հաւատոյ խնդիրների վերաբերութեամբ:

Յակոբը համակրելով Յունադաւանութեանը, բոլոր Ազգի կողմից միութեան թուղթ է տալիս կայսեր: Բայց իշխանները մերժում են ասելով՝ թէ առանց Գազկի չեն կարող մի այդպիսի մեծ վերանորոգութիւն անել: Կայսրը դժուարանում է Գազկին իւր մօտ կանչելու, բայց Հայ իշխանները ծածուկ յայտնում են Գազկին, որ գայ Պօլիս, և նա շուտով հասնում է. այն ժամանակ կայսրը ցոյց է տալիս Գազկին Յակոբի տուած գաւանդութեան թուղթը: Գազկիը զայրանալով պատառում է այն՝ կայսեր առաջ ասելով թէ. «Յակոբը մի վարդապետ է, որոյ նման հազարաւորներ կան Հայաստանում և իրաւունք չ'ունին ընդհանուր Ազգի անուամբ այսպիսի մի ստորագրութիւն տալու, որ անհնարին է թէ ընդունուի Հայաստանի բազմաթիւ վարդապետների և միլիոնաւոր ժողովրդեան կողմից: Ես՝ որպէս թագաժառանգ և որպէս հարազատ զաւակ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, պարտեմ համարում իմ եկեղեցւոյ դաւանութիւնը գրով աւանդել ձեզ»: Գազկիը նոյնը բերանացի պտենաբանում է Սօփիայ եկեղեցւոյ մէջ Յոյն բազմաթիւ վարդապետաց ներկայութեամբ, և այսպէս յաղթող կերպիւ վերադառնում է իւր տեղը: Գազկի և Ատովմ Արծրունւոյ խնդիրքով Խաչիկ Բ. ազատվում է Պօլսից և վերադառնում է Հայաստան, սակայն լսելով Աթոռանիստ Անիի և այլ շատ քաղաքների աւերման լուրը, իւր կաթողիկոսական աթոռը հաստատում է Թաւ-Բլուր աւանի մէջ և փոքր ինչ մնալով այն տեղ վախճանվում է 1064 թուին:

Յոյները Խաչիկից յետոյ չեն թողնում՝ որ այլ ևս Հայերը իւրեանց վերայ կաթողիկոս ընտրեն, այլ առանց հոգևոր գլխոյ Հայ ազգին կամենում են դարձնել իւրեանց դաւանութեանը:

ԳԼ. ԾԳ.

ՎԱՀՐԱՄԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ (ԳՐԻԳՈՐ Բ. ՎԿԱՅԱՍԵՐԻ) և ԳԵՈՐԳԱՅ:

Ծամնդաւի մէջ, որտեղ Յունաց ատելութիւնից ապաստարան էր գտել Կարսի թագաւոր Գազիկ Աբասեանը՝ ժողով է գումարում և ընտրում են կաթողիկոս Գրիգոր Մագեստրոսի որդի Վահրամին: Վահրամը իւր կնոջ համաձայնութեամբ հրաժարվում է ամուսնական կապից և 1065 թ.

կաթողիկոս է օծվում Գրիգոր Բ. սա Յուզնական և Ասորական լեզուից թարգմանում է սրբոց վկայաբանութիւնը, ուստի կոչվում է Վկայասէր: Սորա ժամանակ Յոյներէց և Պարսիկներէց աւերմունքները Հայաստանում դեռ ևս շարունակվում էին, ուստի այս տեսնելով կաթողիկոսը կամենում է թողնել իւր պաշտօնը և առանձնանալ և այս խորհուրդը յայտնում է միայն Գէորգ Լուռեցի վարդապետին: Փոքր ժամանակից յետոյ Վկայասէրը յայտնում է Հայոց, որ կամենում է գնալ Հռոմ, ուստի Գագիկ Աբասեանի և նախարարաց հաճութեամբ Գէորգին ընտրում են կաթողիկոս և օծվում է Վկայասէրի ձեռքով Թաւ-Բլուր աւանում: Իսկ ինքն վկայասէրը առանձնանում է Խարամանիայի (կամ Կիլիկիայի) Սեւ լեանը:

Սորանից յետոյ Գրիգորի և Գէորգի մէջ մեծ խռովութիւն է ծագում: Գէորգը ժողովքով կամենում է իսպառզրկել Վկայասէրին իւր պաշտօնից, որ ժողովուրդը միայն իրեն դիմէ: Այս բանի համար Գրիգորը ժողով գումարելով Սեւ լեան վերայ իւր ձեռնադրածին զրկում է կաթողիկոսական պաշտօնից և ինքն կրկին սկսում է վարել իւր նախկին պաշտօնը: Ուստի Գէորգը հեռանում է դէպի Տարօն, և այն տեղ վախճանվում է: Այդ ժամանակներից սկսում են Հայերը գաղթել դէպի Կիլիկիայ, որտեղ նա և փոխադրում են կաթողիկոսական թափոնը:

ԳԼ ԾԳ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ ՏԱԿԵԱՊ, ՆՈՐԱ ՓՈԽԱ-  
ԴՐՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵՐ Լ ՏԵՐ ԲԱՐՍԵՂԻ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ.

Հայոց ազգին և եկեղեցւոյն հասած հարուածներու պատճառաւ, կաթողիկոսութիւնը ևս ընկնում է նեղութեանց մէջ, և փոխադրուելով զանազան տեղեր Հայրապետական միութիւնը մեծ վնասների է ենթարկվում: Գրիգոր Վկայասէր դեռ կենդանի Փիլարտոս իշխանի ստիպմամբ, որ ազգաւ Հայ էր և դաւանութեամբ Յոյն Չահան գաւառի Հոնի քաղաքում կաթողիկոս է ընտրում Պետրոս Գետադարձի քրոջ որդի Սարգսին 1073 թ., իսկ Գրիգոր վախենալով Փիլարտոսի նենգութիւնից, (այն պատճառաւ որ նա կանչել էր և Գրիգորը չէր գնացել) գնում է Անի և կաթողիկոսական տեղապահ կարգելով իւր քրոջ որդի Տէր Բարսեղին՝ դառնում է Սեաւ լեան, և այնտեղից Վկայասէրը ճանապարհորդում է դէպի Կ. Պօլիս, Հռոմ և Եգիպտոս, ուր տեղական Հայոց վերայ առաջնորդ է կարգում իւր քրոջ որդի Գրիգորիսին և դառնում է Սեաւ լեան վերայ պարապելու ընթերցանութեամբ: Այս միջոցին Սարգիս կաթողիկոսը մեռնում է, և յաջորդում է Տէր Թորոս կամ Թէորոս Ալախօսիկ: Բայց սոքա որպէս և Գէորգ Լուռեցին օրէնաւոր կաթողիկոսաց կարգը չեն դասվում: Այս երկպառակութեանց միջոցին յունական աթելութիւնը շարունակվում էր դէպի Հայք, նոքա ծածուկ սպանել էին մի քանի Հայ իշխաններ, որպէս Վկայասերի Վասակ եղբօրն և Վեսախաճատուր իշխանին: Իսկ պանդուխտ Գագիկ Աշոտեան շրջելով և տեսնելով Յունաց կողմից այս բոլոր չարիքները մտադրվում է Պարսկաստան գնալ իւր թագաւորութիւնը ձեռք բերելու, բայց զոհ է գնում հայրենասիրական վրէժ-

խնդրութեանը՝ սպանելով Կեսարիոյ Յոյն Մարկոս Մետրապօլիտին, որոյ մասին գլխատվում է բերդապահ Մանտալեան եղբայրներից 1079 թուականին:

Հայաստանի հետ եկեղեցին ևս նեղութեանց մէջ էր և որովհետև Գրիգոր Վկայասէր Կիլիկիայումն էր ու մեծ Հայաստանը առանց Կաթողիկոսի, Արևելեան Հայերը խնդրեցին Գրիգորին, որ կամ ինքն գայ Անիի կաթողիկոսութիւնը շարունակելու կամ իւր Տեղապահ Տէր Բարսեղին կաթողիկոս ձեռնադրէ: Եւ հաճութիւն ստանալով նորանից հրաւիրեցին Աղուանից Ստեփաննոս կաթողիկոսին, որից Հաղպատայ մէջ կաթողիկոս օծուեց Տէր Բարսէյը և դարձաւ Անի:

ԳԼ. ԾԵ.

ՀԱՆԱԾԱՆՔ ՅՈՒՆԱՅ ԱԼԷՔՍ ԿԱՅՍԵՐ.

Յունաց Ալէքս Կոմնենոս կայսեր հալածանքները դէպի Հայք առիթ տուին Գրիգորին Պօլիս գնալու, ուր տեղի ունեցաւ եկեղեցւոյ միութեան ազգակործան խնդիրը, բայց անկատար մնաց: Այս ժամանակ Թէոդորոս կաթողիկոսը Փիլարտոսի ստիպմամբ պէտք է Չահան գաւառն թողնէր և գնալ Մարաշ. բայց նա յանձնառու չը լինելով, Մարաշում կաթողիկոս է ընտրվում Պօղոս վարդապետը: որով և 1084 թուին չորս անձինք կաթողիկոս անուն են կրում, սակայն Պօղոս իւր պաշտօնը թողնում գնում է Վարազայ վանքը: Սոցանից միայն Տէր Բարսէյն էր օրինաւոր կաթողիկոս: Սա տեսնելով Պարսիկների զօրանալը և Հայաստանին ու Աղուանից մի մասի նեղուիլը, եկեղեցականներով գնում է Պարսկաստան և ներկայանալով Ալփասլանի որդի Մելիք Շահ թագաւորին, որ բարի մարդ էր, խնդրում է որ իւր

գործակալաց հարստահարութիւնները վերացնէ Հայաստանից: Մելիք Շահ կաթողիկոսի խնդրանաց համաձայն, հրովարտակ է գրում Հայաստանի խաղաղութեան և հարկի թեթևութեան համար, ու համակրելով կաթողիկոսին ատում է ինչպէս կամիս՝ այնպէս տնօրինէ քո եկեղեցւոյ գործերը: Կաթողիկոսը դառնում է Անի և մի քանի ամսից յետոյ գնալով Հոնի քաղաքը և Թէոդորոսից առնելով կաթողիկոսական քողն ու գաւազանը պաշտօնից զրկում է նորան, յետոյ այս տեղից գնում է Եդեսիա և Տէր Պօղոսին իւր մօտ կանչելով՝ պատուիրում է կաթողիկոսութիւնից հրաժարուած մնալ:

Երբոր կամենում էր գառնալ Անի, մի քանի վարդապետներ ամբաստանում են Ստեփաննոս 18 ամեայ քահանային իւր քարոզութեան համար: Կաթողիկոսը կանչելով քահանային իւր մօտ հրամայում է նորան իւր ներկայութեամբ քարոզել, և զմայլելով նորա քարոզութեան վերայ, փոխանակ պատժելու տալիս է նորան իւր ոսկի գաւազանը ու մատանին և առաջնորդ է կարգում Կարմիր վանքի վերայ, Կուղը անապատի մէջ:

Այնուհետև գնում է Անի, Աղթամար և շատ տեղեր շրջելով՝ կրկին դառնում է Անի:

Թէոդորոս և Տէր Պօղոսը մեռնում են, իսկ Վկայասէրը, որ արդէն ծերացել էր՝ խաչակրաց ժամանակ Երուսաղէմ գտնուելով ահանատես է լինում յունական հալածանաց, որտեղից և գնում է Գեսուն գաւառի կարմիր վանքը, իսկ Տէր Բարսէյն զանազան տեղեր այցելելով և Գանձակայ մէջ Աղուանից նոր կաթողիկոս ձեռնադրելուց յետոյ, գնում է Միջագետք, ուր և հրաւէր ստանալով Վկայասէրից գնում է նորա մօտ:

Վկայասէրն զգալով իւր կեանքի կարճութիւնը Տէր Բարսեղ կաթողիկոսի և Գող-Վասիլ իշխանի խնամատարութեան է յանձնում իւր քրոջ որդիք—Ապիրատ իշխանի մա-

տաղահաս գաւակներն—Գրիգոր և Ներսէս (Շնորհալի), որք զաստիարակվում են Ստեփաննոս վարդապետի մօտ, սոցա ընկերակցում են Սարգիս (Շնորհալի) և Իգնատիոս (Մեկնիչ Ղուկասու) պատանիներն: Բարսեղ կաթողիկոսն կամենալով Գեսուն գաւառից գնալ Երուսաղէմ կանչում է Հայոց եպիսկոպոսներին և իշխաններին Վարդուհեաց աւանը զանազան յանձնարարութեանց համար, և մի տանիքի վերայ եկեղեցականաց հետ պաշտօն մատուցանելու ժամանակ, տանիքը քանդվում է և կաթողիկոսը սաստիկ վտանգի մէջ է ընկնում, ուստի պատուիրում է, որ իւրեան շուտ տանեն Սեաւ լեառը, ուր եկեղեցականաց և ժողովրդոց հաւանութեամբ կաթողիկոսական գաւազան և քողն տալով Գրիգորին, պատուիրում է՝ որ նորան կաթողիկոս ձեռնադրեն, որպէս և խնդրել էր Վկայասէրը, Բարսեղը մեռնում է 30 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ 1113 թուին:

ԳԼ ԾԶ

**ԱՍԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՆՍԻՆՈՒՆԻՈՅ**

**1115—1441**

Գրիգոր Գ. Պահլաւունի, որգի Ապիրատ իշխանի, որ յանձնուած էր Բարսեղ Հայրապետի խնամոցը, ազգի հաւանութեամբ ընտրուեցաւ կաթողիկոս քսան ամեայ հասակի մէջ Բարսեղի մահից յետոյ:

Ազգի հեռաւոր անդամների մէջ տարաձայնութիւն տարածուեցաւ Գրիգորի ընտրութեան մասին, և այս պատճառաւ Աղթամարայ Դաւիթ արքեպիսկոպոսը Չորոյ վանուց մէջ կաթողիկոսանալով՝ նստաւ յԱղթամար, ուր էր Լուսաւորչայ աջր, քողը և գաւազանը:

Գրիգոր Պահլաւունին թէպէտ 1114 թուին Սեաւ լեռան վերայ ժողովք առնելով՝ անվաւեր հրատարակեց Դաւիթի կաթողիկոսութիւնը, բայց նա հաստատուն մնաց իւր վիճակի մէջ և մինչի մեր օրերը Աղթամարայ կաթողիկոսութիւնը տևում է:

Գրիգոր Պահլաւունին Արևելեան Հայոց վերայ շատ էր մտածում, և հաստատ աթոռ չուներնալով և Արարատեան աշխարհն ևս շփոթութեանց մէջ տեսնելով իւր աթոռը տեղափոխեց Ծովք դղեկի մէջ 1125 թուին, որ իւր հայրական կալուածն էր: Այս տեղ Գրիգորը հրաւիրեց իւր եղբօրը և ձեռնադրելով քահանայ անուանեց Ներսէս, և ապա տալով եպիսկոպոսական պատիւ՝ Հայաստանեայց ցրուեալ ժողովրդոց այցելու կարգեց, որ իւր քաղցրուսոյց քարոզութեան համար կոչուեցաւ Շնորհալի:

Գրիգոր պահլաւունին կաթողիկոսական աթոռը յանձնելով իւր եղբօրը՝ գնաց ուխտ երուսաղէմ, և այնտեղից վերադառնալով տեսաւ, որ Արևելքումը Սկիւթացիք շատ են նեղում, թողեց ծովք դղեակը և տեղափոխուեցաւ Կիլիկեայ և 1147 թուին Հռովմկլայի մէջ հաստատեց Հայրապետական աթոռը, այս դղեակը Լատին կնոջ էր պատկանում, որ ապա փոքր ժամանակից յետոյ գնուելով՝ դարձաւ կաթողիկոսական կալուած:

X ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ.

Գրիգոր Պաշլաուունին հասնելով խորին ծերութեանը՝ ժողովք է առնում Հռովմկլայում և ժողովականաց հաւանութեամբ օծում է Ներսիսին կաթողիկոս 1166 թուին:

Շնորհալին կաթողիկոսական քողն ու գաւազանը ստանալուց յետոյ՝ քաջ ատենաբանութեամբ յայտնեց, որ այսպիսի վսէմ պաշտօնը ոչ թէ իւր փափագանօք է յանձն առել, այլ ազգի և իւր Ծերունագարդ եղբօր յորդորանքից ստիպուած:

Ներսիսի ձեռնադրութիւնից յետոյ երեք ամիս ապրեցաւ Գրիգոր Պաշլաուունին և 1166 թուին վախճանեցաւ: Ներսէսը գեռ եպիսկոպոս էր, որ Յունաց միութեան խընդրոց վերաբերութեամբ Կիւ Մանուէլ կայսեր փեսայ Ալէքսիշիանին Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութիւնը և ազգային ծէսը գրով էր աւանդել, և այժմ այսպիսի խնդիրը առ ոչինչ համարելով իւր ուշադրութիւնը դարձրել էր Ազգի Հոգևոր շինութեան վերայ:

Ազգը ցրուած լինելով աշխարհի զանազան կողմերը— մեծ և փոքր Հայաստանի, Յունաստանի, Պարսկաստանի, Աղուանից աշխարհում և Եգիպտոսի՝ Շնորհալին ընդհանրական թուղթ է ուղարկում բոլոր տեղերը, ամեն դասակարգի մարդոց, յորդորելով ՚ի սէր և ՚ի միութիւն թէ գէպի ազգը և թէ առ միմեանս, տալով կարգ և կանոն ժամակարգութեանցը և միանգամայն եկեղեցական ծիսակատարութեանը՝ Ազգայնութեան հոգի, որով ամուր պարիսպ է դնում ընդգէմ Յունաց:

Քանի որ Ներսէս Շնորհալին այս կերպիւ իւր ազգն և եկեղեցին ամրապնդում էր՝ գալիս են նորա մօտ Կիւ

Մանուէլ կայսեր թղթով պատգամաւորներ, որ ուղղած էր Գրիգոր Պաշլաուունուն:

Շնորհալին ստանալով կայսեր թուղթը և տեսնելով, որ միութեան խնդրոյն վերաբերութեամբ է գրած՝ պատասխանեց համարձակօրէն, որ Հայերը այնքան անհաւատներից նեղութիւն չեն կրում, որքան Յոյններից տեսակ տեսակ անկարգութիւններ հասուցանելով մեր Ազգին և եկեղեցւոյն, որ ընդգէմ է խղճի և քրիստոնէական կոչմանը:

Կայսրը այս օրինակ թուղթ ստանալով Շնորհալուց և թարգմանել տալով՝ հաղորդեց Պատրիարգին, և ապա այս երկուսի խորհրդով ուղարկում են Կիլիկիայ Յոյն Աստուածաբան Թէորիանէ և Վանահայր Յովհաննէս Ութման, որոնք ներկայացնում են Շնորհալուն Հռովմկլայում և երկար խօսակցութիւն են ունենում Հաւատոյ մասանց վերայ:

Շնորհալին նոցա ձեռքով թուղթ է ուղարկում կայսեր, ուր բացատրած էր հաւատոյ դաւանութեան հետ և մեր ծէսերի նախնականութիւնը, որը անհաճոյ թուելով կայսերը դարձեալ Թէորիանէին և Ութմանին յետ է ուղարկում ինն առաջարկութիւններ առնելով, որը կամ պիտի ընդունեն Հայերը կամ պէտք է պատասխանեն:

Այս ինն առաջարկութիւնները վերաբերում էին ծէսերի միակերպութեանցը, բարձման մեր եկեղեցւոյ անկախ իրաւանցը, և Հայրապետական առաքելական պատուոյ ոչնչանալուն:

Այս անգամ Շնորհալին պատասխանում է, որ մի այդպիսի մեծ գործը միայն իւր և Միջագետի և Կիլիկիոյ եպիսկոպոսների և ժողովրդոց հաւանութեամբ և խորհրդով չի գլուխ գալ, եթէ չը մասնակցեն և Արևելեան Հայ Հոգևորականաց դասը և ժողովուրդը, և այնպէս կրկին Թէորիանէին յետ է ուղարկում, իսկ ինքը հրաւիրում է ժողովքի Արևելեան եպիսկոպոսներին, որոնցից գեռ պատասխան չը

ստացած վախճանում է 75 ամեայ հասակի մէջ 1173 թ. եօթնամեայ կաթողիկոսութիւնից յետոյ:

Շնորհալուոյ մարմինը երկար ժամանակ մնաց անթաղ, որովհետև զանազան տեղերից դիմում էր մեծ բազմութիւն աջը համբուրելոյ և իրեն Հոգևոր Հօրը հրաժարական ողջոյնը տալու:

Հանգուցեալ Հայրապետի եղբօր որդի Գրիգորը՝ հիւանդութեան լուրն առնելով՝ շտապում էր, որ կենդանույն տեսնէ, բայց հազիւ հասաւ յուղարկաւորութեանը. և Հռովմէկլայի դամբարանում ամփոփելով նորա մարմինը, իսկոյն բոլոր բազմութիւնը միաբերան Գրիգորին ընտրում են կաթողիկոս, որին ներկայ եղող եպիսկոպոսները տանում են եկեղեցի և օծում են Հայրապետ:

ԳԼ. ԾԸ.

ԳՐԻԳՈՐ Դ. ՏՂԱՅ 1173 ԹՈՒԻՆ.

Յուկնաց կայսրը և Պատրիարքը լսելով Շնորհալուոյ մահը, մխիթարութեան թուղթ են գրում Գրիգոր Տղային Թէորիանէի ձեռքով և միևնոյն ժամանակ նորոգում են միութեան խնդիրը և ինն առաջարկութիւնները:

Թէորիանէն զանազան դժուարութեանց պատճառաւ ճանապարհից յետ է դառնում, իսկ կայսերական թուղթը հասուցանում է ուրիշների ձեռքով:

Գրիգոր Տղան ընդունելով թղթերը շատ է նեղանում, որովհետև զիտէր, որ այդպիսի առաջարկութիւնը գլուխ գալու չէ և միայն պիտի Ազգի խաղաղութիւնը վրդովէ: Այս միջոցին Արևելեան եպիսկոպոսների պատասխանը ստանում է, որ Շնորհալուոյն էին գրել, ուր բացատրում էին թէ՛ ասէրը մեր երկնաւոր Հօր պատուէրն էր: մենք պէտք

է սիրենք ամենքին, բայց Յոյները չը պիտի աշխատեն մեր նախնեաց աւանդները փոխել տալ: Գրիգորը յայտու քաջ հասկացաւ, որ Հայերը թողնել չեն իւրեանց ծէսերը, ուստի կայսեր թուղթ է գրում, որ ինն առաջարկութեանց ընդունել տալուց հրաժարուի, և Ներսէս Լամբրոնացույն յանձնում է նոյն առաջարկութեան վերայ պատրաստել պատասխանը, որ եթէ հարկաւորուի ժողովքի մէջ կարգացուի: Կայսրը Գրիգորի թուղթը ստանալով՝ կրկին ստիպում է, որ և զիջանելով կաթողիկոսը հրաւիրում է ժողովքի Հայոց եպիսկոպոսներ և վարդապետներ, որոնցից ոմանք գալիս են և ոմանք թուղթ են գրում կաթողիկոսին և զգուշացնում, որ ինքնագլուխ ոչ մի բան չը բռնէ:

Գրիգորը իւր դէմ յուղուածներին համոզում է, որ Յուկնաց հետ միանալու նպատակ չ'ունի, բացի սէրից և խաղաղութիւնից: Հրովմէկլայի ժողովքի ներկայ է գտնվում Անիի Բարսեղ եպիսկոպոսը, ուր 1179 թուին ժողոված էին շատ եպիսկոպոսներ և վարդապետներ: Այս տեղ Լամբրոնացին քաջ ատենաբանութիւն է անում և ապա Յուկնաց կայսեր և Պատրիարքների թղթերն են քննում:

Ժողովքը կայսեր և Յուկնաց եկեղեցականաց գրում է թուղթ, ուր Հայաստանեայց եկեղեցույ դաւանութիւն է բացատրվում: Թղթատարները ճանապարհային շփոթութեանց պատճառաւ Կեսարիայից յետ են դառնում Հռովմէկլայ և յանկարծ կայսեր մահուան լուրը տարածուելով՝ թրղթերը մնում են կաթողիկոսի մօտ և միութեան խնդիրը մնում է անկատար:

Իսկապէս Յուկնաց այս մտադրութիւնը քաջ ճանաչելով Հայերը և երկնչելով Գրիգորից՝ Զորագետացիք, Շիրակացիք և Արևելեան Հայերից շատերը միացան և Գրիգորին չը կամենալով կաթողիկոս ճանաչել՝ սկսան Անիի Բարսեղ եպիսկոպոսին հպատակել իբրև կաթողիկոսին:

Այս խառն ժամանակ Լուսինոս Պապը Գրիգորին պատուասիրական պարգևներ է ուղարկում, նոյնպէս Կղեմէս պապը թղթեր է ուղարկում Գրիգոր Տղային և Լևոն իշխանին, որ օգնեն Գերմանիոյ կայսեր Փրիգորիկոսին խաչակրաց պատերազմի ժամանակը Երուսաղէմ գրաւելու:

Հայերը տալիս են զանազան պաշար և պատվում են Փրիգորիկոսին, որոյ մասին կայսր մեծամեծ խոստումներ է տալիս Հայոց կաթողիկոսին և Լևոն իշխանին, բայց կայսրը Եւրոպայ չը դարձած մեռնում է և խոստումն էլ մնում է անկատար, Լատինաց այս յարաբերութիւնը նոյնպէս վնասեց Հայութեանը:

ԳԼ. ԾԹ.

ԳՐԻԳՈՐ Ե. ԳՍ. ՀԱՎԷԺ

1195 Էւնին:

Քսան ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ Գրիգոր Տղան մեռնում է, Լևոնի, իշխանաց և եպիսկոպոսաց խորհրդով ընտրում են Գրիգոր Տղայի եղբօր որդուն Գրիգոր Ե. 1193 թուին:

Լամբրոնացին նորա ընտրութեանը հակառակ էր, որովհետև զեռ հասակը չէր ներում այդ վսեմ և մեծ պաշտօնի համար, մանաւանդ այնպիսի խառն ժամանակը, բայց ընտրութիւնը չէ խափանվում, որովհետև շատերը կարծում էին՝ թէ ինքն է ցանկանում կաթողիկոսանալ:

Քիչ ժամանակից յետոյ շատ եպիսկոպոսներ, և Հայ իշխաններ ամբաստանում են Գրիգոր մանկահասակ կաթողիկոսին, և այս պատճառաւ Լևոնը կաթողիկոսին բանտն է դնում:

Լևոնը հեռաւոր և մօտաւոր եպիսկոպոսներին հրաւիրում է թղթով ժողով կազմելու կաթողիկոսի վերաբերութեամբ:

Լոմբրոնացին քանի մի անգամ մերժում է Լևոն իշխանի հրաւերը, բայց վերջապէս գնում է Սիս: Գեռ Լամբրոնացին և Արևելեան եպիսկոպոսները Սիս չը հասած, Գրիգորը իմանալով, շինում է կտակեղէն պարան և մէջքից կապելով կախվում է պարսպից փախչելու նպատակաւ, բայց կտաւը կտրուելով՝ ջարդվում է քարերի վերայ և այնպէս մեռնում, և այս պատճառով ասուեցաւ Գրիգոր զահավէժ կամ քարավէժ:

ԳԼ. Կ.

ԳՐԻԳՈՐ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ.

1195 թուին Լևոն իշխանի և ժողովականաց հաւանութեամբ ընտրվում է կաթողիկոս Շահան զօրավարի Ապիրատ որդին, որ կոչուեցաւ Գրիգոր Զ:

Զորագետացիք և Շիրակացիք այս ընտրութեանը չեն մասնակցում իւրեանց կաթողիկոս ճանաչելով Անեցի Բարսեղ եպիսկոպոսին:

Այդպիսի անմխիթար ժամանակը Վրացիք այրում են Հայոց եկեղեցին քառասուն աղօթողներով Ձատիկը իւրեանց հետ չը տօնելու պատճառաւ, իսկ Կիլիկեցի Յոյնները Հայոց վերայ չարախօսութիւններ անելով՝ Պօլիս և այլ տեղ գտնուած Հայերին սկսում են նեղել, շատերին բռնի կերպիւ կրկին մկրտել և քահանայից վերստին ձեռնադրել և ստիպում են, որ բոլոր ծէսերը Յունաց հետ միակերպ կատարեն:

Լևոն իշխանն ու կաթողիկոսը Լամբրոնացուն ուղարկում են Պօլիս, որ Յոյնները դադարեն այդպիսի անվայել

գործքերից, բայց ամենեւին չեն լսում նորան: Ալէքս Անգելոս կայսեր հրամանաւ շատերը Հայերից բռնի կերպիւ սկսում են Յոյնանալ, թէ Հայոց Հայրապետութեան վախճանը հասած երազելով՝ հարկաւոր են դատում քահանայից վերստին ձեռնադրել, և այս անկարգ և անխիղճ վարմանց համար Լամբրոնացին նամակ է գրում Ռսկան անուենով մէկին:

Այս ժամանակն Լեոնը բաւականին ընդարձակելով իւր իշխանութիւնը, ցանկանում է օժուել թագաւոր, ուստի Կելեստինոս Պապին և Ֆրիդրիկոսի որդուն Հենրիկոս 2-ին Գերմանիոյ կայսեր թուղթ է գրում՝ լիջելով իւրեանց հանգուցեալ Ֆրիդրիկոսի կայսեր խոստումն:

Պապն ու թագաւորը Մոզուեսիոյ եպիսկոպոսի ձեռքով ուղարկում են արքայական թագն ու արծուէ դրօշը Լեոնին միւլենոյն ժամանակ պատուիրելով, որ տօները Լատինաց հետ կատարեն և ճրագալուցին պահք չը լուծանել, բայց այս առաջարկութիւնները մնացին անկատար:

Իսկ 1198 թուին Յայտնութեան օրը ժողովում են շատ եպիսկոպոսներ, իշխաններ, զօրավարներ և զօրք, և այլ ազգի իշխաններ և Լեոնը Գրիգոր 2. կաթողիկոսի ձեռքով օժվում է թագաւոր, ուր Լամբրոնացին մխիթարուած քաջ ատենաբանութեամբ հանդէսը առաւել շքեղ է առնում:

Յունաց Ալէքս Անգելոս կայսրը այս թագադրութեան լուրն ստանալով ուղարկում է նա ևս թագ. և յորդորում է, որ իւր ուղարկածը գործ դնէ և ոչ Լատինաց, բայց Լեոնը երկուսն ևս փոփոխակի գործ էր ածում:

Զորագետացիք և Շիրակացիք լսելով, որ Կիլիկիոյ եպիսկոպոսներից և վարդապետներից մի քանի անձինք հաւանութիւն են ցոյց տուած Լատինաց առաջարկութեանց, սաստիկ վրդովմամբ գիր են գրում Լեոնին և ամբաստանում են Լամբրոնացուն իբրև նորաձեռութեանց գլխաւոր պատճառ, ուստի Լեոն թագաւորը Լամբրոնացուն հա-

մոզում է իւր եղբօր Հեթում Սեբաստոսի ձեռքով յետ կեւալ նորաձեռութիւնից:

Լամբրոնացին երկարօրէն գիր է գրում Լեոնին իւրեան արդարացնելու համար, բայց քիչ ժամանակից յետոյ սաստիկ ցաւով մեռնում է՝ թողնելով շատ զբաւոր երկասիրութիւններ:

Նոյնպէս Գրիգոր եօթնամեայ կաթողիկոսութիւնից յետոյ մեռնում է:

ԳՎ. ԿԱ.

1202 լուին.

ՉՈՐՄ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆԻ—ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԾՍԱՐՈՅ,

ԱՆՍՆԻՍ, ԲԱՐՍԵՂ և ԳՍԻԹ Գ:

Գրիգոր 2-դի մահէն յետոյ կաթողիկոսի ընտրութեան համար երկպառակութիւններ են լինում, ոմանք ցանկանում են Անանիա Սեբաստիոյ եպիսկոպոսին. որ Պետրոս Գետադարձի ազգականն էր, ոմանք Լեոնի յորդորանօք Սսոյ Յովհաննէս եպիսկոպոսին, որ թագաւորի ազգականն էր: Վերջապէս Հռովմկլայի մէջ ձեռնադրվում է Յովհաննէս կաթողիկոսը 1202 թուին, իսկ Անանիան Կեսարիոյ և Հայոց հաւանութեամբ նմանապէս կաթողիկոս է ընտրվում: Սակաւ ժամանակից յետոյ թագաւորի և կաթողիկոսի մէջ գժտութիւն ծագելով՝ Յովհաննէսի տեղ ընտրվում է Սսոյ մէջ մի նոր կաթողիկոս ևս Տէր Գաւիթ Գ-ը: Փոքր Հայոց ժողովուրդը այս առթիւ առաւել ամուր պաշտպանեցին Անանիայի կաթողիկոսութիւնը, իսկ Շիրակացիքն ևս իրենց Բարսեղից յետ չը կանգնեցան, և ահա, այսպէս անխորհուրդ կերպիւ ազգը ունենում է չորս կաթողիկոս:

Այս խառնաշփոթ ժամանակը Չաքարէ Սպասալարը և իւր եղբայր Իւանէ Աթաբէգը, որոնք Վրաստանի կողմերը զօրավար էին, Յովհաննէս կաթողիկոսին թուղթ են գրում և Լեոն թագաւորին, որ իրենց թոյլ տրուի Ա. շարժական սեղան ունենալ զօրաբանակի մէջ և քահանայ պատարագելու համար, և Բ. Աստուածածնայ վերափոխման և խաչի տօները Վրաց հետ կատարել:

1204 թուին Սիս քաղաքումը թագաւորն ու Դաւիթ կաթողիկոսը ժողովք են գումարում այս առաջարկութիւնները վրայ մտածելու, և ապա ժողովքը ուղարկում է ութ կանոն Չաքարէին:

Ա. Պատարագել քահանայական գղեստով, սարկաւազօք և դպրօք:

Բ. ունենալ շարժական սեղան և բացօթեայ պատարագել վրանի մէջ երբ հարկն է պահանջում:

Գ. Պատարագել ոչ միայն ննջեցելոց, այլ և կենդանեաց համար:

Դ. Վերափոխման տօնը կատարել Օգոս. 15. և խաչի տօնը Սեպ. 14. միայն Յունաց և Վրաց աշխարհներումը:

Ե. Յայտնութեան և Յարութեան ճրագալուցին պահք լուծանել միայն ձկամբ և իւղով:

Զ. Յարգել Փրկչի և սրբոց պատկերները:

Է. Առանց դպիր ձեւնադրելոյ՝ սարկաւազ չը ձեռնադրել:

և Ը. Կրօնաւորները չ'ունենան սեպհական կալուած և միս չ'ուտեն: Իսկ Յովհաննէս կաթողիկոսը իւր կողմից մի եկեղեցանման վրան, մարմարոնեայ շարժական սեղան, սպասներ և քանի մի եկեղեցական պաշտօնեայք ուղարկեց:

1205 թուականին Չաքարէն այս ընծաներ և կանոններ ստանալով՝ ժողովք է գումարում Լոռի քաղաքի մէջ, ուր 'ի միջի շատ Հոգևորականաց ներկայ էին Հաղբատայ եպիսկոպոս՝ Գրիգոր Տուտեորդին, Սանահնի Յովհաննէս

վարդապետ, Դաւիթ Բոբարեցին և Անիի Սարգիս եպիսկոպոսն, ժողովքի մէջ կարգացվում է 8 կանոնները, բայց շատերը հաւանութիւն չեն տալիս, ինչպէս Տուտեորդին, Յովհաննէս և Դաւիթ:

Չաքարէ Սպասալարը սաստիկ բարկանալով իւր կամքը կամենում է բռնի կերպիւ լառաջ տանել և հրամայում է պատարագել, ուր Տարոնեցի Խաչատուր վարդապետը երգում է իւր յօրինած Խորհուրդ Խորհի երգը, որ մինչև այս օրս Հայաստանեայց եկեղեցումը երգվում է:

'Ի վերջոյ Չաքարէն սկսում է կալանաւորել նոցա, որոնք ընդդիմութիւն ցոյց տուին:

Այս շփոթի համբաւը հասնում է Լեոնին և Յովհաննէս կաթողիկոսին, որ զինի մահուան Դաւիթի կրկին կաթողիկոսացաւ՝ հաշտուելով Լեոնի հետ. նոյնպէս վախճանած էր և Սեբաստացի Անանիան, և շատ տրտմում են:

1207 թուականին Չաքարէն կրկին Անիի մէջ ժողովք է գումարում, միայն կրկին ժողովք չը բացուած աղմուկ է տարածվում, ուստի ժողովականներից շատերին աքսորում է, բայց վերջը Իւանէ Աթաբէգի միջնորդութեամբ աղատվում են, իսկ 8 առաջարկութիւններից մի քանիսը գործ են դրվում և մի քանիսը մնում են անկատար:

ԳԼ. ԿԲ.

ԶԱՊԵԼ ԴՈՒՍՏՐ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐԻ.

Երբ Հայոց մէջ յուզվում էին կրօնական վէճերը, այս ժամանակ և միւս կողմից Լատինաց կղերքը սկսել էին իւրեանց որոմները սերմանել: Լեոն թագաւորը ամենքին հալածեց Կիլիկիայի սահմանից, թէպէտ Պապերը Լեոնին թրղթեր են գրում և զգուշացնում, բայց թագաւորը բնաւին բանի տեղ չէ դնում նոցա զբուրթիւնները:

Սակաւ ժամանակից յետոյ մեռնում է Լևոնը և նորա տեղ անցնում է կաթողիկոսի և իշխանաց հաւանութեամբ նորա Ջապէլ աղջիկը: Նոյնպէս սակաւ ժամանակից յետոյ մեռնում է և Յովհաննէս կաթողիկոսը 18 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ, որին յաջորդում է Կաստանդին Ա. Բարձրբերդցին 1220 թուին:

Սորա ժամանակ Սկիւթացիք, Թաթարներ, Չինգիսխան և այլ բռնաւորները Աղուանից աշխարհը, Վրաստանը և Հայաստանը արիւնով ողողում են և շատերին ստիպում են հաւատն ուրանալու: Հեթում թագաւորը՝ Ջապէլի ամուսինը և Կաստանդին կաթողիկոսը չեն կարողանում օգնել, որովհետև Կիլիկիայի Յունական և Լատինական յուզուած խնդիրներից ստիպուած՝ 1243 թուին Սիս քաղաքումը ժողովք են գումարում և 25 կանոններն են հաստատում, այս կանոնների վերջինը՝ վերջին օժման էր վերաբերում, որ Հռովմայ Պապը խնդրել էր իւղով կատարել, չ'ընդունուեցաւ, որովհետև Հայոց եկեղեցին բաւականանում է միայն աղօթքով:

Կաստանդին կաթողիկոսի ժամանակը նոյնպէս Լատինք ստիպում էին Հայերին Հոգւոյն սրբոյ բղխումն դաւանել 'ի Հօրէ և յՈրդւոյ, բայց այն ևս մնաց անկատար դաւանելով՝ միայն 'ի Հօրէ:

Կաստանդինը բաւականին նեղութիւն կրեց, թէ Լատիններից, թէ Եգիպտոսի Սուլթաններից, և բաւականաչափ կսկիծ պատճառեց իւր սրտին Կիլիկիայի մէջ պատահած հարստահարութիւնները, և ապա 47 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ մեռաւ խորին ծերութեան մէջ 1267 թուին:

Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ո Ս Ո Ւ Ն Ք

ՅԱԿՈԲ Ա. ՏԱՐՍՈՆԱՅԻ ԿՍՄ ԿԼԱՅԵՑԻ, ԿՈՍՏԱՆԻՆ  
Բ. ՍՍԵՑԻ ԵՒ ՍՏԵՓՈՆՆՈՍ Գ. ԵԳԻՊՏՈՍԻ ԲՈՒՆԱՒՈՐ  
ԱՇՐԱՅԻ ԱՆԳԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

1268 թուին Կաստանդին Բարձրբերդցւոյ տեղ կաթողիկոս է ընտրվում Յակոբ Ա. Կլայցցի: Սա ներսէս Շնորհաւոյ ընդհանրական թղթերը օրինակել տալով՝ իւր ժամանակի եպիսկոպոսներին և վարդապետներին է ուղարկում, որ ըստ այնմ հսկեն իւրեանց յանձնուած հօտին վերայ:

Սորա ժամանակը յայտնվում են Մեծն Ներսիսի նըշխարքը թիլն աւանումը, ինչպէս և լսում ենք Երզնկացի Յովհան վարդապետի յօրինած «որ զլոյս անճառ շնորհաց» շարականի մէջ:

Յակոբ Ա. կաթողիկոսի մահից յետոյ Լևոն թագաւորը աշխատում է ընտրել տալ Գրիգոր Անաւարդեցուն, բայց Արևելեան վարդապետները չեն համաձայնվում իբրև Հոռոմասերի:

Ապա կամենում են ընտրել Սիւնեաց Տարսայիճ իշխանի որդի Ստեփաննոս քահանային, որ Կիլիկիայ եկել էր եպիսկոպոսանալու, սակայն նորան ևս ոմանք չեն կամենում, վերջապէս ընտրում են Կաստանդին Բ. Կուտակեցուն 1287 թուին, որ վերոյիշեալ Ստեփաննոս քահանային եպիսկոպոս ձեռնադրելով՝ ուղարկում է Սիւնեաց աշխարհ:

Կաթողիկոսի և Հեթում թագաւորի մէջ գժտութիւն ծագելով՝ աթոռից զրկվում է Կաստանդին Բ-ը և աքսորվում, նորա տեղ աթոռակալելով Ստեփաննոս Գ. Հռովմկայցցի 1290 թուին:

Սա Հռովմկլայից Հեթում թագաւորը Սիս է կանչում ծռագատիկի պատճառաւ Յունաց հետ տօնելու, բայց Ազգի կողմից ընդունելութիւն չէ գտնում Սիսի որոշումները:

Այս ժամանակները Եգիպտոսի Աշրաֆ բռնաւորը 1293 թուին գալիս է Կիլիկիայ և արիւնով ներկում, առնում է Հռովմկլայի ամրոցը, կողոպտում է կաթողիկոսարանը, յափրշտակում է եկեղեցական սպասները, ընդ որս և սուրբ Գրիգոր Լուսաւորչայ աջը, բայց յետոյ վերադարձնում է, և ապա շատ անձինք գերելով կաթողիկոսի հետ՝ տանում է Եգիպտոս, ուր սրտի կսկիծից 4 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ մեռնում է:

ԳԼ. ԿԳ.

ԳՐԻԳՈՐ Է. ԱՆԱԽԱՐՁԵՑԻ 1294 ԹՈՒԻՆ.

Ստեփաննոսից յետոյ ընտրվում է կաթողիկոս Գրիգոր Անաւարզեցին, որ աթոռը Սիս է փոխադրում, որովհետև Հռովմկլայն աւերած էր:

Սա սահմանում է ըստ աւուրց ամսոյ Յայսմաւուրքի ընթերցուածքը շատ բաներ աւելացնելով Յունական և Լատինական սովորութիւններից, և նոյնպէս պատրաստում է իրանից առանձին տօնացոյց:

Արևելեան վարդապետները այս լսելով՝ ոչ եթէ միայն չեն ընդունում նորա կարգադրութիւնքը, այլ և փոքր Սիւնեաց մէջ ժողովք առնելով՝ գրում են, որ եթէ Յունականութիւնից և Լատինականութիւնից յետ չի կենալ՝ նորան այլ ևս կաթողիկոս չեն ճանաչելու:

Գրիգորը վախենալով քիչ ժամանակ լուռ է, բայց վերջը դարձեալ մի քանի Արևելեան վարդապետներին նաձակներ է գրում, որ իւր մտադրութիւնը յառաջ տանեն,

որով առաւել իւր դէմ զայրացնում է Արևելեաններին, ուստի թուղթ է գրում Հեթում թագաւորին, որ իւրեան օգնէ, և ապա դաւանութեան գիր պատրաստելով՝ յանձնում է Հեթումի որդուն՝ Լևոն թագաւորին, իսկ ինքը 14 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ մեռնում է՝ 1306 թուին:

Գրիգորի մահից յետոյ կրկին կաթողիկոսացնում են Կոստանդին Բ-ին, որ մերժուած էր, Լևոնի հրամանով ժողովք է լինում Սիս քաղաքումը, ուր կարգացվում է Գրիգորի յօրինած դաւանութեան գիրը, որին շատերը Լևոնի և Հեթումի երկիւղից ստիպուած հաւանութիւն են տալիս, բայց երբ սկսում են գործադրել՝ սաստիկ խռովութիւն է ծագում ժողովրդեան մէջ և թշնամանալով կաթողիկոսի, Լևոնի և Հեթումի հետ՝ մատնում են Թաթարաց Պիլարդու Խանին, որ և Լևոնին, Հեթումին և այլ իշխաններին խաբեբայութեամբ իւր մօտ հրաւիրելով սպանել է տալիս:

ԳԼ. ԿԵ.

ԹԱԿԱՒՈՐՔ ՀԱՅՈՑ ՕՇԻՆ և ԼԵՒՈՆ Ե. ԿՈՍՏԱՆԳՒԻՆ Գ.

ԼԱՄԲՐՈՆԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ.

Լևոն Գ-ին յաջորդում է իւր Օշին եղբայրը, սա ժողովքի է հրաւիրում շատ հոգևորականներին, բայց նոքա մերժում են, որովհետև Անաւարզեցոյ մտադրութիւնը յառաջ տանելու համար էր:

Սակայն Սիս ժողովում են բազմաթիւ քահանայք, սարկաւագներ, արք և կանայք, որ մեծ աղմուկ են բարձրացնում Անաւարզեցոյ դաւանադրի պատճառաւ:

Օշինը զայրանալով շատերին բանտարկում է, օմանց սպանել է տալի և ոմանց աքսորում, բայց դարձեալ ոչ թէ յաջողեցնում է իւր մտադրութիւնը, այլ առաւել ժողովր-

դէին իւր դէմ յարուցանում է, որ մինչև անգամ Կարնոյ Գրիգոր եպիսկոպոսին սպանում են, բաժակի մէջ ջուր խառնելու համար:

1311 թուին Երուսաղէմի Սարգիս եպիսկոպոսը Եգիպտոսի Սուլթանից հրովարտակ է հանում Երուսաղէմայ Հայոց պատրիարքութեանը:

Օշինը դարձեալ Ատանայում ժողովք է անում, բայց անյաջողութեանց հանդիպելով՝ այնուհետև ստիպմունքից բոլորովին հրաժարվում է՝ մանաւանդ որ ներքինի հետև արտաքին կերպիւ աղէտալի վիճակի մէջն է ընկնում իւր երկիրը, ուստի և Կապանի Յակոբ եպիսկոպոսին Պապին ուղարկելով՝ խնդրում է միջնորդել Եւրոպիոյ թագաւորներին իւրեան օգնելու. բայց Պապը փոխանակ օգնելու՝ յորդորում է, որ Լատինականութեան վարժեցնէ Հայ ժողովուրդը:

Օշինին յաջորդում է Լևոն Ե-ը. սորա թագաւորութեան ժամանակ Եգիպտոսի Սուլթանները թագաւորներին և թուրքմեններին հետ միանալով՝ Կիլիկիայում մեծ արիւնհեղութիւն են գործում այն պատճառաւ, որ Հայերը ընտանեկան յարաբերութիւն ունեն Լատինաց հետ:

Պապը այս լսելով՝ Եւրոպայի թագաւորներին յորդորում է, որ օգնեն Հայոց, բայց նոքա Պապին չեն լսում:

Կոստանդին Բ-ը մեռնում է և 1328 թուին յաջորդում է Կոստանդին Գ. Լամբրոնացին, որ անձամբ ներկայանալով Սուլթանին՝ հաստատում է խաղաղութեան դաշն, որ միայն սակաւ ժամանակից յետոյ քանդվում է շնորհիւ Լատինաց և կրկին Եգիպտացիք մեծ աւերմունք են պատճառում մեր երկրին:

ԳԼ. ԿԶ.

21

ՅԱԿՈՒԲ Բ. ՍՍԵՅԻ. ՍԿԶԲԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻԹՈՒՈՒԹԵԱՆ.

1327 թուին Կոստանդին Լամբրոնացույ մահից յետոյ նստում է կաթողիկոսական գահը Յակոբ Բ-ը

Սորա կաթողիկոսութիւնից դեռ տասն տարի առաջ Յովհաննէս Պապի հրամանաւ Բարդուղիմէոս Լատին եպիսկոպոսը գալիս է Ատրպատականի կողմերը և սկսում է Լատինականութիւնը տարածել:

Նչեցի Եսայի վարդապետի աշակերտ Քոնեցի Յովհաննէս Հայ վարդապետը գնալով Բարդուղիմէոսի մօտ՝ ուսանում է Լատիներէն, և ապա նորա հետ միասին զանազան գրքեր են թարգմանում Լատիներէնից Հայաստանումը տարածելու:

Սակաւ ժամանակից յետոյ Յովհաննէսը դառնում է Քոնի աւանը և այն տեղ իւր ընկերակիցներին հրաւիրում է, որ խօսին Բարդուղիմէոսի հետ կրօնական և ծիսական վարդապետութեանց վերայ, աշակերտակիցներից ոմանք գալիս են և ուխտ են դնում, որ թողնեն Ազգային աւանդութիւնները և Լատինականին հետևին: Եւ յիրաւի սկսում են և շատ ժողովրդոց ուսուցանում են ծիսափոխութիւնը, որով և սաստկանում է ժողովրդեան մէջ աղմուկը:

Քոնեցուն և նորա համամիտներուն Եսայի վարդապետը յանդիմանական թուղթ է գրում, բայց ամենևին ուշք չեն դարձուցանում և իւրեանցն են շարունակում:

Հայոց առաջնորդները Քոնեցիներուն հալածում են և ոմանց իսկ կալանաւորում Լևոնի հրամանով, որոց վերայ Պապին ամբաստանութիւններ են գրում, և այս պատճառաւ Պապը իւր խոստումը այլ ևս չէ կատարում գրամական միջոցաւ օգնելու Լևոնին և միևնոյն ժամանակ թա-

գաւորին և կաթողիկոսին զիր է գրում, որ չը հալածեն Քռնեցիներուն:

Բարդուղիմէոսի մահից լետոյ Քռնեցին գնում է Հռովմ և Յովհաննէս Պապի հրամանաւ գալիս է և Հայաստանումը Ունիթոռական կարգ է հաստատում, որ և այնուհետև յաջողեցնում են Հայաստանումը շինել զանազան վանքեր և գրքերի թարգմանութեամբ պարապել, և Ունիթոռութեան ապաւինողներին նորից մկրտել և ձեռնադրել:

ԳԼ. ԿԵ.

ՈՒՆԻԹՈՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԻՈՐ ԱՆՁԻՆՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

Ունիթոռութեան գլխաւորներն էին Որմիոյ Պալիենց Ներսէս եպիսկոպոսը և Կարնոյ եպիսկոպոս Սիմէօն—Պէկ, որոնք Հայոց մկրտութիւնը ու պատարագը երկրայելի են քարոզում, և շատերին ծածուկ մկրտում են բաղանիքներում, տներում և այգիներում, որովհետև Ազգից սաստիկ վախենում էին:

Յակոբ կաթողիկոսը և Լևոնը Ունիթոռներից ոմանց աքսորում են, ոմանց պատժում են և ոմանց բանտարկում. որոց հետն է և Սիմէօն Պէկը և Ներսէս Պալիենցը, որոց կարգընկեց են աւնում:

Սոքա կեղծաւորութեամբ ազատվում են բանտից, որ և Ներսէսը Կանչոյ բերդումը ամբանալով ժողովրդեան մէջ խռովութիւն է ձգում, Յակոբ կաթողիկոսը Պապին զիր է գրում, որ զսպէ Ունիթոռներուն, բայց ոչինչ օգուտ չեն քաղում:

Եզիպտական բռնաւորները իմանալով, որ Հայերը Լատինաց հետ ունին յարաբերութիւն և միշտ թուղթ են գրում՝ ասպատակում են Կիլիկիան և Լևոնից երդումն են

պահանջում, որ Պապի հետ չ'ունենայ այլ ևս թղթակցութիւն:

Լևոնը երգմամբ խոստանում է նոցա պահանջը կատարելու և այսու երկիրը փոքր ինչ խաղաղութիւն է վայելում, բայց Բենեդիկտոս Պապը քանդել է տալիս Եզիպտական ուխտը և Լատինաց հետ նորոգել տալի, որով և պատճառ է լինում մեծամեծ աւերանաց Կիլիկիայումը: Յակոբ կաթողիկոսը Լևոնի այս օրինակ արարմանց վերայ ցոյց է տալիս մեծ ամբաւականութիւն, որով և շարժելով Լևոնի բարկութիւնը գրկվում է կաթողիկոսութիւնից թողնելով աթոռը Մխիթար Քռնեցւոյն:

ԳԼ. ԿԸ.

ՄԽԻԹԱՐ ՔՌՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ 1541 ԹՈՒԻՆ.

Ներսէս Պալիենցը Մխիթար Քռնեցւոյն կաթողիկոսութիւնը իմանալով՝ զիմում է նորա պաշտպանութեանը, բայց նա չէ ընդունում:

Բենեդիկտոս ԺԲ. Պապը, որ Գաղղիոյ Աւինիոն քաղաքումն էր այս ժամանակները՝ Ներսէս Ունիթոռներից կազմած 117 յօդուծից մի գրքոյկ է ներկայացնում Հայոց դաւանութեան վերայ զրպարտանքներ բարդելով, Յի միջի այլոց բացատրելով, որ Հայոց կաթողիկոսը չէ ընդունում պապի գլխաւորութիւնը:

Պապը այդ գրքոյկը ուղարկում է իսկոյն Կիլիկիայ և թուղթ է գրում, որ Լևոնն ու կաթողիկոսը ժողովով քննեն գրքոյկը և պատասխանեն նորա պարունակութեանը: Մխիթար կաթողիկոսը, նորընտիր Կոստանդին թագաւորի ներկայութեամբ Սիս ժողովք է գումարում եպիսկոպոսներից և վարդապետներից և գրքոյկի զրպարտանքը հեր-

քում են մի քանի շողոքորթ խօսքերով Կղմէս Զ. պապին շատ են ուրախացնում, որովհետեւ այդ ժամանակը Բենեդիկտոսը վախճանած էր:

Կոստանդին թագաւորը պապի շնորհակալութեան կոնդակից ստիպուած յայտնապէս Հայերին ստիպում է, որ Լատինաց ծիսից հետեւին, որոյ պատճառաւ իւր զօրականնեղից սպանվում է, որին յաջորդում է իւր եղբայր Գուհտոնը, որ նմանապէս իւր եղբօր ընթացք ունենալու պատճառաւ սպանվում է, որին յաջորդում է Կոստանդին մէկը, որ պապերի հետ միշտ մտերմական թղթեր էր գրում:

Եգիպտացւոց Ամիրան Հայերի այսպիսի մտերիմ յարաբերութիւնը տեսնելով Լատինաց հետ՝ Կիլիկիայի վերայ յարձակվում է և սաստիկ պատերազմ է տալիս: Կոստանդինը Արևմտեան թագաւորներից խնդրում է օգնութիւն, խոստանալով, որ զկնի յաջողութեանց բոլոր Հայերը կը վարժեցնէ Լատինաց ծիսից և արարողութեանց:

Մխիթար կաթողիկոսն ևս խնդրում է պապին, որ կրօնական վէճերը դադարացնէ այսպիսի մանաւանդ վտանգաւոր ժամանակը, որ Լատին կրօնաւորները իւր իշխանութեանը արգելք էին լինում:

Պապը կաթողիկոսի այս թուղթը ներսէս Պալիենցին և այլ Ունիթուռներին ուղարկում է քննելու, իսկ նոքա յայտնում են Պապին, որ կաթողիկոսի գրութիւնը մի քաղաքավարական թուղթ է, որովհետեւ կաթողիկոսը, ոչ պապական գլխաւորութիւնն է ճանաչում և ոչ Կիլիկիայ ուղարկուած պապական դեսպաներին է յարգում:

Պապը այս մասին շատ վրդովելով գրաւոր երդումն է պահանջում կաթողիկոսից իւր գլխաւորութիւնը ճանաչելու վերաբերութեամբ, բայց նա պատասխան չը ստացած մեռնում է և կաթողիկոսն ևս գրաւոր երդում չէ տալիս:

Յակոբ Սիսեցին գնում է Գաղղիա և Ինովկենտիոս Զ. պապի սիրտը առնելով՝ դառնում է Կիլիկիայ 1355 թուին:

վերստին կաթողիկոս ընտրուելով Մխիթարից յետոյ, որ 4 տարիից յետոյ մեռնելով՝ տեղը յաջորդում է Մեսրոպ Արտազեցին՝ վանահայր Թագէի վանուց 1359 թուին:

ԳԼ. ԿԹ.

ՄԵՍՐՈՊ ԱՐՏԱԶԵՅԻ 1359 ԹՈՒԻՆ.

Մեսրոպը Յակոբից յետոյ կաթողիկոսանալով Սոյ մէջ ժողովք է գումարում, ուր պատուէր է գրում ամեն տեղ, որ անփոփոխ պահպանեն Հայոց եկեղեցւոյ սովորութիւնները, որովհետեւ շատ տեղ սկսել էին ջրախառն պատարագել:

Կոստանդին թագաւորը մեռնում է և նորան յաջորդում է Լևոն Զ. Լուսինեան Գուհտոնի ազգականութիւնից, որոյ ժամանակն էր Ռուբինեանց իշխանութեան ճգնաժամը:

Եգիպտոսի և Բաղդատի Սուլթաններն քաղաքականապէս մեծ նեղութեանց են ենթարկում: Լևոնը, և մի քանի կաթողիկոսները կալանաւորվում են Մեսրոպից յետոյ—այն է Կոստանդին Գ. Պօղոս Ա. Թէոդորոս Բ. և նմանապէս կաթողիկոսական իշխանութիւնը անանդորր վիճակի մէջ լինելով՝ հազիւ հազ կարողանում են կաթողիկոսարանի երեսը տեսնել ձեռնադրութեան և միւռոնի օրհնութեան համար միայն:

Լևոնը գերութիւնից ազատուելով՝ թափառում է Սպանիայում, Իտալիայում, Անգղիայում և Գաղղիայում, որ նոցա օգնութեամբ կարողանայ իւր իշխանութիւնը վերականգնել, բայց չէ հասնում իւր նպատակին, 1393 թուականին մեռնում է Փարիզում և թաղվում է Կեղեստինեանց վանքի մէջ, որ և վերջանում է Ռուբինեանց թագաւորութիւնը:

Օմար Մելիք բռնաւորը 1395 թուականին Թէոդորոս կաթողիկոսին կալանաւորում է և սպարնում 18 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ:

Այս էր Հայոց օգուտը, որ յառաջ եկաւ Լատինաց Հետ յարաբերութիւն ունենալուց:

19

ԳԼ. Զ.

ԼԱՆԿԹԱՄՈՒՐԵԱՆ ԱՐՇԱԽԱՆՔ, ՅԱԶՈՐԴՔ ԹԵՈԳՈՐՈՍԻ  
1596—1440 Թուին:

Հայաստանեայց եկեղեցւոյ խաղաղութիւնը վրդովում էր Ունիթուական խումբը, որոց բնակութեան և քարոզութեանց գլխաւոր տեղերն էին Ջահուկ, Նախիջևան, Երնջակ և Գողթան գաւառները և Թաւրիզու, Մարաղու Սուլտանիոյ կողմերը, միւս կողմիցն ևս Ռուբէնեան թագաւորութեան անկումից շահուելով՝ Լանկթամուրը սկսաւ արշաւել Հայաստանի քաղաքներ և գիւղեր արեամբ ներկել, որոնցից շատերն ևս գերուեցան և ոմանք ևս զալթեցին դանաղան երկիրներ, մանաւանդ Պոլիս:

1396-ից Թէոդորոսին յաջորդում են Կարապետ Ա. Դաւիթ Գ. Կարապետ Բ. 1402-ին և Յակոբ Գ. 1409-ին, Կիլիկիոյ Սմիրնայի պաշտպանութեամբ միայն:

Յակոբի կաթողիկոսութեան ժամանակը Վասպուրականի առաջնորդներն ու իշխանները միաբանում են և Աղթամարայ կաթողիկոսին վայր են ձգում իշխանութիւնից, և Կիլիկիայ գեր են գրում, և ընդունում են իրենց կաթողիկոս Ստեյի Յակոբին, որ և վերջինը ուրախանալով Վասպուրականներին օրհնութեան կոնդակներ է գրում, բայց վերջը իւր Հակոբակորդներից թիւնաւորուելով երկամեայ կաթողիկոսութիւնից յետոյ մեռնում է:

ԳԼ. ԶԱ.

ԳՐԻԳՈՐ Ը. ԽԱՆՁՈՂԱՏ, ՊՕՂՈՍ Բ. ԱՐԱՐԱՏԵՅԻ.

ԿՈՍՏԱՆԳՒԻՆ Ե. ՎԱՀԿԱՅԻ.

Յակոբ Գ-ին յաջորդում է Գրիգոր Ը. 1411 թուին, որին Ստեյիները աքսորում են մի ամուր բերդ, ուր վախճանում է եօթնամեայ կաթողիկոսութիւնից յետոյ:

Արևելեան Հայերը արտաքին թշնամիներից սաստիկ նեղացած լինելով և կաթողիկոսական վարչութեան տխուր համբաւներ առնելով՝ Երուսաղէմայ Պօղոս առաջնորդին թուղթ են գրում, որ զնայ Կիլիկիայ և անդորրացնէ տեղացի Հայերին և մի արժանաւոր մարդ կաթողիկոս ընտրէ:

Պօղոս զնալով Կիլիկիայ սկսում է Հայրասպետանոցի անձանց խրատել, որ առանց կրքի օրինաւոր մարդ կաթողիկոսացնեն, նոքա միաբանուելով ընտրում են նոյն ինքն Պօղոսին, որ զանազան բարեկարգութիւններով էր պարապում, բայց իւր նպատակին զեռ չը հասած 12 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ վախճանվում է, որին յաջորդում է Կոստանդին Ե. Վահկացի 1430 թուին:

Սորա կաթողիկոսութեան երկրորդ տարին Եւզէնիոս Գ. Հռովմայ պապը թուղթ է գրում Յունաց պատրիարքին և Հայոց կաթողիկոսին, որ զան ժողովք:

Կաթողիկոսը Երուսաղէմայ Եսայի Հայոց պատրիարքի ձեռքով պապի ալտախի կոնդակը ստանալով՝ մտածում է, որ առանց Արևելեան եպիսկոպոսաց չէ կարող վճռական պատասխան տալ, ուստի այն կոնդակը ուղարկում է Տիգրանակերտի Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսին, որ կոնդակի պատասխանը գրէ:

Մկրտիչ եպիսկոպոսը գրում է, որ Հայերը բացի երեք տիեզերական ժողովքների՝ ոչ մի ժողովք չեն ընդունում,

աչքի առաջ ունենալով Բաղկեդոնեան ժողովի տխուր անց-  
քերը:

Կաթողիկոսը պատրաստուելով ուղարկելու այս պատաս-  
խանը Պապին՝ Ղրիմու առաջնորդ Սարգիս եպիսկոպոսից  
ստանում է թուղթ՝ այն տեղի Հիւպատոսի ստիպմամբ  
զբաժ, որ անպատճառ պէտք է Հայոց կաթողիկոսը մաս-  
նակցէ Պապի մտադրութեան խորհուրդի մէջ:

Կաթողիկոսը հրամայում է նոյն Ղրիմու Սարգիս եպիս-  
կոպոսին, որ մի քանի ընկերներ առնէ իւր հետ և զնայ  
Իտալիայ:

Մինչ մեր վարդապետների հասնիլը, ժողովն արդէն  
սկսվում է Փերարա քաղաքումը, ուր Լատինաց և Յունաց  
մէջ երկար վիճաբանութիւններից լետոյ՝ ժողովը փոխադր-  
վում է Փլորէնտիա, ուր նոյնպէս վէճերը շարունակվում  
են, և զեռ մեր վարդապետները չը հասած՝ ժողովը աւարտ-  
վում է:

Որպէս թէ Պապը Փլորէնտեան սահմանադրութիւնը  
Հայ վարդապետաց ձեռքով ուղարկում է կաթողիկոսին, որ  
ընդունեն Հայերը Հոգւոյն Սբբոյ բղխումն ՚ի Հօրէ և յՈրդ-  
ւոյ, Պապի գլխաւորութիւնը, քաւարան, ջրախառն պատա-  
րագելը և այլ տօները ըստ Լատինականին կատարելը:

Այս սահմանադրութիւնը մեր եկեղեցին աչքով անգամ  
չը տեսաւ՝ և թէ բերող վարդապետաց ինչ պատա-  
հեցաւ մենք չ'ունինք ո՛չ մի տեղեկութիւն, միայն այսքան  
յայտնի է, որ նոցա ճանապարհորդութիւնը անօգուտ էր  
բոլորովին:

ԳԼ. ՀԲ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆԻ ՅՈՎՍԷՓ Գ. ՍՍԵՅԻ, ԳՐԻԳՈՐ Թ.  
ՄՈՒՍՍԻԿԵԱՆ.

Փլորենտեան պատգամաւորները գալով՝ արդէն Կոս-  
տանդինը մի տարուայ մեռած է լինում, որին յաջորդում  
է Յովսէփ Գ. Սսեցին, որ միայն մի քանի ամիս է կաթո-  
ղիկոսութիւն անում:

Յովսէփին յաջորդում է Գրիգոր Թ. Մուսարէկեան 1440 թ,  
այս ժամանակները Կիլիկիան մեծ նեղութեանց մէջն լինե-  
լով, կաթողիկոսարանն ևս աւերուած լինելով, ժողովուրդը  
տառապանաց մէջ թաղուած՝ կաթողիկոսները ընտրվում  
էին շատ անգամ առանց Ազգի գիտութեան և հաւանու-  
թեան, և այսպէս Կիլիկիան Ազգի առաջ խորթացած էր՝  
մանաւանդ, որ շատ տեղեր ծխափոխութիւնները արդէն  
մտած էին:

Սրբեկեան Հայերը խորհրդով վճռեցին, որ Աթուր  
փոխադրեն դարձեալ Վաղարշապատ, և այս նպատակաւ  
Մուսարէկեանին հրաւիրում են Վաղարշապատ, որովհետև  
նորանից Կիլիկիոյ եպիսկոպոսները բողոքում են, որ կաթո-  
ղիկոսանալով իսկոյն իբրև իւրեան համախոհ անձինք հինգ  
եպիսկոպոսներ է ձեռնադրում: Գրիգոր Մուսարէկեանը չի  
յանձն առնում էջմիածին գալը, ուստի և Վաղարշապատի  
մեծագումար ժողովքի մէջ ընտրում են Կիրակոս Վիրապե-  
ցուն 1441-ին, որ նստում է էջմիածնում, իսկ Մուսարէ-  
կեանը մնաց Սիս, և Զաքարիան Աղթամար: Այսպէս Ազգը  
ունեցաւ երեք կաթողիկոս:

ԿԻՐԱԿՈՍ ՎԻՐԱՊԵՅԻ 1441 ԹՈՒԻՆ


20

Կիրակոսը կաթողիկոսանալով Եջմիածնում, շրջաբերական է դրում առաջնորդներին, Սոսյ, Աղուանից և Աղթամարայ կաթողիկոսներին, հրաւիրելով ՚ի սէր և ՚ի միութիւն:

Հայրապետական աթոռը կարգի է դնում Թովմայ Մեծորեցի վարդապետի օգնութեամբ, Վազարշապատի տաճարն է նորոգում, և այլ վանքերն ու եկեղեցիները:

Քանի որ Կիրակոսը այսպէս սկսում է բարեկարգութիւններով պարապել՝ մի քանի վարդապետներ և Վանականներ զրպարտում են նորան Արարատեան Օտարազգի իշխանի առաջ իբրև կախարդ և հերձուածող:

Կիրակոսը տեսնելով, որ չարախօսները պատրաստվում են իւրեան զահալիթելու՝ նա փախչում է, իսկ հակառակորդները նորա տեղ ընտրում են Մակուայ Գրիգոր եպիսկոպոսին, իսկ Կիրակոսը երկամեայ կաթողիկոսութիւնից յետոյ վախճանվում է, և նստում է Հայրապետական աթոռը 1443 թուին Գրիգոր Ժ. Մակուեցին, որ Կիրակոսի կիսակատար թողած գործերը, նորոգութիւններ և բարեկարգութիւնները շարունակում է Աթոռակալ ընտրելով Արիստակէս անուանեալ մի վարդապետին:



ԱՂԹԱՄԱՐԱՅ ԶԱԲԱՐԻԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՉՄԻԱԾՆՈՒՄ

ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ ՊՕԼՍՈՅ.

Գրիգորի կաթողիկոսութեան ժամանակը Սամանցիք տիրում են Կ. Պօլսին և Սուլթան Մէհմէտ Ֆէթիհ Յուսաստանի և Անատոլիոյ Հայոց վերայ պատրիարգ է նշանակում Պուրսայի Յովակիմ եպիսկոպոսին 1461 թուին զանազան արտօնութիւններով:

Այս ժամանակ Արարատեան աշխարհը հեռու չէր ներքին և արտաքին աղմուկներից: Աթոռակալ Արիստակէսի և Գրիգորի մէջ արդէն գծտութիւն է ծագում, իսկ Սարգիս անունով մի վարդապետ, որ կաթողիկոսարանումն էր լինում, այս գծտութիւնից շահուելով՝ գողանում է Լուսաւորչայ Աջը և փախչում է Պարսկաստան, որ Ջահան Շահի օգնութեամբ առնէ կաթողիկոսական իշխանութիւնը:

Այս բանը իմանալով Աղթամարայ Զաքարիայ կաթողիկոսը զալիս է Դաւրէժ՝ Շահից զանազան նուէրներով յետ է առնում Լուսաւորչայ Աջը և իշխանական պատուով գալիս է Եջմիածին: Նա մերժում է Գրիգորին և Արիստակէսին, իբրև ընդհանուր կաթողիկոս աթոռակալում է իւր իշխանութեան ներքոյ ունենալով ևս Աղթամարայ կաթողիկոսութիւնը, իսկ Սարգիս վարդապետին եպիսկոպոս ձեռնադրելով կաթողիկոսական փոխանորդ է կարգում:

Գրիգորն ու Արիստակէսը Ջահան Շահի որդւոյ առաջ չարախօսութիւններ են անում և հասկացնում են, որ Զաքարիան շատ հարստութեան տէր անձն է:

Զաքարիան տեսնելով՝ որ ինքը Եջմիածնում չի կարող հանդիստ կերպիւ կաթողիկոսութիւն անել, ուստի և ծածկաբար Լուսաւորչայ Աջը առնելով՝ փախչում է Աղթամար,

ուր թէ ազգը և թէ Օտարագգի իշխանները մեծ յարգանք են ցոյց տալիս:

Զաքարիայի գնալուց յետոյ Գրիգորը վախճանվում է:

Արիստակէսը իբրև կաթողիկոս աթուռակալում է և Սարգիսը վարում է փոխանորդի պաշտօն:

Չորս տարիից յետոյ վախճանվում է և Արիստակէսը 1466 յաջորգում է Սարգիսը:

Սա աշխատում է, որ Լուսաւորչաց Աջը բերել տայ Եջմիածին, բայց չի կարողանում: Վերջապէս ծպտեալ պատկերով Վրթանէս անունով մի եպիսկոպոս գնում է Աղթամար, ուր երկար ժամանակ մնալուց յետոյ յաջողացնում է սուրբ Աջը Եջմիածին բերելու, որոյ համար և կարգվում է փակակալ

Սարգիսը 24 տարի կաթողիկոսութիւն անելուց յետոյ մեռնում է, որին յաջորդում է Արիստակէս Գ. սորան ևս յաջորդում է Տէր Թադէոս Ա. իսկ Սիսի կաթողիկոսն էր Յովհաննէս Թուլկուրանցի:

ԳԼ. ՀԵ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆՔ—1503—1541 ԵՂԻՇԷ Բ. ԶԱՔԱՐԻԱՅ Գ. ՍԱՐԳԻՍ ԺԱ. ՍՏԵՓԱՆՆՈՍ Ե. ՍԱԼՄԱՍՏԵՅԻ, ՄԻՔԱՅԵԼ ՍԵՖԱՍՏԱՅԻ, ԲԱՐՍԵՂ Բ. ԳՐԻԳՈՐ ԺԲ. ՍՏԵՓԱՆՆՈՍ Զ. ԱՌՆՉԱՅԻ, ԹԱԴԵՈՍ Բ. ԱՌԱՔԵԼ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅԻ.

Թէոդոսին յաջորդում են—Եղիշէ. Զաքարիա, Սարգիս, Գրիգոր, Ստեփաննոս և Միքայէլ, որոնք ոչ մի արժանաւոր գործ չունեն, թէ և սոցա ժամանակ Ազգը բռնակալներից մեծ նեղութեանց մէջն էր:

1569 թուին Միքայէլը վախճանվում է, որին յաջոր-

դում են Գրիգոր ԺԲ. Ստեփաննոս Զ. Թադէոս Բ. Առաքել Վաղարշապատեցի, որ ստիպմամբ կաթողիկոսանալով և ապա բռնաւորաց հարստահարութիւնը չը կարողանալով տանել կաթողիկոս է ձեռնադրում իւր փոխանորդ Դաւթին 1586 թուին և ինքը վարում է մի վանքումը մենաւորական կեանք:

Առաքելի կաթողիկոսութեան ժամանակ Սիսը շատ աղէտալի վիճակի մէջն էր իշխանասէր և փառամոլ անձինք Օտարագգի իշխանաց կաշառք տալով երեք անձինք էին կաթողիկոսացել—Ազարեան, Կ. Պօլսոյ՝ հրաժարուած Պատրիարգ, Տիրատուրը և Յովհաննէս անունով մէկը:

ԳԼ. ՀԶ.

ԳԱԻԻԹ ԵՒ ՄԵԼԻՔՕՏԹ, ՍՐԱՊԻՈՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ:

Դաւիթ կաթողիկոսը տեսնելով, որ Եջմիածինը ծանր պարտքի մէջն է և ինքը անկարող լինելով այդ պարտքերը վճարելու, ուստի իրեն աթուռակից և օգնական կ'ընտրէ Մելիքսէթ Գառնեցի եպիսկոպոսին 1593 թուին:

Այս երկու կաթողիկոսաց ժամանակը Հայոց երկիրը Շահաբասի ձեռքով և Տաճկաց՝ մեծ արիւնհեղութեան մէջն է ընկնում:

Մելիքսէթ կաթողիկոսը գնում է Պօլիս օգնութիւն գտնելու՝ բայց այնտեղ Տիրատուրի փոխանակ պատրիարգ է ընտրվում հրաժարուելով կաթողիկոսութիւնից, բայց տեղացի ժողովրդոց ձեռքով մի տարիից յետոյ զրկվում է պատրիարգութիւնից և գալիս է Եջմիածին և Դաւթի հետ միասին փախչում են և թաքչում պարտատէրներէից:

Այնու ամենայնիւ պարտքերը օրից օր աւելանում և ծանրանում են:

Այս երկու կաթողիկոսները այլ վարդապետաց հետ խորհելով՝ միաբանվում են Տիգրանակերտի Սրապիոն Եղե- սացի Եպիսկոպոսին կաթողիկոս ձեռնադրել այն պայմանաւ, որ վճարէ պարտքերը, որ ունէր շատ հարստութիւն:

Սրապիոնը ընդունելով հրաւերը՝ գնում է նախկին Ջուղայ քաղաքը, ուր և գալիս են թէ երկու կաթողի- կոսներ և թէ շատ Եպիսկոպոսներ և վարդապետներ:

Այս տեղ զանազան գժտութեանց պատճառաւ խափան- վում է խորհուրդը և ցրվում են ժողովականները, երկու կաթողիկոսներն ևս առանձնանում են Սիւնեաց Տաթևու վանքը, իսկ Սրապիոնը մնալով Ջուղայ և իւր քարոզու- թեամբ գրաւելով Ջուղայեցւոց սիրտը՝ տանում են նորան Էջմիածին և ժողով կազմելով՝ ընտրում են կաթողիկոս 1603 թուին անուանելով Գրիգոր ԺԳ:

ԳԼ. ՀԵ.

ԱՆԳՈՒԹ. ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆԿ ՇԱՀԱԲԱՍԻ ԵՒ ՏԱՃԿԱՅ  
ՀԱՅՍՏԱՆՈՒՄ:

Դաւիթն ու Մելիքսէթ Սրապիոնի կաթողիկոսանալը լսելով՝ մտածում են, որ գնան Ասպահան մի օգնութիւն գտնելու աթոռական պարտքի մասին: Դաւիթը մնում է Հայաստան, իսկ Մելիքսէթը միայնակ գնում է և Շահա- բասին ներկայանալով՝ օգնութիւն է խնդրում:

Շահաբասը խորամանկութեամբ նորանից տեղեկանում է Հայաստանի վիճակի մասին և ապա շատ զօրք տանելով Մելիքսէթի ուղեկցութեամբ մտնում է Հայաստան և առ- նում է Երևան քաղաքը, և ապա Դաւիթին և Մելիքսէթին

ստիպում, որ օտարների հասանելի պարտքը իրեն հատու- ցանեն:

Դաւիթն ու Մելիքսէթը ծանր տոկոսեօք վեր առնե- լով սակաւ պարտք են հատուցանում և այնու ազատվում են նորա սպառնալիքից:

Սրապիոնին ևս Ջուղայում մեծ նեղութեանց մէջն է ձգում, որից ստանալով բոլոր ստացուածքը դառն տան- ջանքների ևս է ենթարկում:

Սրապիոնը դառնալով Տիգրանակերտ՝ վախճանվում է երեք ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ:

1605 թուին Օսմանցիք Պարսից դէմ սկսում են պա- տերազմ, Շահաբասը հրամայում է աւերել Հայաստանը, և բոլոր բնակիչներին Դաւիթի և Մելիքսէթի և այլ շատ Ե- պիսկոպոսների և վարդապետների հետ գերի են տանում, նոյնպէս կողոպտում են Էջմիածնայ Հայրապետական Աթո- ուր, համարեա թէ 14 հազար գերդաստանից աւելի են գե- ըրի տանում Պարսկաստան, որպէս զի Օսմանցիք գան և ա- մալի տեսնեն Հայաստանը:

Գերիները մեծամեծ վնասներ կրելուց յետոյ՝ հասնում են Պարսկաստան և Ասպահանի հանդէպ շինելով մի քա- ղաք նոր Ջուղայ անուամբ բնակվում են այնտեղ:

Մելիքսէթը ճանապարհից փախչելով նստում է Երևան, իսկ Դաւիթը մնում է նոր Ջուղայ գերիների հետ միասին:

Էջմիածնայ Աթոռոյ ամայութեան ժամանակը մի քա- նի Լատին կրօնաւորները Մելիքսէթ մերժուած կաթողիկոսի հրամանով՝ մտնում են Էջմիածին հնութիւնները հետա- խուզելու և օրրոց նշխարները:

Նոքա վերջապէս մտնում են Հռիփսիմեանց տաճարը և կուսանաց նշխարները առնելով փախչում են դէպի Հռոմ, բայց Պարսիկներից բռնուելով սպանվում են և նշխար- ները Էջմիածին են դարձնում:

Նոր Ջուղայեցիք հնարք էին որոնում, որ վերագառ-

նան իւրեանց Հայրենիքը: Եւհարապար նոցա հանդարտացնելու համար Մելիքսէթի հետ խորհուրդ է անում, որ Եջմիածինը քանդէ և այնտեղի քարերը փախադրել տայ Գրիգոր Լուսաւորչի Աջի հետ նոր Զուղայ և Եջմիածնայ նման տաճար կառուցանել տայ այն տեղ, բայց իշխանները և նշանաւոր մտորդիկ խնդրում են Եւհարապարին, որ յետ կենայ այդպիսի մտադրութիւննից, այլ բաւական մնայ սեղանից, աւազանից և այլ նշանաւոր տեղերից քարեր հանել տալով:

Եւհարապար զիջանում է նոցա խնդրանացը և ապա այդ Հայրենեաց քարերին նոր Զուղայցեիք մեծ փափագանօք են դիմաւորում: Եջմիածնայ միաբանները Մելիքսէթին ամբաստանելով Դաւթի առաջ այն պատճառաւ, որ Եւհարապարին խորհուրդ էր տուել Եջմիածնայ քանդելու մասին՝ հրաւիրում են Եջմիածին, բայց Մելիքսէթը Դաւթին արգելում է, և այս պատճառաւ Դաւթի և Մելիքսէթի մէջ երկար հակառակութիւններն են լինում:

Եւհարապար այս ժամանակները կրկին գալիս է Արարատեան աշխարհը, և կամենում է սպանել Մելիքսէթին, որ Էմիրկէն Պարսիկ նախարարի շնորհիւ ազատվում է:

Մելիքսէթը 1620 թուականին Մովսէս վարդապետին եպիսկոպոս է ձեռնադրում, որ Եջմիածնում Միւռոն օրհնէ, որովհետև Դաւթը իւր պարտքերը վճարելու համար զանազան երկիրներ է շրջում նպաստ գտնելու ժողովրդից, բայց իւր նպատակին չէ հասնում:

Մելիքսէթը երկար նեղութիւններ կրելուց յետոյ իւր եղբորորդուն Սահակին կաթողիկոս օծելով փախչում է Պօլիս, ուր ընդունելութիւն չը գտնելով՝ գնում է Լեհաստանի Իլով քաղաքը, անդ Նիկօլ Թորոսովիչին ընդդէմ կամաց ժողովրդեան եպիսկոպոս է ձեռնադրում և ինքը գնում է Կամենից քաղաքը, ուր և վախճանվում է, իսկ Նիկօլի ձեռքով Լեհաստանի բոլոր Հայերը Լատինականութեանն են զոհ գնում:

ՍՍ.ՀԱ.Կ Գ. և ՄՈՎՍԵՍ Գ. ԿՍ.ԹՈՂԻԿՈՍՈՒՆՔ.

Մելիքսէթի եղբորորդի Սահակ Գ. կաթողիկոսը, որ միայն Մելիքսէթի կամքով էր ձեռնադրուած. և ոչ ժողովրդոց, այս պատճառաւ մատնվում է մեծ տառապանաց, մանաւանդ որ ժողովուրդը նորանից նախամեծար էր համարում Դաւթին:

Սահակը աշխատում էր, որ իւր հօր եղբօր թողած ծանր պարտքերը վճարէ, բայց չը կարողանալով փախչում է Վան Օսմանեան պետութեանը ապաւինելով:

1629 թուին Սահակի փախչելուց յետոյ Ազգը ընտրում է կաթողիկոս Մովսէս Գ. Փակակալին Եջմիածնայ, սորա ժամանակը Եւհարապար մեռնում է և նորան յաջորդում է Եւհարապարի որին ներկայանալով Մովսէսը առնում է կաթողիկոսութեան հրովարտակ և Եջմիածինը ազատելով տարեկան հարկից՝ դառնում է յետ:

Սահակը Օսմանեան պետութեան մէջ Մովսէսի կաթողիկոսանալն իմանալով, Սոս Յովհաննէս կաթողիկոսի եղբօր Պօղոս վարդապետին ուղարկում է Պօլիս Զաքարիայ Պատրիարքի մօտ և Մուրադ Սուլթանից հրովարտակ է հանում, որ Տարօն Սուրբ Կարապետի վանքումը անկախ Եջմիածնայ կաթողիկոսութիւնից վարէ կաթողիկոսական պաշտօն:

Մովսէս կաթողիկոսը իւր աշակերտ Փիլիպպոս վարդապետին ուղարկում է Սահակի մօտ, որ համոզէ իւր մտադրութիւնից յետ կենալու, բայց Սահակը չէ լսում:

Վերջապէս խնդիրը մեծանալով հասնում է Եպարքօսին՝ Սահակը մատնվում է տանջանաց և ստիպում է Եպարքօսը, որ ուրանայ հաւատը, բայց Մովսէսեանների խնդրանօք Սահակը ազատուելով՝ դառնում է Եջմիածին և վա-

րում է առանձնական կեանք: Իսկ Մովսէսը այնուհետև սկսում է 1631 թուին նորոգել Էջմիածնայ շինուածքը, կարգ ու կանոն է դնում միաբանաց մէջը և որոշում է ժամերգութեանց ժամերը, ազատում է Էջմիածնայ անօթները, որոնք իւր նախորդների ձեռքով գրաւ էին դրած պարտքերի համար, և ապա վախճանվում է 1633 թուին:

ԳԼ. ԷԹ.

ԿՍԹՈՂԻԿՈՍ ՓԻԼԻՊՊՈՍ ԱՂԲԱԿԵՑԻ.

Մովսէս կաթողիկոսին յաջորդում է նորա աշակերտ Փիլիպպոսը 1633 թուին, որ իւր նախորդի անկատար գործքերը սկսում է վերջացնել:

Սա գնում է Երուսաղէմ, և այն տեղ ներսէս Սոյ կաթողիկոսին և Երուսաղէմի Աստուածատուր Պատրիարքի խորհրդով ժողովք է անում՝ հաստատելով զանազան կանոններ Էջմիածնի և Սոյ կաթողիկոսաց մտերմական յարաբեւութեանց մասին և Սուրբ Յակոբեան վանքի մէջ նորոգութիւններ անելով՝ գնում է Պօլիս, ուր պատրիարքութեան համար կար շատ մեծ հակառակութիւն, որ և անդորրացնում է Եղիազարի տեղ Յովհաննէս Մուղնեցին Պատրիարք հաստատելով:

Նիկիոյ Թորոսովիչը, որ Լեհաստանի Հայ ժողովրդոց խնդրանք Փիլիպպոսի նախորդներից լուծուած էր կարգից իւր խռովարար և Լատինասէր բնաւորութեան մասին, գալիս է Փիլիպպոսի մօտ և խորամանկութեամբ ստանում է ներողութիւն նորանից և դառնալով Լեհաստան՝ ժողովրդեան դաւանափոխութեան պատճառ է լինում:

Այնուհետև Փիլիպպոսը Պօլսից գալով Էջմիածին շինում է Էջմիածնայ զանգակատունը և դեռ չ'աւարտած 22 ամեայ կաթողիկոսութիւնից մեռնում է 1655 թուին:

ԳԼ. Զ.

ՅՍԿՈՒ ԶՈՒՂԱՅԵՑԻ—1655—ԵՂԻԱԶԱՐ ԱՆԹԱՊՅԻ.

Փիլիպպոս յաջորդում է Յակոբ Զուղայեցին, որ իւր նախորդի կիսակատար գործքերը վերջացնում է:

Նա Ծառեցի Մատթէոս Սարկաւազին ուղարկում է Ամասերդամ, որ Հայերէն գրոց ձևերը կարողանայ կատարելագործել քաջ արուեստաւորաց ձեռքով, որ Ղուկաս Վանանդեցու ժամանակը առաւել կարգի է ընկնում:

Յակոբայ կաթողիկոսութեան ժամանակը Պօլսոյ Պատրիարքութիւնը մեծ անկարգութեանց է ենթարկվում, որովհետև Օսմանեան Տէրութեան հրովարտակի զօրութեամբ աշխարհականներն ևս էին վարում այս պաշտօնը:

Անթապցի Եղիազար վարդապետը, որ երբեմն Պատրիարք էր Պօլսոյ, Երուսաղէմում Պատրիարգական փոխանորդ է կարգվում 1656 թուին:

Սա Սուրբ Յակոբայ վանքի յիշատակարանների միջոցաւ գտնում է երկու թակոյկներ լի մինն ոսկով և միւսն արծաթ դրամով, որով և ընդդիմանում է Յունաց, որոնք աշխատում էին յափշտակել Սուրբ Յակոբայ վանքը:

Եղիազարը աշխատում է Օսմանեան պետութեան մէջ վարել կաթողիկոսական պաշտօն, ուստի Սոյ Խաչատուր կաթողիկոսի սերտը շահելով՝ Բերիոյ մէջ օժվում է նորա ձեռքով կաթողիկոս, և Օսմանեան Հայ ժողովրդոց օրհնութեան կոնդակներ զրելով՝ գնում է Եգիպտոս, Ասորիք և այլ տեղեր, որ հաստատութեան միջոց գտնէ:

Յակոբ կաթողիկոսը Եղիազարի արարմունքից զգուշացնելու Ազգը զանազան տեղեր կոնդակներ է ուղարկում և ապա ինքը անձամբ գնում է Պօլիս:

Եղիազարը լսելով այս՝ Ազրինապօլսոյ Եպարքոսից հանում է հրովարտակ կաթողիկոսութեան համար և դառնում

է Պուրսա, բայց անդ ևս հանգիստելով հակառակութեանց գնում է Պօլիս, ուր գտնում է շատերից ընդունելութիւն իբրև կաթողիկոս:

Յակոբը փոխանակ Պօլիս գնալու՝ գնում է Երուսաղէմ, որ Եղիազարին այն տեղի Պատրիարքի ձեռքով հրաժարեցնէ իւր գործած անկարգութիւններից, և երբ Յակոբը գալիս է Պօլիս, Եղիազարը պատրիարգական և կաթողիկոսական հրովարտակաւ 250 ուխտաւորների հետ գնում է Երուսաղէմ:

Յակոբը՝ Պօլսումը իմանալով Եղիազարի արարքը գնում է Սգրիանայօլիս և ծանր ընծաններով խափանում է Եղիազարի հաստատութեան հրովարտակը՝ իրեն համար միայն առնելով:

Եղիազարը այս իմանալով բնակվում է Ռէմլէ, իսկ Յակոբը գառնում է Էջմիածին:

Երբ Եղիազարը Պօլսոյ և Երուսաղէմի Պատրիարգութիւնից շփոթ է լսում Աստուածատուրի մահից յետոյ՝ գալիս է և գրաւում է թէ պատրիարգութեան և թէ կաթողիկոսութեան իրաւունքը Երուսաղէմում:

Այս իմանալով Յակոբը վերստին գնում է Պօլիս 1679 թուին և Եղիազարին հրաւիրում է իւր մօտ, բայց նա գատկի պատճառաւ ուշանում է, ուստի գատկից յետոյ գնում է Պօլիս, բայց արդէն այդ ժամանակը Յակոբը մեռնում է և թաղվում Բերայի Պօլսոյ Հայոց գերեզմանատանը, և այնուհետև Եղիազարը Օսմանեան պետութեան Հայոց վերայ համարձակապէս վարում է կաթողիկոսութեան պաշտօնը Երուսաղէմում նոր եկեղեցի շինելով Էջմիածին անուամբ:

Այնուհետև Էջմիածնայ միաբանութիւնը կամենալով այսպիսի բաժանման առաջն առնել՝ երկու տարիից յետոյ զկնի մահուան Յակոբայ Եղիազարին հրաւիրում են Էջմիածին գալու և կաթողիկոսական պաշտօնը վարելու:

Եղիազարը Պօլսից հաստատութեան հրովարտակ առնե-

լով՝ գալիս է Էջմիածին և սկսում է զանազան նորոգութիւններ անել:

Սորա կաթողիկոսութեան ժամանակը Պօլսումը սկսում են կրօնական վէճեր և արդէն Հայերից շատերը Լատինականութեան գիրկն են ընկնում, Եղիազարը աշխատում է այս անկարգութեանց առաջն առնել և Պօլիս առանձին մարդիկ է ուղարկում խաղաղութեան ելք գտնելու, բայց նա մեռնում է 1691 թուին ինն տարի Էջմիածնում կաթողիկոսութիւն անելով:

ԳԼ. ԶԱ.

ՆԱՀԱՊԵՏ ԵՒԵՍՍՅԻ.

Եղիազարին յաջորդեց Նահապետ Եդեսացին, որ նորա աշակերտն էր, որ իւր նախորդին պէս շինութիւննով է պարապում և աշխատում է խռովութեանց և երկպառակութեանց առաջն առնել:

Մի քանի Լատինաց կրօնաւորները գալիս են Էջմիածին, որոնց նա հիւրասիրում է չ'իմանալով նոցա գաղտնիքը, որ միայն Հայերից մարդ որսալն էր:

Նահապետը իւր կաթողիկոսութեան հինգերորդ տարին Հռովմայ Ինովկենտիոս ԺԲ. Պապին Լատին կրօնաւորների դէմ զանգատանաց թուղթ է գրում, յայտնելով, որ Հայաստանի Հայերին երկպառակում են, և խնդրում է որ նոցա զսպէ:

Այս գրագրութիւնը անգիտակցաբար Ազգին վատ կարծեաց մէջ է ձգում, իբր թէ կաթողիկոսը իւր հօտը Լատինացնելու միտք ունի, ուստի և կաթողիկոսութիւնից ձգելով՝ աքսորում են աթոռակալ կարգելով Ստեփաննոս Զուղայեցուն:

Ստեփաննոսը տասն ամսից յետոյ զրկվում է և բանտարկվում, որովհետև սա ամբաստանել էր նահապետին Պօլսոյ Եփրեմ Պատրիարքին մօտ, Ստեփաննոսը մեռնում է և նահապետը արձակ համարձակ իւր կաթողիկոսութիւնն է շարունակում, որ և Հռովմայ Պապից ստանում է իւր թղթի պատասխանը Կարնեցի Խաչատուր վարդապետի ձեռամբ մի քանի ընծաների հետ:

Այս ընծաները Պօլսոյ Հայերին ևս կասկածանքի մէջ է ձգում նահապետի մասին, և քանի որ Եփրեմ պատրիարքը կամենում է ստուգել նորա վերայ եղած կասկածները, ինքը աքսորվում է և իւր տեղ ընտրվում է Մելիքսէթը, որոյ ձեռամբ աքսորանքից յետ է կանչվում Եփրեմը:

Բայց և այնպէս ժամանակը Լատիններին կողմից Հայերը մեծ խռովութեանց մէջն են ընկնում և այսպիսի ազգավնաս փոթորկի ժամանակը 1705 թուականին մեռնում է նահապետը և ակթուր երկու տարի մնում է պարապ:

ԳԼ. ԶԲ.

1700—1867

ՎԵՆԵՏԻԿԱՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ, ԿԱԹՈՒ

ՂԻԿՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ.

Լատին կրօնաւորները արդէն Հայերից շատերին Պապականութեան զերկը տանելով՝ այն աստիճան խորթացրին, որ արգելում էին մտնելու մայրենի եկեղեցին և հաղորդակցութիւն ունենալու իւրեանց ազգակիցների հետ:

Այսպիսի վտանգաւոր ժամանակն էր, որ Միխիթար Սեբաստացին 1700 թուին իւր աշակերտները վերցրած Կարնից Պօլիս է գնում այն տեղից Մոռայի Մեթոն քաղաքն

անցնելով, որ Վենետիկայ ազնուապետութեան տիրապետութեան տակն էր՝ Հռովմայ Պապի հրամանաւ մենաստան է շինում:

Իսկ 1717 թուին Վենետիկայ Ղազարու կղզին անցնելով՝ միաբանութիւն է հաստատում, որոնք պապականութեան լծին հպատակելով՝ սկսում են Հայոց մայրենի լեզուով նախնեաց մատեանները տպագրել: Տեղ տեղ պլտորելով մատենագրութեանց միտքը, և յարմարացնելով պապականութեանը:

Այսպիսի վտանգաւոր ժամանակը Երուսաղէմը ծանր պարտքի տակն էր, իսկ Եջմիածինը զուրկ կաթողիկոսութիւնից, հազիւ երկու տարի անցնելով նահապետից յետոյ 1707 թուին ընտրվում է Ջուղայեցի Աղէքսանդրը, որ հեռուից չը կարողանալով ազգին դարման տանել և Լատինաւորութեան դիմողներին արգելք դնել, Կղէմէս ԺԱ. Պապին թուղթ է գրում, որ նեղացած Հայոց Ազգի մէջ կրօնափոխութեան որոմն սերմանելը՝ Քրիստոնէութեանը նախատինք է բերում, ուստի զսպէ Լատին կրօնաւորներին, որ Աղգի մէջ երկպառակութեանց տեղիք չը տան:

Աղէքսանդրը Պապից ոչ մի մխիթարական պատասխան չը ստանալով՝ դառն վշտերով կնքում է իւր կեանքը 1714 թուին:

ԳԼ. ԶԳ.

ՊԱՏՐԻԱՐԳՆԵՐ ՊՕԼՍՈՅ և ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՅՈՎՀԱՆՆԵՍ  
ՎԱՐԳԱՊԵՏ և ԳՐԻԳՈՐ ՎԱՐԳԱՊԵՏ ՇՂԹԱՅԱԿԻՐ  
ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ.

Աղէքսանդր կաթողիկոսի ժամանակը Կ. Պօլսոյ պատ-  
րիարք ընտրվում է Սուրբ Կարապետի վանուց Միաբան  
Յովհաննէս վարդապետը, որ և կոչվում էր Կոլոտ:

Եւ որովհետեւ, այն ժամանակ Կ. Պօլսոյ և Երուսա-  
ղէմի պատրիարքութիւնը միացած էին՝ միմեանցից բաժա-  
նում է և իւր ընկերակից Գրիգոր վարդապետին է նշանա-  
կում Երուսաղէմի պատրիարք, որ կամենալով Երուսաղէմը  
ծանր պարտքից ազատել՝ մի շղթայ է ձգում իւր պարա-  
նոցը և ութը տարի շրջում է Ազգի մէջ և սուրբ ժողո-  
վում պարտքերը վճարելու, որոյ համար և կոչուեցաւ Շըղ-  
թայակիր:

Սա նմանապէս Յունաց և Լատինաց հետ մասնակցում  
է Սուրբ Յարութեան տաճարի նորոգութեանը, նորոգում է  
ևս Սուրբ Յակոբեանց տաճարը: Նմանապէս Կ. Պօլսումը  
Յովհաննէս Պատրիարքը շինում է շատ եկեղեցիներ և նո-  
րոգում և մեռնելով թաղվում է Ղալաթիոյ եկեղեցւոյ  
գաւթումը:

Աղէքսանդր կաթողիկոսին յաջորդում է Աստուածա-  
տուր Համատացին, սա առաջին տարիներին հանգիստ կեանք  
է վարում, բայց վերջը Թահմազ-Ղուլի խանի երկիւղից  
զանազան տեղերն է թափառում:

Մի օր կաթողիկոսը Օշական գիւղումը լուսնի խաւա-  
րումն տեսնելու պատճառաւ բարձրանում է տանիքի վե-  
րայ, որ տեղից սահելով մեռնում է տասնամեայ կաթողի-  
կոսութիւնից յետոյ, որին թաղում են Հռիփսիմեանց վան-  
քումը 1725 թուին:

Սորա կաթողիկոսութեան վերջին տարիներն էր, որ  
Տրապիզոնի առաջնորդ Աբրահամը հեռանալով Հայոց եկե-  
ղեցւոյ ծոցից գնում է Լիբանան, և հաստատում է Լատի-  
նացեալ կրօնաւորաց վանքը և Պապի հրամանաւ Լատի-  
նացւոց կաթողիկոսութեան հիմն է դնում:

1868 թուին այս կաթողիկոսութիւնը Հասունի ձեռք  
միանում է Կ. Պօլսոյ Հռովմէականաց պատրիարքութեան  
հետ և բոլորովին մտնում է Պապի իշխանութեան ներքոյ,  
որից ծագում են Հասունեան և Հակասունեան կուսակցու-  
թիւնքը:

ԳԼ. ԶԳ.

ԿԱՐԱՊԵՏ ՈՒԼՆԵՑԻ, ԱՖՐԱՀԱՄ Բ. ՎԱՆԵՑԻ, ԱՖՐԱ-  
ՀԱՄ Գ. ԿՐԵՏԱՑԻ և ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ.

Աստուածատուրին յաջորդում է Գաղատիոյ արքեպիս-  
կոպոս Կարապետ Ուլնեցին, որ ընտրուեցաւ Կ. Պօլսոյմէջ  
1725 թուին:

Սա տեսնելով Պարսից և Օսմանեան պատերազմները  
սպասում է Եւգոկիայում և Անկիւրիայում խաղաղութեան  
լուրին Սրարատեան աշխարհի, բայց չը ստանալով՝ գնում  
է Էջմիածին, ուր վախճանվում է չորս ամեայ կաթողիկո-  
սութիւնից յետոյ:

Կարապետին յաջորդում է Մշոյ առաջնորդ Աբրահամ  
Վանեցին 1730 թուին, որ Էջմիածնում շինում է երկու  
խորան սուրբ Լուսաւորչի և սուրբ Յակոբ տեառն եղբօր  
անուամբ, և հինգ ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ մեռ-  
նում է:

Սորան յաջորդում է Թէքիրտաղի Աբրահամ Գ. 1734  
թուին, որին Թահմազ-Ղուլի խանը Մուղան դաշտը հրա-

ւերելով՝ օրհնել է տալիս իւր սուրբ և իւր մէջքը կապել տալիս:

Սա մեռնում է 1737 թուին, որոյ փոխանակ ոմանք կամենում են ընտրել Երուսաղէմայ Պատրիարք Գրիգորին, որ դեռ կենդանի էր և ոմանք Զմիւռնիոյ առաջնորդ Ղազար Զահկեցին:

Եջմիածնայ միաբանները Պօլիս Գրիգորին համար թուղթ են գրում և իսկոյն Յովաննէս Կոլոտի հաւանութեամբ ընտրվում է, որ դեռ կենդանի էր, իսկ ոմանք ծածուկ Ղազարին են թուղթ գրում ոսկեգիր տառերով, Գրիգորը այս իմանալով՝ հրաժարվում է որպէս զի նոր երկպառակութեանց առիթ չը տայ:

Ղազարը 1737 թուին գնում է Եջմիածին և օծվում է կաթողիկոս: Մի քանի տարիից յետոյ Շահ Մահմուտ խանի հետ գժտութիւն ունենալով՝ բանտարկվում է, բայց ազատվում է Թահմազի ձեռքով:

Ղազարը սակաւ ժամանակից յետոյ նոյն իսկ Թահմազի ձեռքով 5 ամիս բանտարկվում է մի Պարսիկ իշխանի հետ գժտութիւն ունենալով, և ազատվում է իւր եղբօր Տէր Յովսէփի խնդրանօք:

Ղազարը կալանաւորում է Պետրոս և Աղէքսանդր վարդապետներին իբրև ամբաստանողներին և իշխանների խնդրանօք ազատվում են, բայց 1746 թուին վերստին Պետրոսի վերայ զայրանալով աքսորում է Սևան կղզին:

Յետոյ ինքն է մատնվում շատերի ձեռամբ Թահմազին, և ծախելով Եջմիածնայ ստացուածքները՝ տալիս է տուգանք և ազատվում է: Եջմիածնայ միաբանները բողոքում են Յակոբ Նալեանին՝ Պօլսոյ Պատրիարգին, որ և աթոռից ձգելով՝ աքսորում են Սևան կղզին և տեղը նշանակում Պետրոսին: Ղազարը տասն ամսից յետոյ ազատուելով՝ գալիս է Եջմիածին և Պետրոսին ուղարկում է Զահուկ, ուր մի քանի տարիից յետ մեռնում է:

Ղազարը այս անցքից յետոյ տարի և կէս ապրելով՝ մեռնում է 1750 թուին 13 ամեայ կաթողիկոսութիւնից յետոյ:

ԳԼ. ԶԵ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆՔ—ՄԻՆԱՍ ԱԿՆՅԻ, ԱՂԷՔՍԱՆԴՐ Բ.

ՊՕԼՍԵՅԻ, ՍԱՀԱԿ Ե. ԿԵՂԵՅԻ. ՅԱԿՈՒԲ Ե. ՇԱՄԱԽԵՅԻ,

ՍԻՄԷՅՈՆ ԵՐԵՒԱՆՅԻ 1751 ԹՈՒԻՆ.

Ղազարին յաջորդում են Մինաս Ակնցին, Աղէքսանդր Պօլսեցին, Սահակ Ե. Կեղեցի և Յակոբ Շամխեցի, որոնք կարճատե կեանք ունենալով՝ մէկը միւսին յաջորդում է, և վերջը Շամախեցոյ մահից յետոյ Եջմիածին ժողովք առնելով՝ ընտրվում է Սիմէօն Երեւանցին 1763 թուականին:

Սա իւր ընտրութեան մասին թղթով յայտնում է Տաճկաստանի Հայոց, որոնք հաւանութիւն են ցոյց տալիս, բայց մի քանի վարդապետներ Զմիւռնիոյ առաջնորդ Աբրահամը Աստապատցի վարդապետի հետ մտածում են, որ Կ. Պօլսոյ մէջ կաթողիկոսութեան փոխանորդութիւն հաստատեն, բայց սոցա խորհուրդը խափանվում է, որովհետև պատրիարքութիւնը մի և նոյն նշանակութիւն ունի: Սիմէօն կաթողիկոսը չը նայելով Պարսից հարստահարութեանցը՝ յաջողացնում է տպարան հաստատել Եջմիածնայ մէջ և տօնացոյց է տպագրել տալիս, որ Ազգը Լատինահայոց տպագրածն օրացոյցին չը կարօտի և շինում է թղթի գործարան, և այլ եկեղեցական բարեկարգութիւններ անելով մեռնում է 17 տարի կաթողիկոսութիւն անելուց յետոյ 1780 թուին:

ԳԼ. 22.

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ 1780

Սիմէօնից յետոյ կաթողիկոս է ընտրվում Ղուկաս Կարնեցին: Սորա ժամանակ Պօլսոյ պատրիարքը Զաքարիան էր, իսկ Սսոյ Թէոդորոսը: Ղուկասի վերայ կասկածանք է տարածվում, որպէս թէ իւր աշակերտակից Թեքիրտաղցի Սարգիս վարդապետի օգնութեամբ կամենում է Լատինաց հետ միացնել Հայաստանեայց եկեղեցին, այս պատճառաւ էջմիածնայ միաբանութիւնը նորան աքսորում է, որ և Վրաց Հերակլ կայսեր միջնորդութեամբ ազատուելով՝ ծածկաբար Տփիսիս է փախչում և ապա Եւրոպայ և այնպէս կնքում է իւր կեանքը:

Ղուկասից յետոյ ընտրվում է Յովսէփ Երկայնաբազուկ Արղութեանցը, որ Ռուսաստանի նորոգ գաղթեալ Հայոց նուիրակ ու առաջնորդն էր, և մտերիմ Կատարինէ թագուհւոյն, բայց Ռուսաստանից ճանապարհ է ընկնում դէպի էջմիածին օժուելու, և Տփիսիս հասնելով՝ մեռնում է առանց կաթողիկոսական օժումն ընդունելու:

ԳԼ. 23.

ԴԱՆԻԷԼ ՊԱՅԱԶԵՏՅԻ.

Լուեցի Դաւիթ Եպիսկոպոսը Յովսէփի մահուան գուժը Պօլիս է տանում, ուր և տեղական Դանիէլ պատրիարքը Ազգի հաւանութեամբ ընտրվում է կաթողիկոս:

Դաւիթը շտապելով հասնում է էջմիածին իբրև աւետիս բերող անձն, բայց բռնի կերպիւ յափշտակում է կաթողիկոսական աթոռը:

Այս մասին Դաւթի և Դանիէլի մէջ մեծ վէճ է բացվում երկու տարի շարունակ, վերջապէս Դանիէլը մտնում է էջմիածին իւր կուսակցութեան շնորհիւ և Դաւթին վայր ձգելով իշխանութիւնից 1802-ին, 8 տարի վարում է կաթողիկոսական իշխանութիւնը:

ԳԼ. 24.

ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ 1810

Դանիէլից յետոյ ընտրվում է Եփրեմը, որոյ ժամանակ Լատինահայութիւնը Տաճկաստանի մէջ և Պարսկաստանի մի քանի քաղաքներումը սաստիկ տարածուել էր: Պօլսոյ Պօղոս պատրիարքը կաթողիկոսի հաւանութեամբ խորհուրդ է կազմում Յունաց հետ և գժտութեանը վերջ տալու՝ ճաշատեղի խոտորումը բառնում է մէջ տեղից: Պօղոսը աշխատում է Լատին Հայերը կրկին վերադարձնել իւրեանց մայրենի եկեղեցւոյ դիրկը, մանաւանդ որ Օսմանեան տէրութիւնը հրամայել էր բոլոր Հայերին իւր պատասխանատուութեան ներքոյ վերցնել:

Պօղոսը տեսնելով, որ Լատինացեալները դեռ առանձին պատրիարք չ'ունին՝ յօժարում է և իսկոյն երկու կողմից նշանաւոր անձինքներ հրաւիրելով քանի մի ժողովք է անում:

Վերջին ժողովքը լինում է Մայր եկեղեցւոյ մէջ, ուր շատ հոգեւորականներ և աշխարհականներ գումարուած էին, այս ժողովքի մէջ Պօղոս պատրիարքը կարգում է գիտնականաց ստորագրուած թուղթը, որոյ մէջ տեղ տեղ յօդուածների վերաբերութեամբ փոփոխութիւններ անելով՝ ժողովականաց ստորագրել է տալիս, իսկ ինքը նոցա հաւանութեամբ տպագրում է մի գրքոյկ հրաւեր սիրոյ ասուած:

Պօղոս պատրիարքը հանդիսաւոր հացկերոյթներ է ա-  
նում մի քանի անգամ, և ապա ընդդէմ կանոնաց Հայաս-  
տանեայց եկեղեցւոյ վերջին օծման համար իւզ է օրհնում  
և ուղարկում է իւր եկեղեցիները հիւանդներին օծելու:

Բայց այս վերաբերութեամբ կաթողիկոսից և զանազան  
գաւառներից յանդիմանական թղթեր է ստանում, ուստի  
և կրկին մէջ տեղ է գալիս ցրտութիւն Հայ Լատինների և  
մեր մէջ, իսկ Պօղոսը զըջում է ապա իւր յանցանքը, որ  
առանց Ազգի հաւանութեան մի այդպիսի գործին ձեռնա-  
մուխ է եղած:

ԳԼ. ԶԲ.

ԿԱՐԱՊԵՏ ՊԱՏՐԻԱՐԿԸ.

Պօղոսին յաջորդում է Կարապետը, որոյ ժամանակը  
Հռովմէականները Բերայում կամենում են Պատրիարգական  
փոխանորդ ունենալ, որպէս զի այն փոխանորդի ձեռքով  
Արքունի հրամանները իսկոյն Լատին Հայոց հաղորդուի:

Հայոց առաջարկութեամբ ընտրվում է Նուրիճեան Ան-  
տօն վարդապետը, և Հռովմէականների կողմից փոխանորդ  
է կարգվում Գաղատացի Պօղոս Մարուշ վարդապետը և այս  
տեղից մտադիր են լինում առանձին պատրիարգ ունենալու:

Այս միջոցներին Ռսները տիրում են Արարատեան գա-  
ւառին, Լատին Հայերը այս հանգամանքներից կամենալով  
շահուիլ՝ զրպարտում են Օսմանեան տէրութեան առաջ բուն  
Հայերին, որպէս զի միանալով Ռուսական Հայերի հետ՝  
մտադիր են ապստամբելու, ուստի խնդրում են, որ իրենց  
հրաման լինի առանձին պատրիարգ ունենալու, որ մի գու-  
ցէ նոցա պատճառաւ չ'արատաւորուին Լատին Հայերը: Օս-  
մանեան տէրութիւնը Պօղոսին և Կարապետին հրաւիրում

է, որ նոքա յանձն առնեն իւրեանց երաշխաւորութեամբ  
կառավարելու թէ Լատին և թէ բուն Հայերը:

Նոքա հերքում են բոլորովին նոցա տմարդի զրպար-  
տանքը և նոյնպէս միայն երաշխաւոր են հանդիսանում  
բուն Հայերու մասին: Սուլթան Մահմուդն էլ տեսնելով,  
որ Յոյները ապստամբուել են, ուստի հրամայում է, որ  
Գաղղիոյ, Անգղիոյ և Ռուսաց զեսպանները դուրս գնան  
իւր տէրութիւնից, և Հռովմէադաւան Հայերին ևս աքսո-  
րեն, որովհետեւ չը կամեցան բուն Հայոց հետ միանալ: Աք-  
սորից ազատ էին, որոնք կրկին ճանաչեցին իւրեանց սուրբ  
եկեղեցւոյ գիրկը:

1829 թուին Գաղղիոյ և Անգղիոյ զեսպանները կրկին  
գալիս են Պօլիս, որոց միջնորդութեամբ Հռովմէադաւան  
Հայերը աքսորանքից յետ են գալիս:

1830 թուականին Նուրիճեան Անտօն Պիոս Պապից  
Արքեպիսկոպոսանալով Հռովմից Պօլիս է գալիս իբրև Մետ-  
րոպոլիտ, բայց Օսմանեան տէրութիւնը չէ ընդունում իբ-  
րև Աւստրիացւոց հպատակին, ուստի Արքունի հրովարտա-  
կաւ պատրիարգ է նշանակվում Մանուէլեան Յակոբ վարդա-  
պետը, և այսպէս մեր եղբայրների մի մասը առանձին կա-  
ռավարութիւն է կազմում Հռովմայ Պապի շնորհիւ:

ԳԼ. ԶԹ.

ՆԵՐՍԷՍ Ե. Ի ՏՓԽԻՍ.

Եփրեմի կաթողիկոսութեան ժամանակը՝ Ներսէս Ե.  
աշտարակեցին Տփիսսումը Վրաստանի և Իմէրէթի առաջ-  
նորդութեան պաշտօնն էր վարում:

Նա տեսնելով, որ երևում են պատերազմի նշաններ  
Ռուսաց և Պարսից մէջ, Եփրեմ կաթողիկոսին հրաւիրում  
է, որ գալ նստի Հաղպատու վանքը: Իսկ Ներսէս քարոզիչ-

ներ է ուղարկում զանազան տեղեր, որ Հայերը օգնեն Ռուսաց զօրացը ամենայն կերպիւ՝ թէ սննդեամբ և թէ այլ պատերազմի վերաբերեալ կարևոր պիտոյքներով:

Հայերը Պարսից դառն և անողորմ լծի տակից ազատուելու մասին՝ չը խնայեցին ոչինչ բան, նա և ո՛չ իւրեանց անձինքը 1826 թուականին:

Ներսէսը իւր ժողովուրդը Պարսից լծի տակից ազատուած տեսնելով՝ Տփիսիսումը շինում է մի մեծ Դպրոց, որ այժմ իբրև մի մեծ արմատաւոր ծառ, Ռուսաստանի զանազան կողմեր տարածեց Հայուլթեան կենդանութիւն տուող ընտիր ընտիր ողկոյզներ, որոց պաղոց համեղութիւնը՝ առաւել ու առաւել գնալով սաստկանում է: Այս պատերազմից յետո՛յ՝ Ներսէսը թողնում է իւր նորոգ կառուցեալ Դպրոցը Տփիսիսում և կարգվում է Բեսարաբիոյ Առաջնորդ:

ԳԼ. Ղ.

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԵԵՅԻ**

1831 թուականին վախճանում է Եփրեմ կաթողիկոսը և նորան յաջորդում է Յովհաննէս Կարբեցին: 1836 թուականին, և Ռուսաց կառաւարութիւնից ստանում է մի կանոնադրութիւն:

1842 թուականին մեռնում է Յովհաննէսը և Ազգի հաւանութեամբ ընարվում է Ներսէս Ե. Աշտարակեցին, որ Բեսարաբիայից գնալով Պետերբուրգ կայսեր հետ տեսնուելու, և ապա այն տեղից դառնում է Եջմիածին օժուելու, և սկսում է իւր կառուցած Տփիսիոյ վարժարանի վերայ առանձին խնամք ցոյց տալ և ուշագրութիւն դարձնել:

1857 թուականին փետրվարի 14-ին մեռնում է Թիֆլիզոյ Առաջնորդարանումը, որոյ մարմինը տանում են թաղում Եջմիածին:

ԳԼ. ՂԱ.

**ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

1858 թուին:

Ներսէսին յաջորդում է Մատթէոսը, որ երբեմն Պատրիարք էր Կ. Պօլսոյ, որ և զալով Եջմիածին առնում է կաթողիկոսական օժումն:

Սա առանձին ուշագրութիւն է դարձուցանում Ներսիսեան Տփիսիոյ վարժարանին, նա շնորհում է առանձին կանոնադրութիւն և հաստատում է հոգաբարձութիւնը, որ մինչև ցայսօր տևում է անխափան:

Սա ոչ միայն Տփիսիոյ համար է միայն հաստատում այս վերոյշեալ կարգն ու կանոն Դպրոցի վերաբերութեամբ, այլ և զանազան տեղեր և կողմեր բանալ տալով դպրոցներ՝ հաստատում է հոգաբարձութիւններ:

Բայց սա ևս Օգոստոս ամսոյն մէջ 1865 թուականին մեռնում է:

ԳԼ. ՂԲ.

ԳԵՈՐԳ Գ. 1867 ԹՈՒԻՆ.

Մատթէոսին յաջորդում է Գէորգ Գ. Պօլսեցին 1867 թուին, որ դալով ՚ի սուրբ Էջմիածին առնում է կաթողիկոսական սուրբ օժումն:

Սա ևս ուշադրութիւն է դարձուցանում վարժարանների վերայ և Էջմիածնումը կառուցանում է մի հոյակապ ձեմարան: 16 տարի շարունակելով իւր կաթողիկոսական իշխանութիւնը 1883 թուին դեկտեմբերի 12-ին կնքում է իւր կեանքը և թաղվում է սուրբ Էջմիածնայ Տաճարի զանգակատան հիւսիսային կողմում:



Վ Ե Ր Զ.

3469

45

<< Ազգային գրադարան  
  
NL0030480

200

